

493

Բացարձակ

Ժ. Ա. ՏԱՐԻ

ԹԻԻ 11

ԿԱՐԱՆՆԵՐԵՐ 1973

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *	Կոչ՝ կոչի մը առիթով .
ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ	Օրագիր
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Մեմիք
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հորիզոնէ հորիզոն
Յ. ՆԱԳՈՒՂԵԱՆ	Ամէն շուն նման է մի ոստիկանի
»	»
»	»
»	»
Բ. ԿՌԱՆԵԱՆ	Տպաւորութիւններ
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Ժամ ժընէի «Ազախիւնները»
ԺԱՆ ԺԸՆԷ	Ազախիւնները
* * *	Խաչատուրեանի պարագան
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Երկու խօսք մտերիկեան կարմ-կարմ պատմութիւն մասին
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Լիբանանեան անմիջական բանաստեղծութիւնը
Ն. ԶԱՐԵՆԻՏԵԱՆ	Յակոբ Կարապետի «Կարթագենի դուստրը»
* * *	«Տխուր բաներ ու քաջիծ»...
* * *	Եթէ քոյլ տայ...

Բազին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Հ.Ռ. ՅԱՐԻ, ԹԻՒՆ 11

Ն.ՕՑԵՄԲԵՐ 1978

ՊԵՏՐՈՒՄ

Կ Ո Չ՝

ԿՈՉԻ ՄԸ ԱՌԻԹՈՎ


Ճիշդ եօթը տարի առաջ, 12 Հոկտեմբեր 1966ին, անողորմ հիանդությիւնը տարաւ եղուարդ Պոյաճեանը, որ կը գտնուէր ստեղծագործ իր կարեւորութիւններուն լիութեանը մէջ:

Ափիւրհի գրականութեան ամէնէն ինքնատիպ բանաստեղծներէն էր եղ. Պոյաճեան եւ մէկը ջրային եռուն դրութիւններ յայտնաբերած արձակագիրներէն, անհատական բարդ տաղանակներու տէր եւ հաւաքական ապրումներու հանդէպ դժգոյն իստնուածք մը, որ իր գործունէութեան երեսուն տարիներուն տասը հատորի հասնող վաստակ մը ձգեց իր ետին, հինգը ողբուցը լոյս ընծայուած, միւսները՝ թերթերու մէջ ցրի ու ձեռագիր վիճակի մէջ:

«Բազին»ի այս համարին մէջ, ընթերցողը պիտի կարդայ Պոյաճեանի գիւղին, Այնճարի «Մուսա Լեռ Գրական Խրմբակ»ի նախաձեռնութեամբ կազմուած յանձնախումբին կողմ, որ կը ծրագրէ տարաբախտ բանաստեղծին հողաթումբին վրայ կառուցել դամբարան-յուշարձան մը: Իր պաշտօնակիցներուն, աշակերտներուն եւ աստուց պառակներուն մասնակցութեամբ գործող յանձնախումբին ձեռքբերած վստահաբար իրենց շանքերը պիտի միացնեն նաեւ ուրիշներ, ի սփիւռս ցրուած Պոյաճեանի աշակերտներն ու գրականութեան բարեկամները, փութով եւ արժանաւորութեամբ գլուխի հանելու համար նուիրական այս ձեռնարկը:

Ընթերցողին ուշադրութիւնը դամբարան-յուշարձան կառուցելու կոչին վրայ հրափրող այս տողերուն հետ, հետագայ էջերուն յուզումով կու տանք մահէն երկու-երեք շաբաթ առաջ ու մահուան անկողնին մէջ գրի առնուած ողբացեալ գրագետին անտիպ օրագրութենէն քանի մը էջեր, ուր, հակառակ տիրող մտայլ մթնոլորտին, անոր մտքի գործունէութիւնն ու հոգեկան կորովը կը մատնեն ապշեցուցիչ պայծառութիւն մը:

«Բազին»ի ժԳ. տարուան թիւերուն մէջ երբ Պոյաճեանէն պիտի տանք անտիպ ուրիշ գրութիւններ էա:



digitised by A.R.A.R.

ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ

Օ Ր Ա Վ Ի Ր

•

Որեւէ օրագիր շատ մեծ բան մըն է եւ շատ փոքր բան մը: Եւ այսպէս խօսք մը ըսելը կամ գրելը, որեւէ հասարակ խօսք ըսել կամ գրել է: Մեր բոլոր խօսքերը մեծ չեն ըլլար, պէտք չունին նոյնիսկ միջակ ըլլալու: Պատիկն ու հասարակը պէտք է անկի տեղ գրաւեն կեանքին մէջ: Գրաւած են արդէն: Չպրաղինք անոնցմով:

•

Այնքաբ, 1, 2, 3, 4, 5, 6 Սեպտ. 1966

Այս բոլոր օրերու ընթացքին, որոնք Սեպտեմբերը կը սկսին ու կը հասնին մինչեւ վեց՝ հին մի-գարգելութեան մը վերադարձի մտաւախութիւն: Մտաւախութիւնը կը սկսի արդէն իր բացասական հետեւանքները ունենալ վրաս:

Գացի մինչեւ Չահլէ, հիւանդանոց: Ինչ դժ-ւար տեղ է դիւղ մը, կարգ մը պարագաներու, նոյնիսկ երբ ՉՕբդ գարու գիւղ մըն է ան: Ինքնա-շարժ, պատկերասփիւռ, սթէրիօ փիլք-ափ եւ դեռ շատ մը արդիական բաներով օժտուած մեր գիւղը ո՛չ բժիշկ ունի, ոչ ղեղարան: Վայ որ տեղ մը ցա-ւի քեզի. պիտի մազես Շթօրա, Չահլէ, Պէյրուս: Բարեբախտաբար հիւանդներուն համար՝ Վիրանա-նը փոքրիկ երկիր է, եւ իր մայրաքաղաքը մէկ, ստաւելարար մէկուկէս ինքնաշարժով հասանելի, երկրին որեւէ մէկ անկիւնէն: Իսկ ինքնաշարժ շատ կայ: Ատենին մուսա-տաղցիները էչ չունէին այն-

քան, որքան ինքնաշարժ ունին այսօր: Ինչեւէ՛ մը ատվախութիւնս այս քանի մը օրը մնաց ու մեծ-ցաւ: Երկէ՛, Հիւանդանոցէն վերադարձս նախ եւ ապա իրիկունը բարեկամ Տոքթ. Կիւրեղեանին — Վարդգէս — այցելութիւնն ու բացատրութիւնները վախս իր քառորդին իջեցուցին: Առողջական տեսակէտով քանի մը քալլ յառաջդիմութիւն դէպի լաւը եթէ չկատարուի ամէն ուղղութեամբ, կը նըշանակէ, թէ ինծի ներշնչուած լաւատեսութիւնը սին բան մըն է եւ առաւելարար միւլթարութեան միջերանոցէն բերուած անհամ չոր խոտ, յարդ:

Ինչ դժուարութիւններ մարմնիս վրայ, ինչ տարօրինակութիւններ: Ֆիզիքական սա խեղճ դոյութիւնս, ամէն օր կ'ենթարկուի հազար ելեւէջի, հազար ալեկոծութեան: Ուրախ է, տխուր է, ուրախ է, տխուր է: Կէս-ուրախ է, քառորդ-ուրախ, մէկ հարիւրորդ-ուրախ: Եւ նորէն այս աստիճանաշափերով տխուր է ան, այս աստիճանաշափերով բարկացած, ծանծրացած, շուարած, զգուած: Տարապալմանօրէն զօրացած է մէջը մարմնական ու հոգեկան մակարդակներու վրայ զննութիւնը ցաւին, ջիղերու կեանքին: Ա՛լ այս վիճակներէն ազատելու համար ուրիշ ոչինչ, աղօթքէն զատ. ոչինչ, բացարձակապէս ոչինչ կը փրկէ: Աղօթքն է, որ պիտի ազատէ զիս դարձեալ:

✱

— «Պիտի ազատես զիս Հիւանդութեանս բոլոր վիճակներէն: Պիտի առնես վրայէս ցաւը, Հիւանդութիւնը: Պիտի արգիլես ջիղերուս գէշ միջամբ-տութիւններ ընդունիլ: Դուն պիտի դաս մէջս եւ ըլլաս քաջութիւն, համբերութիւն: Դուն պիտի կըրես այլեւս իմ ցաւս եւ ոչ թէ ես պիտի կրեմ: Դուն ես կողս՝ — մի ցաւիր: Դուն ես շունչս՝ — լայն-ցիր, շնչէ: Դուն ես կուրծքս — պիտի պահես զօվութիւնս, հանդիստս եւ ապահովութիւնս:

— Մի չարչարեր, վայել է Աստուծոյ չարչարել, երբ Ինք ամէնէն մեծն է, եւ չարչարուողը ամէնէն փոքր:

— Մի ձգեր որ չարչարեն: Դուն, միայն Դուն կրնաս չձգել՝ որ Հիւանդութիւններ եւ թաքուն ուժեր զան վրաս եւ իրենց ուզած ձեւով վարուին հետս:

— Մէկ «ՈՉ» Քու կողմէդ իմ Հիւանդութիւններուս, եւ ես իսկոյն բուժուած եմ:

16 Սեպտ. 1966 — Այնֆար

Շատ մեծ բան մըն է օրագիրը, եթէ շատ լաւ գրուի, կարենայ ծայր աստիճան անկեղծանալ, մինչեւ իր յետին սահմանները: Եթէ մտածէ, եւ մանաւանդ չընդունի յաւակնութիւններ: Ոչ մէկ մեծամտութիւն:

Ծրագիրը կեանքն է: Ուրեմն ամէն բանէ վեր բան մը, եթէ ունենայ ի հարկէ իր աչքը, իր ականջը, իր ջղային զարգացած գրութիւնը: Մէկ խօսքով՝ իր խորհրդաւոր մարտոցութիւնը: Որովհետեւ այդ բոլորը խորհրդաւոր մարտոցութեան մը գործիքներն են, գործարանները:

Հանճարայինէն դուրս, թերեւ, բայց երբեմն անոր մակարդակին հասնելու ընդունակութենէն դուրս չէ օրագիր մը: Օրուան կենսագրութիւնն է, իր տեղով, ժամանակով, կեանքի խտութեամբ: Սկզբունքով պէտք է ապրած օրգ վերակերտէ, ալ պոմի մը էջը դառնայ: Պէտք է ստանձնէ զայն եւ տայ անոր ոչ թէ արձանային բացառիկ գեղեցկութիւն եւ պարային ներքին խորունկ երաժշտականութիւն մը, այլ զարնանային արեւածագի մը պարզ գեղեցկութիւնը:

Օրագիրը պէտք է առտուրնէ մինչեւ իրիկուն կեանքին խոփով պեղուած հող մը՝ վերադարձող կեանքով եւ իմացականութեամբ մշակէ եւ իմաստ ու բանաստեղծութիւն ցանէ հոն, ակօս առ ակօս, ածու առ ածու: Անհրաժեշտ է, որ ան կէտեր գտնէ իր ապրած օրուան մէջ, ուրիկ կարենայ դիտել այս անգամ հանուր կեանքը՝ բաժնուած հանուրին: Որեւէ ապրուած օր մարդուն կողմէ, ունի այդ դիտակէտերը:

Այս ձեւով, օրուան մասին մտածելը, զայն հիմնական շինանիւթ մը ընդունիլը՝ մեր այդ օրը կրկնապատկել է: Մտածելը այդ մասին, երկու անգամ ապրիլ է, նոյնիսկ երեք եւ աւելի, բայց ի հարկէ տարբեր ժամացոյցի մը սլաքներով հաշւուած: Մեր մետաղէ սլաքները չոր են եւ կը հպատակին պաղ մեքենականութեան մը: Բայց մեր բուն ճակատագիրը, անվերածելի էութիւնը այսինքն, փոքր մասով մը միայն կապուած է տիեզերքի կեղեւին հետ կապուած մեքենականութեան:

Այնճար, 20 Սեպտ. 1966

Տրամադրութիւններ կան, որոնք հոգեկան վառելանիւթ շատ կը սպառեն, ինչպէս ամերիկեան մեծափարթամ քառիլաֆները: Կան ալ՝ որոնց սպառած վառելանիւթը շատ քիչ բան մըն է, այս անգամ եւրոպական փոքր օթոններու պէս:

Այս խնդիրը կարելոր է եւ բարձր: Մ'անաւանդ ինծի համար, որ կը պատկանիմ ահագին վառելանիւթ սպառողներու կարգին, մեծափարթամութեան առանց որեւէ նշանի: Կարծեմ բոլոր արուեստագէտներն ու ծանր հիւանդները, գեղեցկութեան ու տգեղութեան առջեւ հաւասարապէս տկարացողները՝ պէտք ունին բարձր ջերմաստիճանի: Առեւտրական մը պէտք չունի հոգիի, հետեւաբար ջերմութեան: Անոր հոգին եւ բովանդակ ջերմութիւնը իրմէ դուրս են. կղպուած են դրամատան մը, կամ դրամատուներու գլորոցներուն մէջ: Տոմարներ եւ թուանշաններ՝ թուղթ չեն, այլ կարգ մը մարդոց հոսթիւն են, հոգին:

Գէշ մարդ չեն՝ ոչ անոնք, որոնց հոգին տիեզերական կապոյտներու մէջ է առաւորնէ մինչեւ իրիկուն, եւ ոչ ալ անոնք, որոնց հոգիին նաւահանգիստը տեղ մը այս դրամատունն է, տեղ մը ուրիշ դրամատուն մը: Այս մարդոց հոգիները իրենց այս միլիոնէն դէպի այն միլիոն կը ճամբորդեն: Գէշ մարդ չկայ: Աստուած եւ իր Տիեզերքը պիտի չուզին գէշ մարդ ստեղծել եւ չստեղծեցին: Ստեղծեցին տեսակներ, իրար հանողներ եւ բնաւ չհանողներ, զիրար հալողներ եւ սպասողներ: Այսինքն՝ խառնուածքներ, ճաշակներ, տրամադրութիւններ: Ի հարկէ, այս բոլոր զանազանութիւնները եթէ գումարեն՝ արդիւնքը տիեզերական հիւանդութիւն մը կ'ըլլայ մարդկային կեանքին համար ու նաեւ տիեզերական գեղեցկութիւն մը: Իսկ որեւէ գեղեցկութիւն առողջութիւն է: Տամ քանի մը օրինակ եւ ամբողջը այսպէս է: Ստեղծել՝ կը նշանակէ հիւանդանալ, մահացու վէրք մը կրել, դալարութիւն պայծառ եւ անպայծառ աշխարհներու մէջ: Անհունօրէն մայրանալ, անհունօրէն յոգնիլ:

Յաղթել եւ մեծնալ: Հիւանդութիւն է նորէն, պարտութիւն խորքին մէջ եւ պղտրկնալ: Նոյնը նաեւ սէրը, նախանձը, ատելութիւնը: Նոյնը նաեւ հանձար կուտակելը կամ դրամը: Գրիգոր Նարեկացին եւ Գալուստ Կիւլպէնկեանը հաւասարապէս հիւանդ եղած են, հիւանդ սպրած, հիւանդ գործած: Վեր-

ջինը կրնար աշխարհներ գնել: Առաջինը գնած էր երկինքը:

Բայց ո՞վ հիւանդ չէ արդէն, բայց ո՞վ գեղեցիկ չէ արդէն:

Կեանքը գոյութեան մեծագոյն խորհուրդներէն է, ինչպէս Մահը, — ըսուած է շատ: Բայց մեծ ճշմարտութիւններուն մեծագոյն արժէքը իրենց կարենալ կրկնուելուն մէջ է, ամէն դարու մէջ եւ ամէն յեզուով: Թող ուրեմն օր մըն ալ ե՛ս ըսած ըլլամ այդ ճշմարտութիւնը: Աղօթելը եթէ ոչ պարտաւորիչ՝ արտօնուած է դո՛նէ ամէնուն: ՀԱՅՐ ՄԵՂՐ նոյն բառերը ունի բոլոր զայն արտասանողներուն համար, բայց ըստ իս, ան իւրաքանչիւրիս ամէնէն ինքնատիպ բանաստեղծութիւնն է, ամէնէն աւելի մեր Հեղինակութիւնը եղողը: Կրնանք ամէն անգամ ազատօրէն ստորագրել զայն:

Եւ հիմա, այսքան հեռանալէ ետք նիւթէս, կ'ըսեմ նորէն. — տրամագրութիւններ կան, որոնք հոգեկան վառելանիւթ շատ կը գործածեն: Անոնց համար հստակօրէն գոյութիւն չունի. գոյութիւն ունի յեղաշրջում, տակնուվրայութիւն: Կա՞մ շատ սեւ են կամ շատ ճերմակ: Եւ իրենց իմածը կա՞մ քացախ է կամ մեղրերուն ամէնէն շէկը, ամէնէն բիւրեղափայլը, ընտիրը:

Ծս, երեւի, առատ վառելանիւթերուն մարդն եմ...

Ջրիւրս միշտ ծանր են, միշտ լեցուն:

Այնպէս, 22 Սեպտ. 1966

Չանազան ընդհանուր խորագիրներով մանր-մուշիկ եւ յաճախ ոչ բնական բովանդակութեամբ իրենք իրենց ճղճիմ հասակը կերտած հիւանդ օրերու այս էջերը չեմ գիտեր իրականին մէջ ինչ կ'ըսեն: Արդէն կը ստակամ: Գրած բառերս, ըսածներս ալ՝ տակաւին դեղ կը հոտին, բժիշկ եւ հիւանդանոց: Այդ բառերուն մէջ կայ հիւանդանոցի տըրտում տարածութիւն, մըքս եւ անվերջանալի նըրբանցք, գիշերային աշխատատեղերու եւ հսկիչներու սիրայօժար թուող վարմունք: Այս բառերը սրուակի բառեր են, — ալքոլ, սերոմ, ջերմաչափ, եւայլն:

Ատենօք, պզտիկ գործողութիւն մը անցուցած էի, ձրի, ցաւ չվճարելով դրեթէ: Ատեն ունեցած էի սիրածներս սիրելու, նըրս հաւնելու, նըրս

չհանելու, մածուն ուտելու, տօլմա մերժելու, եւ՝ նորէն եւայլն:

Երկրորդ գործողութիւնս բաղաձայն էր սկիզբը, յետոյ դարձաւ գրեթէ բոլորովին անձայն, գրեթէ համր, թէեւ մահճակալս բաւական խեղդըւած ցաւի ձայներ լսեց: Յաւին եւ անխորժութեան կեղբոնին կեղբոնը պնենն էր: Կը զարմանայի՛ Տօքթ. Կիւրեղեանին պէս մտերիմ բժիշկ մը ուրիշ բան չգտու տալու էր բարեկամին, քան զարհուրելի պնեն մը եւ նշտրակի հարուած: Առողջութիւնը, եթէ իսկապէս ճամբան է եւ պիտի գայ, այսօր քա՞ն լեզի արահետներէ պիտի անցնի. արիւն, ջիղ, ոսկոր, մկան այսքա՞ն չարչարելով: Այդքա՞ն տըզէտ պիտի ըլլայ, որ չգիտնայ թէ բժիշկը եւ այդքան բարեկամներ, ընկերներ, ազգականներ՝ կ'ուզեն որ չչարչարուիմ: Բայց պնենին լեզին, բայց ցաւը, բայց յոգնութիւնը, վախը, բարոյայթուսը...

Վեց ամիս ետք երրորդ գործողութիւն մըն ալ պէտք եղաւ ինծի՛ լեարդ: Մարդկային բնախօսութեան մարզին մէջ անհաւասարելի տղէտ մը եղած եմ տղէտներու մէջ, աւա՛ղ, մինչեւ յիսուն տարեկանս: Կէս դար տգիտութիւն: Որեւէ մարզի մէջ պատկառելի վաստակ մըն է ասիկա, յորեւեանի արժանի: Երբ առողջանամ ընկերներս պիտի տօնեն լեարդի ազիտութեանս «փառահեղ յիսնամեակը»: Եւ կարծեմ հետու չէ այդ օրը:

Ինչեւէ:

Երրորդ գործողութիւնս եղաւ ձայնաւոր եւ շատախօս. քիչ կը մնայ որ երգէ, բեմ ունենալով մահճակալը, վերմակը, որ կէս ժամէն բաւական հեռացած է մահճակալէն. սաւանները, որոնք քառորդ ժամ շանցած, կծիկ մըն են. բարձերը, որոնք չկան այլևս, թռած են:

Առանց որակը ճշդելու այս փոքրիկ դրութիւններուս, որոնք չեմ կարծեր կապ ունենան գեղարւեստական որակ ըստածին հետ, յայտարարեմ, որ կը պատկանին հիւանդութեանս գրեթէ անպատասխանատու շրջանին. այսինքն՝ այն օրերուն, երբ բժիշկի մը կամ բժիշկներու կողմէ հրահանգներու եւ — «Ըսածս չմոռնաս հա» — տեղատարափ մը սկսած էր շուրջս, հիւանդատեւի փութացողներու աներեւակայելի յարձակողական մը: Եկող մը, եկողներ, ուրիշ եկողներ, դարձեալ եկողներ, վերջապէս եկողներ, ինչ դիտնամ: Օրեր էին այն ա-

տեն, երբ օրական ջրհեղեղ մը ջուր պէտք էր խըմէի, ուրիշ ջրհեղեղ մը այսինչ պտուղի հիւթէն, ուրիշ մը, ուրիշ մը՝ խնձորի ջուր, եւ համրէ ու գնա՛: Կը զգուէիր, բայց պէտք չէր. կը յոգնէիր, բայց պէտք չէր. կը ջղայնանայիր, բայց պէտք չէր: Պիտի նստէիր եւ ուտէիր յսիրած կերակուրներդ: Ուզած ատենդ արդիւուած էր քնանալ. իսկ երբ քունդ փախէր՝ ստիպողական էր քնանալը, երազ տեսնելը, կեանքիդ հին դուռներուն առջեւ կենալը:

Իմ այս շրջանս, ինչպէս կարծեմ ամէն հիւանդի շրջան, իրեն յատուկ ժամացոյցը ունի: Թիքթաք, — փափուկ տեղի մը վրայ ասեղ, — որքա՛ն ալ կը սիրեմ այդ ասեղ ըսուածը: Թիքթաք՝ — կապոյտ դեղահատ: Թիքթաք՝ — դեղին դեղահատ: Թիքթաք՝ — ճերմակ մը: Սլաքը ուրիշ տեղ մըն է՝ — դորշ դեղահատ: Սլաքը կը յառաջանայ՝ — սեւ դեղահատ, կազի համար: Սլաքը կ'երթայ՝ — ասեղ մը, որ հրաշք է, նոր է, բուժելու բոյոր յատկութիւններով օժտուած է գրեթէ, սուղ է եւ մէկ դեղարանի մէջ գտնուած է իմ լաւ բախտէս, սուղ է, բայց ոչինչ:

Եւ այսպէս, ասեղ, դեղահատ, ասեղ, դեղահատ, ասեղ, դեղահատ:

Իմ երրորդ վերաբուժական դործողութիւնս ճիշդ եւ ճիշդ հետեւեալ քոմէտին է. — ասեղ, դեղահատ. կը գումարեմ, — օրական քանի մը դաւաթ զուտ ջուր, քանի մը դաւաթ լիմոնատ, քանի մը նարինջի ջուր, խնձորի ջուր, լուլիկի ջուր, թան, թէյ, կաթ: Կը գումարեմ. — ուտել քաղցրեղէն, կարագ, նման բաներ եւ վիթամին: Կը գումարեմ. — նստակեաց քուն, մահճակալին վրայ երկնցած անքնութիւն, շունչի անբաւարարութիւն, կարճահասակ պտոյտ եւ բարձրահասակ յոգնութիւն, ճանճրոյթ: Կը գումարեմ տակաւին. — բարեկամներու ինքնաշարժով իրիկնային դեղեցիկ շրջագայութիւն: Ընդհանուր գումար՝ — փոսացած, պրդատիկցած գէմք, ա՛յնքան պզտիկցած, որ օր մը վախցայ, թէ պիտի չկրնամ գտնել այլեւս: Մղտտի մը վրայ, որ յամառօրէն դեռ վիզ կը կոչուի, երեւուկայեցէք անճին եւ նշարակին ճամբորդներ... դեղնութիւնը, փոսեր եւ կնճիռներ:

Առայժմ այսքան:

ԵՂՈՒԱՐԴ ՊՅԱՆՆԵՆ

Մ Ե Ն Հ Ի Ր

Քարը գոց մութին միածաւալ կը տեւէ
ճառագայթում սեւ
ու կը դառնայ հովը թնճուկ սահմաններում ծայրաճին

դանդաղ ու ճախագիծ թեւաբախում շրջագայում
Հուհեր կը ճամբորդեն
եւ ձայներ կը փորուին հովում
Քարը ցից շունչին մէջ կը կենայ

անշարժ ցօղուններ ածուխներէն
կ'անին
կը ժայթփեն կանաչ յակինթ
եւ լիութիւն

շաղ մը փայլուն կը դառնայ կ'օրօրի վտանգին
հիշը ճային կը բանայ տարածութիւնը ցաւին

պիտի շրջուի երկինքը գոց եւ բանայ միւս շրջանը աստղերում
լոյս ծփայ փարին
լոյս կաթի փարին
եւ փարն ըլլայ բոց

Քարը մէկ
Քարը նոյն

եւ հովը բարձր իր սիպիլի գուշակութիւնները կ'աւետէ
սեւ աչք երկնքին գիշերուան

Կ. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

Հ Ո Ր Ի Զ Ո Ն Ե Հ Ո Ր Ի Զ Ո Ն

Ե.

Սահմանադրութեան հռչակումը ճանապարհները բացուած կը յայտարարէր իմ դիմաց :

Ազատութեան թռիչքով՝ ճամբայ կ'ելլեմ :

Տիրապէջիքի պատճառով պարիսպները ժայռային շունչով մը կարծես հետս կը խօսին : Ըմբռնները կարաւաններու եւ կառքերու ժխտով կը թընդացնեն շրջապատը :

Դէմքս երբեմն կը դարձնեմ պարիսպներու կողմը : Այս միջավայրին մէջ դորձեցի Կարմիրներով եւ հիմա կարծես սրտակից ընկերոջ մը կը բաժնորհիմ :

Պարիսպներու խուլ արձագանգներէն կարծես ձայն մը կը հասնի ինծի . . . Երթաւ բարով, հազար բարով . . .

Ինչու այս դարաւոր քարերը ինծի հետ պիտի խօսին : Ազատութեան ու խնդրութեան այս օրերուն արդեօ՞ք վտանգ մը կայ իմ սառնէ : Վտանգներէ ու բռնակալութեան ճնշումներէն ազատազրուած՝ ուրախ ու անհոգ կը շարունակեմ ճամբաս :

Կառքը, որ երեք ձիերու լծուած է՝ կը սուրայ ճամբաներէն դէպի Այնթապ : Երեք ճամբորդները Այնթապի դռներէ ուսանողներ են, միւսը վաճառական մըն է :

Քանի մը ժամէն պիտի հասնէինք Սեւերէկ :

Պատիկ ձորակի մը վրայ շինուած կամուրջէն անցանք ու սկսանք բարձրանալ մերեւ մը, որ հողիւ երեսուն մեթր երկարութիւն ունի : Զիերը դանդաղ կ'առաջանան : Հազիւ քսան մեթր կտրած էինք, երբ քովի ժայռերէն զինուած չորս քիւրտեր մեր առջիւ կարեցին : Երկուքը ձիերը բռնեցին, միւս երկուքը զէնքերը ուղղեցին կառքին մէջ նստածներու :

— Ինչ որ ունիք դուրս թափեցէ՛ք : Դուք ալ դուրս եկէք :

Փայտի հարուածներով կառապանը վար առին : Ու երբ ճամբորդներս կառքէն կ'իջնէինք, անընդհատ հարուածներ կը ստանայինք մեր թեւերուն ու կոնակին :

Մէր զրպանները դատարկեցին եւ ունեցած իրերն ու պայուսակները վերցուցին : Միայն շապիկս վրաս մնաց . . .

Հազուատներու հետ՝ եղբորս տուած 30 հնչուն ոսկին գնաց, իսկ շապիկիս հետ, մօրս կարած հինգ ոսկին մնաց . . .



Ճանապարհի արկած :
 Խեղճացած՝ մեր ճամբան շարունակեցինք, շնորհիւ կառապանին, որ
 մեզ տեղ հասցնելով միայն կրնար իր առնելիքը ստանալ :
 Այդ ալ ճամբու բարիքը Լզաւ մեղի համար : Կառապանը մեզ տեղ հաս-
 ցուց . . .
 Արդէն հասած եմ Հալէպ : Կառապանը դիւ կեցուցած է այն հիւրանո-
 ցին առջեւ, որուն քով իր կառքը կը ղեւեղէր :
 Գլուխս բաց՝ ներս կը մտնեմ : Պաշտօնեան թեւէս բռնած՝ դուրս կ'ու-
 ղէ վանակի :
 — Հոս ողորմութիւն տուող չկայ, դու՛րս կլիր . . .
 — Սենեակ կ'ուզեմ : Ձեղի դրամ կու տամ, մի վախնաք :
 Մարդը երեսս կը նայի : Մանր մարդու մը սպաւորութիւնը կը թո-
 Ղուս իր վրայ :
 — Կանխիկ պիտի վճարես :
 — Լաւ : Սենեակս մտնեմ, հոն եկուր դրամդ առ :
 Քանի մը վայրկեանէն մօրս գանձը թեւիս տակէն հանած՝ սկի մը կը
 Քնեմ պաշտօնեային ձեռքը :
 — Առ այս սկիւն, հիւրանոցի երկու գիշերուան վարձքը վար դիր եւ
 մնացածը վերադարձուր :
 Մարդը պատկառանքով կը նայի վրաս : Քանի մը վայրկեան ետք ա-
 լեցած դրամը կը վերադարձնէ :
 Հիմա ի՞նչ պիտի ընեմ :
 Ճամբորդի մտտուք :
 Ճամբաս գտայ : Պիտի երթամ շուկայ եւ հազուստ մը առնեմ : Այդ հա-
 զուստը մինչեւ այսօր կը մնայ մտքիս մէջ, իբրեւ սրատուոչ նուէր մը մօրս
 կողմէ : Կարծես կը խօսէր հետս . . .
 — Տղաս, դուն հօրդ տեղը բռնած ես, յաւ հազուէ :
 Վերադարձած եմ հիւրանոց : Պաշտօնեաները յարգանքով կը նային
 ինձի, իբրեւ նոր վարձակայի մը :
 Երբ բանալին կ'առնեմ եւ կ'ուղղուիմ դէպի սենեակս, պաշտօնեան ե-
 տեւէս կը վազէ :
 — Եթէնտի, այդ սենեակը ուրիշին է :
 — Ես եմ այդ ուրիշը . . .
 Երեսս կը նայի զարմանքով : Կը վերջիչէ զէմքս :
 — Մեր գլխուն ու աչքին վրայ, կը ներես, որ չճանչցայ . . .
 Կեանքի ամէնօրեայ պատկեր : Հազուստը յարգելի, իսկ մարդը՝ ծառի
 ճիւղ մը : Բայց մարդը կը մնայ, հազուստը փոշի կը դառնայ :
 Կ'անցնիմ այդ հողեյոյզ օրերու վրայէն ու ճամբաս կը շարունակեմ :
 Աճապարանք մը ունիմ : Մտահոգութիւններով առջուց եմ : Բայց կորովս
 տեղն է : Լուստեսս եմ :
 Պէյրուսի, փոստի հասցէով հետզիբ տուած եմ եղբորս, որպէսզի ին-
 ծի դրամ զրկէ :
 Կ'աճապարեմ ճամբայ կլիել : Քոյս մնացած դրամը ճամբուս ծախքին
 եւ քանի մը օրուան հիւրանոցի եւ սնունդի հազիւ կը բաւէ :

Արդէն Պէյրութ կը գտնուիմ: Նաւահանդիւտին մօտիկ հիւրանոցը տեղաւորուեցայ:

Հետո թղթակցող ուսանող թէրզեանը փնտռեցի: Անծանօթ ամբարանոց մը դաստիարակ էր: Համալսարանը փակ էր: Այս կացութիւնը զիս մտահոգեց: Հիմա նաեւ Պոլսոյ դուռները բաց էին մեր դիմաց:

Ճամբորդն եմ: Ճանապարհս պիտի շարունակեմ: Սիրահար եմ նոր հորիզոններու...

Քանի մը օրեր անցան այս փնտառութիւնս ու դրպաններս դատարկուեցան:

Ամէն օր նամակատուն կը հանդիպիմ, դրամ ստանալու ահնկալութեամբ...

Չարմանքի ու մտահոգութեան մօտնուած էի: Հագիւ տասնըհինգ օր է, որ ճամբայ ելած եմ, ու ահա մտանդաւոր կեանքի մը մօտնուած՝ այս աշխարհի անցուղործները կը լափեմ:

Հիւրանոցի տէրը, երբ վերջին օրուան վճարումը չստացաւ, ինծի դիմեց վարձքը ստանալու համար:

— Ետտով դրամս պիտի հասնի, հոգ մի ընէք:

— Ես անօթ մը ունի՞ք հոս, — հարցուց:

— Ոչ:

— Այդ պարագային քու իրերդ վար կը դնեմ, մինչեւ որ երկու օրական վճարես: Սենեակը վարձու պիտի տամ:

Ըսաւ՝ ու բանակին դրպանը դրաւ:

Ես դարձայ թափառական մը:

Անօթի ու անբնակարան:

Մահ կամ Ազատութիւն արեւոտ օրերը ինծի ուրախութիւն եւ անձնազատութիւն կը ներշնչէին: Իսկ հիմա, երբ ամէն մարդ ուրախ էր իր ազատութեամբ, ես տխուր թափառական մը դարձած էի: Ճանապարհներն ու հեռու հորիզոնները խաւար ամպերու մէջ կորսուած էին:

Կը մնար մարդկային կամքը, որուն ապուխտած էի:

Այս տխուր օրերու անցուղործները դիրքերէս մէկուն մէջ ընդարձակ էջեր դրաւ: Են: Ինչո՞ք որպէսզի ճանապարհներուս հանդիպները իրարու միանան, այս քանի մը պատկերները գծեցի ընթերցողին համար:

Գիտեմ, որ ան պիտի հարցնէ.

— Յետոյ, յետոյ... Ի՞նչ եղաւ:

Եղաւ ա՛յն, որ իբրեւ առօրեայ երեւոյթ ամէն օր մեր աչքերուն առջեւն կ'անցնէ, իսկ ծովու ալիքները կը մնան անշափելի:

Երեք օր անօթի մնալէ ետք, վերջապէս կրցայ ստանալ եղբօրս դրկած հնչուն սուկիներու տուրակը, որ շորս օրէ ի վեր փոստը կը մնար: Ու պաշտօնեան ամէն օր ինծի կը յայտնէր, որ այդպէս հրամանադիր մը չկայ:

Այդ օր, յուսահատ, ես անձամբ փոստին տախտակէ դահլորտներն մէջ դասաւորուած նամակները աչքէ անցուցի եւ գտայ եղբօրս նամակը:

Աշխարհը փոխուեցաւ աչքիս:

Ճանապարհն ալ փոխուեցաւ ու բռնեց Պոլսոյ հորիզոնը:

Պէյրութը մնաց իր տխուր յիշատակներով:

Ես արդէն Միջերկրական ծովուն վրայ էի, ծովացած մտքերով...

* *

Կոստանդնուպոլիս: Դարաւոր, մեծակաւոյց քաղաքը, Եւրոպայի եւ Ասիոյ կամուրջը:

Նոր աշխարհ մը: Հետու ու մօտ պետութիւններ ու ժողովուրդներ ընդգրկող մայրաքաղաքը Հին Հռոմի ու Յունաստանի, նաեւ Հայուն՝ իր տուած կայրերով: Աւ Հիմա Թուրքիոյ մայրաքաղաք: Հին ու նոր կեանքի մը խառնակ պատկերը: Բազմութիւններու անցուղարձը: Փողոցներուն մէջ վաճառորդներու կանչերը: Եւրոպական հաղուածքով մարդոց եւ կանանց զբաւիչ երեսօթիւն քով, շէյխերու եւ մօլլաներու սեւ ծածկոցներուն վաւրած երեսը, սեւ քողով՝ Թուրք կիներու բազմութիւնը:

Աղբերու խառնարան մը: Յունարէնը ամէն կողմ կը հնչէ: Հայերէնն ալ կը թնդացնէ շարք մը թաղերու եւ շուկաներու պատերը: Թրքական թաղերու թուրքերէն աղմուկը իրենք կը լսեն: Բայց մզկիթներու բարձունքներէն խալմական կանչերը ամէն կողմ տարածուած են, աղօթքի խօսքերը՝ արարերէն...

Սասնոյ բարձունքներէն այս խառնարանը ինկած երիտասարդը ամէն բան չի կրնար տեսնել: Մահաւանդ՝ որ այդ բոլոր նոր հորիզոնները ընդգրկելէն առաջ, մտահոգութիւններ ունի Հին որսորդի սղէտէն ազատելու: Աղբային հիւանդանոց պիտի մտնեմ, ոտքս շտկել տայու:

Աճապարհանքով կ'երթամ Կեդրոնական վարժարան եւ կ'արձանագրուիմ աշակերտ: Տնօրէնը վրաս կը նայի, երբ Մուրատ Միթիթարեան վարժարանի վկայականը կը տեսնէ:

— Ինչո՞ւ Համայնարան մը չես արձանագրուիր, քու վկայականը քեզի կ'օգնէ, որ ուսանող դառնաս:

— Աւշացած եմ: Ոտքիս զործողութեան Համար Հիւանդանոց պիտի երթամ: Ապա պիտի դամ Կեդրոնական՝ քիչ մը աւելի զարգանալու:

— Միբո՞ւ քեզ աշակերտ կ'արձանագրենք մեր դպրոցին: Գնա՛ Հիւանդանոց: Առողջութիւն կը մաղթեմ:

Լաւ սպաւորութեամբ դուրս կ'ելլեմ տնօրէնին սենեակէն: Դռնապանէն կը հասկնամ, որ ինծի հետ խօսողը նշանաւոր մանկավարժ Հինդլեանն է:

Տեղաւորուած էի տիպարանկերացիի մը հիւրանոցը: Անոր ազգականները ծանօթներս էին: Մենք արդէն բարեկամ դարձած էինք: Քոզմ եղած դրամին մեծ մասը եւ պայուսակն պահ կու տամ Հիւրանոցին ու կը փոխադրուիմ հիւանդանոց, ուր արդէն հանդիպած էի նշանաւոր վիրաբոյժ սոքթ. Զարգարեանին, որ քննութենէն ետք, մուտքի օրը որոշած էր:

Հիւանդանոցը կը թողում ուրիշ էջի մը, ուր ոտքիս ամբողջ ողբերգութիւնը պիտի արձանագրեմ:

Մէկուկէս ամիս անցուցի հիւանդանոց: Դուրս եկայ շտկուած ոտքով եւ անմիջապէս մտայ Կեդրոնական վարժարան: Կեանքի նոր պատկեր մը պարզուեցաւ աչքիս:

* *

Կեդրոնականը զրազէտներու եւ զիտնական ուսուցիչներու կեդրոնատեղին է:

Հոն ուրախութեամբ վայելեցի Հինդլեանի, Հրանդ Կիւրճեանի, Տիբան Զրաքեանի, Եանթի եւ Զարգարեանի ներկայութիւնը:

Արեւմտեան Հայաստանի նահանգներէն ու զաւառներէն 18-20 տարե-

կան տղաք խուժած են Պոլիս : Անոնցմէ քառասունը Կեղերոնականի այս ինքնայատուկ դասարանը լեցուած ենք : Տեղացի տաս աշակերտներ կան , որ տեղ գրուած են մեր Հաւաքականութեան մէջ : Պոլսոյ ու Հայաստանի Հակապատակերը աչքի կը զարնէ ամէն վայրկեան : Լուրջ ու անլուրջ : Երկրէն եկողները գիտութիւն կուտակելու բաղձանքով տարուած են եւ դասը իրենց համար տարուան մը արժէքը ունի : Իսկ տեղացի տղաք դասերուն կը Հետեւին սովորական իմաստով : Անհամբեր են , որ զանազը հնչէ . . .

Փաւսաներէն Հեռացած են իրրեւ ուսուցիչ : Ու Հիմա անոնցմէ մօտ տասը՝ աշակերտ են :

Երէկուան ուսուցիչը այսօրուան աշակերտ :

Բայց կարգապահութեան ըմբռնումը այս աշակերտներուն մօտ կը մնայ երէկուան ուսուցիչի ըմբռնումով :

Մենք կյանուած ենք անհուն բաղձանքով , իւրացնելու մեր գրագէտ ուսուցիչներուն եւ գիտնականներուն ամբողջ Հարստութիւնը : Ու դասը մեր աչքին մէկ վայրկեանի տեսողութիւն կը ստանայ :

Մեր տարիքոս ընկերները շատ կը վշտանային , երբ տեղացի տղաք դասարանը կը խանդարէին եւ կը ստիպէին ուսուցիչին պահ մը կանգ առնել՝ կարգապահութիւն ազդարարելու համար : Այդ ընդմիջումէն առաջացած կորուստը իրենց համար տարուան մը արժէք ունէր , մինչ տեղացի տղոց համար սովորական դասի պահ մըն էր ատկա պարզապէս :

Ամիս մը անցած , ուսուցիչն ու գրագէտը իմ մէջ անհանդիսա եղան եւ օր մը , մասթեմաթիկի պահուն , դասը խանդարող տղուն ակահնջը բռնելով՝ ըսի՝

— Ձայնդ կտրէ՛ . մենք Հեռու տեղերէ եկած ենք քա՛ն սորվելու , այս դասարանը ազմիարարներու տեղը չէ . . .

Մասթեմաթիկի ուսուցիչը տեսնելով այս երեւոյթը ըսաւ .

— Ապրի՛ս , ասոնք կարգապահութիւնը խօսքով չեն Հասկնար : Իմ դասերուս՝ դուն Հսկիչ ես :

Դասը վերջացաւ : Գպրոցն ու տնօրէնը իմացան վարժունքս :

Դասերու ընթացքին տղոց աչքերը վրաս յառած կը մնային :

Այդ տարի առիթ ունեցանք միջազգային գրականութեան ծանօթանալու : Նոր աղբիւրներ դասնք :

Անրնչհաս աշխատանք :

Դասարան ու դասարանէն դուրս մաքի դանձեր հաւաքելու տնդուսպ տանջ :

Պանդալա այդ օրերուն նոր հորիզոններ բացուած էին մեր առջեւ : Բանախօսել ու գրել , նոր թերթ հրատարակել եւ մեր խօսքը ըսել : Ազգային ու միջազգային խնդիրներու շուրջ վիճարանական հաւաքոյթներու կազմակերպում՝ Կեղերոնականի ամփիթատրոնի սրահին մէջ :

Արդէն «Զարթօնք» ամսագիրը լոյս կը տեսնէ՝ խմորատիպ :

Մեր դասարանն է առաջնորդողը եւ գլխաւոր դեր կատարողը : Սմբարական կազմի անդամներն են Գուրգէն Մխիթարեան , Մանուկ Ասլանեան , Ա. Վանարեան , Հմայիակ Մանուկեան եւ Ծովասարի Ծուռը , որ Հիմա տեղաւորուած է Պոլսոյ Կեղերոնականը , բայց աչքը յառած կը մնայ նոր հորիզոններու :

Ինչ արժէք ու բովանդակութիւն ունէր «Զարթօնք»ը , չեմ յիշեր : Վաթսուն եւ շորս տարիները զիս կը բաժնեն այդ խանդալատ օրերէն : Մտկայն յիշողութեանս մէջ բան մը մնացած է : Ատիկա պատանեկան եւ երբ-

տասարդական յաւակնութիւնը կամ անձնագտանութիւնն է, որ մեզ կը մղէր կարծելու, թէ բոլոր տպուած թերթերն ու ամսագրերը ոչինչ են «Զարթօն-է»ի բաղդամամբ:

«Զարթօն»էն միայն մէջ թիւեր լոյս տեսան: Ու Կեդրոնական վարժա-րանը մնաց այդ օրերու յիշատակարանը:

1909 Մայիս:

Այդ օրերուն Հրանդ Կիւրճեան ձեկնած էր էջմիածին իրրեւ պատգա-մաւոր Աղղայի ժողովի՝ կաթողիկոսական ընտրութեան համար: Խրիմեան Հայրիկ մնաս բարով ըսած էր հայ ժողովուրդին: Հրանդին դասերը շարու-նուկելու հրաւիրուած էր «Ներաշխարհ»ի հեղինակը՝ Տիրան Չրաքեան:

Երբ դասն պահուէն շարադրութեան տեսրակները բաժնեց աշակերտ-ներուն, քանի մը ցուցմունքներ բրաւ եւ կանչեց.

— Ո՞վ է Մասունին, թող հոս գայ:

Ուրի ելայ ու կաղնիկաղ մօտեցայ գրասեղանին:

— Ան այս գրութիւնը եւ կարգա՝ դասարանին:

Ի՞մ շարադրութիւնն էր:

Երբ վերջացուցի, դարձաւ դասարանին.

— Այս գրուածքը գրական էջ մըն է:

Ես շլմած էի: Հոն կանգնած մնացի: Տեսրակս տակաւին Ինտրայի ձեռքն էր:

Տղայ մը անդիի սեղանէն կանչեց.

— Պարոն Չրաքեան, այս աշակերտը քու «Ներաշխարհ»ի մասին դա-սախօսութիւն տուած է 1907ին, Տիրապէքիբի ուսուցիչներուն եւ աշակերտ-ներուն:

Ինտրա յուզուեցաւ ու իբր անցաւ:

— «Բիւզանդիստ»ի մէջ թղթակցութիւն մը կարգացած էի եւ զարմա-ցած, որ զաւանդներուն մէջ «Ներաշխարհ»ով հետաքրքրուող մը կայ: Այդ խօսողը ո՞ւրն էր:

Գլուխս կախած՝ այո ըսի:

Անդիէն ուրիշ աղայ մը ձայնեց.

— Արդէն «Բիւզանդիստ»ի եւ «Մանգումէ»ի մէջ յօդուածներ գրած է:

Ուրիշ մը «Ազատամարտ»ը ցոյց տուաւ.

— Հոս ալ գրութիւն մը ունի...

Բոլորովին շլմեցայ: Բաց համակ մը դրկած էի «Ազատամարտ» թեր-թին, որ հազիւ ամիսէ մը ի վեր սկսած էր գորգացնել Պոլսոյ մտաւորակա-նութիւնը: Այդ օրուան թիւը տեսած չէի ու դասընկերս Ինտրային կ'երկա-րէր թերթը:

Այդ օր ինծի համար յուզիչ օր մը եղաւ, Ինտրան խորհրդաւոր ու ժպտուն երեւոյթ մը առած՝ ըսաւ.

— Աւ շարադրութիւնդ:

Յուզումէս ընկճուած էի:

Մենք գնահատանք եւ փառք հետապնդող չէինք, երբ գաղտնի յեղա-փոխութեան նուիրուած էինք: Այն օրերուն մեր կեանքը գրած էինք նժարին վրայ, ու կաղմուած էր նկարագիր մը, որ պոքը կը մերժէր: Միայն կ'ու-զէինք, որ մեր շրջապատը բմունէր կատարուած գործին իմաստը:

Լոռութեան ու գաղտնի կեանքէն տեղափոխուած էի գնահատանքի ու պոքի մթնոլորտ մը, ուր այս բոլորը բնական էին, ու թերեւս անհրաժեշտ, նոր սերունդը առաջ մղելու համար:

Կեդրոնական վարժարանի մէկ տարիս աշակերտի եւ քործօն մարդու
Հակադէր ապրումներու տարին եղաւ :

Կեանքի այս փոփոխութիւնները արդիւնք էին հռչակուած ազատու-
թեան : Մենք երիտասարդական խանդավառութեամբ ամէնօրեայ եռանդուն
չարժումներու մէջ էինք : Բայց , յաճախ , միակուսեանս ընթացքին՝ մտա-
ծումներու եւ մտածութեան կը մատնուէի : Ծանապարհին ինծի Հանդիպած
փորձանքները , Կիլիկիոյ կոտորածը եւ Համիտի դահլէն հետապնդող տղատու-
թեան հանդէպ թէ՛ վտահուտեան եւ թէ՛ կասկած կ'արթնցնէին մէջս :

Կեանքը իր ճանապարհով կ'ընթանար , ու մենք կեսնքի շարժուն փու-
լերէն կ'անցնէինք երիտասարդի խանդավառութեամբ :

* *

Փոթորկայտոյդ կեանք մը : Պուռներամ շարժումներ : Բանախօսութիւն ,
դասախօսութիւն , վիճաբանութիւններ : Հայկական թաղերը կարծես մրցումի
եղած՝ բանախօսները իրարու ձեռքէ կը խլէին :

Ու մենք՝ ուսանողներս , բոլոր թաղերուն սրահները կը յաճախէինք :
Մրգն ու արտասանութիւնը մեր քածինն են : Ծառն ու դասախօսութիւնները՝
հրամայական պահանջով՝ կը մնան Ակնունիին , Ահարոնեանին , Եաւրբիկեա-
նին , Ա . Իսահակեանին , Վոսաճեանին , Ռ . Զարգարեանին , Գ . Վարուժանին ,
Ռ . Դարբինեանին , Լ . Նազարեանին : Ընթերցողը թող պարծենկոտութիւն
Հաշուէ՝ երբեմն ալ ինծի : Վարդգէսը , Զաւարեանն ու Ռոստոմը ուրախու-
թեամբ զլուխ կը շարժէին : Ու մեր տարեց ընկերները կը զարմանային Մո-
վսասարի արջերու , դայլերու եւ ֆետայիներու աշխարհէն եկած այս տղուն
վճռական կեցուածքը դիտելով :

Կեանքի վերիվայրուժը իր համբան կը շարունակէ : Ու մենք մեր երի-
տասարդական շարժումներով , կարծես զգացնէլ կու տայինք , թէ յեղափո-
խութեան դրօշակիրները միայն մենք ենք :

Երիտասարդի պոռթկում : Ամէն բան գիտնալու ձգտում : Ղեկավար
դառնալու ներքին ապրում : Բնդարձակէ այս հոգեկան աշխարհը , որքան ե-
րեսակայութիւնդ քեզի կը թելադրէ , ու դուն կ'ունենաս մեր այն օրերու
պատկերը :

1900ի Մայիսի երեկոյ մը , Հինդ-ձիւնց ընկերներ կանչուած էինք Վլա-
տաւարտօի խմբադաստան : Ռոստոմը , Զաւարեանը եւ Ակնունիին սեղանի
զլուխն էին : Հօն , իրենց կողքին , նստած էր աւելի երիտասարդ՝ հետաքրք-
րական դիմադրող օտարական մը :

Ռոստոմ առաջարկեց մեզի , որ մեր ուսանողական եւ աշակերտական
չարժումները զաշնակցական կազմակերպութեան վերածենք :

Մենք սքեւորութեամբ ընդունեցինք այս առաջարկը :

Հօն , տեղւոյն վրայ , նշանակովի վարչութիւն մը առաջացուցին եւ
թելադրեցին , որ մեր խուռներամ բազմութիւններէն ընտրովի միաւորներ
կազմենք եւ ընդհանուր հաւաքոյթի մը ընթացքին ընտրենք մեր կեդրոնա-
կան վարչութիւնը՝ Հ . Յ . Գ . Բիւրոյն հսկողութեամբ : Մեզի ծանօթացու-
ցին ներկայ դոնուոյ երիտասարդը , որ Ռուբէն Դարբինեանն էր :

— Դարբինեանը , բուն անունով Ջիլինկիրեան , իրաւաբանութիւնը սո-
ւարտած Մոսկուա , փոխադրուած է Գերմանիա եւ մասնակցած է Եւրոպայի
Հ . Յ . Գ . Ռուսնոդական Միութեան : Այժմ Վլատաւարտօի խմբադասութեան
անդամ է եւ ձեզի պիտի օղնէ իր զիտութեամբ եւ փորձասութեամբ :

Մենք ուրախութեամբ ընդունեցինք Ռոստոմի առաջարկը: Գարբինեան շնորհովն կոպուեցաւ մեր միութեան եւ մեր զործակցութիւնը, հետաքրքրական դասախօսութիւններն ու վիճարանութիւնները շարունակուեցան քանի մը տարի անընդմէջ:

Հայաստանի նահանգներէն Պոլիս թափած երիտասարդներէն սմանք փորձառու մարդու կեցուածք ունէին: Երկրին մէջ, պաղտի մարմիններու անդամ եղած էին: Գողտնի եւ վտանգաւոր գործերուն իրենց պատանկան ու երիտասարդական արիւնը տուած էին: Ոմանք բանտի շարշարանքներուն ենթարկուած՝ արդէն կազմուած նկարագիր մը ունէին:

Բայց անոնք աշակերտ ու ուսանողներ դարձած էին Պոլսոյ մէջ: Զարգացման ճամբան բռնած, հայկական հորիզոններէն անգին սաւառներով՝ համալսարանային ազատութեան եւ մարդկութեան մասին կը մտածէին: Հայ ժողովուրդի ընկճուած ու աշխարհէ տշխարհ ցրուած իրականութիւնը աւելի մղում կու տար համամարդկային ազատութեան բաղձանքին: Ազգերու եւ մարդկային գանդուածներու ազատութիւնը թէեւ մասամբ համամարդկային թմբոնումներէն կ'առաջանար, բայց ներքին հոգեբանութեամբ՝ հայ ժողովուրդի ազատութիւնը կը հետադիպէր:

Ոգեւորութեան, խանդավառութեան, յառաջդիմութեան, նոր սերունդի պոթիւմեներու շրջան մը կը բոլորէինք:

Գերազանց ճիշդ զարգացման անսահման ձգտումն էր: Հարուստ պաշարներով կ'ուզէինք դառնալ Հայաստան՝ ո՛չ միայն իր հին հարստութիւնները վերականգնելու, այլեւ համամարդկային մշակոյթը տարածելու հայ ժողովուրդի դարաւոր մշակոյթին եւ հոգեկան աշխարհին մէջ:

Եթէ առաջին տարին միջազգային ծանօթանալու հարկադրանքին տակն էինք, յաջորդ տարի (1900-1910ին), ուսանողներս հրապարակ կ'էանք բանաստեղծութեան ուսանողական շրջանակներու մէջ: Ու ապա, անցանք կուսակցական շարքերը ոգեւորելու: Այս վերջին փուլին արդէն Ակնունիի, Վլաժենի, Զարդարեանի եւ Վարուժանի կողքին էինք, նոր հորիզոններ բանալով երիտասարդ սերունդին առջեւ: Պատասխանատու դերեր ստանձնողներ եղանք եւ անբռնանք մենք զեկազարներէն...

Մեր շրջապատը ծաւալուն էր: Այլազան: Մթնոլորտին տիրապետող տարրերը իրենց հոսանքներով, գրական հմայքով, քաղաքական ազդեցութեամբ, պետական եւ ազգային դիրքաւորումներով (պատրիարքարան, պետական երեսփոխան, նախարար, հարուստ ու անուանի ընտանիքներու հրամայքը, գաւառներէն եկած բազմութիւնը իր հայեցիութեամբ) մեծ խառնարան մը կը հանդիսանար հայ կեանքին ու մղել ուժ մըն էր հայկական վերելքին:

Ահա մեր շրջապատը: Դատէ եւ կռուէ, սիրելի ընթերցող, որպէսզի ըմբռնես ուսանողներու փոթորկալի կեանքը:

Պատերազմի հեղուկ կ'ընթանար մեր կեանքը: Աշխարհի հորիզոնները կտրել անցնելու կիրքէն բռնուած էինք: Մեզ ճշմոյշ բնակալութիւնը օդը ցնդած էր եւ մենք երեսուն տարիներու արիւնոտ գնտանէն դուրս եկած էինք, արիւնաշաղախ մարմնով ու հոգեով:

Յարութիւն առած նոր Յիսուս մըն էր հայ ժողովուրդը, որ խաչէն վար էջած, կորսուած տարիները կ'ուզէր գրկել մէկ օրուան, մէկ ամսուան, թող ըլլայ մէկ տարուան ընթացքին:

Կ. ՍՍՍՐՆԻ



A.R.A.R.®

Յ. Ն Ա Գ Ո Ր Լ Ե Ա Ն

ԱՄԷՆ ՇՈՒՆ

ՆՄԱՆ Է ՄԻ ՈՍՏԻԿԱՆԻ

ամէն շուն նման է մի ոստիկանի

ինչ կարող եմ անել վարագորութեով
ոսկեղէն կառուցեր
ու թատրոններ կամ
սփռուած
ամէն դի

օդակայանի թագաւորութիւն

պուպրիկի նման չորցած գլուխներ
եւ շատախօսներ
չբլէժների պէս
մթնած երկինքի վառիների մէջ
բնակիչներն են
օդակայանի

ինչ խեղճ է տեսքը մեծ ֆազաֆների
իր սեւ ու սպիտակ
թիթոնիկներով

մծեղների են նման այս մարդիկ
հոգի արդուկուած
սայալատակուած
երածշտութիւն
երկինքը դեղիմ
ծովը արնագոյն
այս ֆազաֆների
ամէն շուն նման է մի ոստիկանի

ինչ խեղճ է տեսքը երեսադէմի
էր
դեռ չխաչուած քրիստոսներով

ՔՐԻՍՏՈՍԻՆ

դժբախտ բերեցիր մէն մի բջիջիս...

երբ կործանեցիր
մեզ առաջնորդող միտքն
— ակն ընդ ակն —
չփայտաւ ամէն մի նշմարտութիւն
մարդուն սիրելու
երկիւղը անգամ
եւ երկրում տիրեց
ներաշխարհների
կեղծ
ստրկութիւն

հենց այդ օրուանից
դժբախտ բերելով մէն մի բջիջիս
դժոխքում խաչեցիր
թռիչքը հագաւ

վերջին ընթրիքին
ես եմ ին հոգու դեղիմ թշնամին
վերջին ընթրիքին
եղունգներով
բոլոր պատերիմ պիտի ֆանդակեմ
քեզ
ծնուցողին

ԶԱՐԹՆԵԼՈՒ ՊԱՀԻՆ

զարթնելու պահին
երանութիւն եւ ապրում ամէն օր
գլխի եւ ընկնում
հագարամեակներ սիրահարուած եւ
նեփերթիթիին

ամէն երեքշաբթի
երազ եւ տեսնում
մարմինս փոխուած
էարացած կարծես
սփինճս եւ դարձել
չորսոյնս վիթխարի քառակուսիներ
մատնեքիս վրայ
երկար եղունգներ
մխրնուած խորը
ծովերի խորում

իմն են անկասկած
իմն են ծովերը
գրկել եւ երկիրը
մեր երկրացունտը
սուր եզունգներով
կարծես փոխում եւ
մեր հին պատմութեան
սերը սպիտակը

վազ առաւօտեան
զարթնելու պահին
սիրահարում եւ
նեփերթիթիին

Յ. ՆԱՉՈՒԼԵԱՆ

ՎԵՐՔԻՆ ԲԱԺԱԿԱ

վերջին բաժակս
թաթխեմ հոգուս մէջ
հոգուով սնուցեմ
արմաւենիները
այս սիեզերէին

իմ ու երկնքի միջու
իմ ու աստղերի միջու
իմ ու իմ հոգու միջու
հանգոյցներ չկան

զարերի խունկը
սեղմուել է
երեսակաշուքեանս խղճիս արձնում
կիրճերիս խորում

վերջին բաժակս
թաթխեմ հոգուս մէջ
թուղ խնկարկուեն
դարերն ապագայի

Բ. Կ Ռ Ա Ն Ե Ա Ն

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր



Մեր վերջին օրն է Փարիզ: Յաջորդ առաւօտ կանուխ պիտի մեկնինք Յիւրիխ: Դեռ այնքան տեսնելիք կայ: Ընտրութիւնս կ'ընեմ. անպայման պէտք է այցելել Միւզէ աը Լ'Ար Մոտերն: Տպաւորապաշտներէն եւ Յեռ-Տպաւորապաշտներէն ետք: Նապիները, Գաղանները (Ֆոմ), Քիւպիզմը, Ար-տայայտապաշտները, Վերացականները, եւայլն, եւայլն:

Նապի արաբերէն մարզարէ բռան է: Փոյ Սէրիզիլ, Կոկինի քովէն դարձին, իր սիկարէթի տուփին ետեւը նկարուած բնանկար մը բերաւ, զոր կոչեց «Թայխաման»: Գանի մը ոգևորուած ընկերներ քով քովի վարով ծնունդ տուին Նապիներու շարժման: Սէրիզիէն զատ, կային Մորիս Տընի, Փիէո Պոնար, աւելի ուշ Վիւյեար եւ արձանագործ Մայեոլ:

Մորիս Տընի գրեց. «Նկար մը՝ պատերազմական գի մը, մերկ կից մը, կամ գրուագ մը բլլալէ առաջ, հիմնականօրէն տափակ մակերես մըն է՝ ծածկըւած գոյներով, արմնք դասաւորուած են յատուկ կարգով մը»:

Շեշտը դրուած է գոյնի եւ անոր դասաւորման, այսինքն՝ առընչութեան վրայ: Նրկրորդ, նկարը տափակ, երկտարածեան պատասան է՝ իբրեւ անկախ իրականութիւն: Արդէն մտած ենք վերացականութեան մարզին մէջ:

Շարժումը կարճ կեանք ունեցաւ, բայց յանդուպն փորձեր կատարեց, մանաւանդ վերլուծեց եւ ստեղծեց նոր արուեստի տեսարանութիւն: Նապիներէն ուշադրաւ էին տազանդով՝ Վիւյեար, Պոնար եւ Մայեոլ: Առանց Նապիներու եւ յետ-տպաւորապաշտներու, — կ'ըսէ Առնասըն, — պիտի չծնէին արտայայտապաշտութիւնն ու վերացական արուեստը:

Մարզարէներու ըմբոստութիւնը շարունակեցին Գաղանները (Ֆոմ): Թէեւ առաջին թարգմանութիւնը պիտի ըլլար վայրի կենդանիներ, ես նախընտրեցի զազանը:

1905ին, Սալոն Եւ Գիմնազիականների ցուցահանդէսին, քննադատ Լուի Վոքսէլ նկատելով Տոնատելլոյական արձան մը Գաղաններու մոլեզին գոյնեւորով նկարուած պատաստներուն միջեւ, յարեց ի միջի այլոց. «Տոնատելլո վայրի կենդանիներու մէջտեղ»: Անունը փակաւ եւ շարժումը կոչուեցաւ Փոմ: Արուեստի մէջ նախընտրելի է բնաւ ուսուցիչ չունենալ, քան ենթար-

կըրի մէկու մը, որ տկալեմիջ է, քարացած եւ ինքզինք պարտադրող: Այս պարագային, ազէտը իր հետքը կը թողու ընդմիշտ: Այդ օրերուն, նկարչական արուեստի համար բարեբախտութիւն մը եղաւ, որ Կիւստու Մորո ա- նունով համբաւուոր ուսուցիչ մը կ'ապրէր: Ինք իբրեւ նկարիչ, միջակ տա- ղանդի տէր էր, բայց ունէր թափանցումը ուրիշներու կարելիութիւնները տեսնելու եւ գանոնք երեւան հանելու: Իր աշակերտները եղած են Մաթիս, Պոնար, Բուս, Մարքէ, Մանկէն, եւայլն: Բոլորն ալ մեծ արուեստագէտ- ներ: Եարժումին միացան Վան Տոնկէն, Մօրիս Վլամինք, Անարէ Տէրէն, Բաուլ Տիւֆի եւ ուրիշներ: Պրաքը եւ Բուսն կարճ տակն մը մաս կազմեցին շարժումին, որ արդէն մօտ էրեք տարի տեւեց, բայց դարձալուի բացաւ:

Չոր շարժումները — Նապի եւ Փոյ — իրենց մղումը ստացան Սեդա- նէն, Կոկէնէն, Վան Կոթէն եւ Սէօրայէն դիւաւորաբար: Ատիկա մտածալու չէ: Միւս կողմէ՝ Ելրակացնելու չէ, որ իրենք — արուեստագէտները — ձեռով մը հեաներդներ էին եւ ոչ ինքնատիպ եւ առանձին ստեղծագործողներ: Ասոնք վարպետներու արուեստին որոշ տարրերը վերլուծեցին, զարգացու- ցին եւ, ի վերջոյ, յանգեցան իրենց սեփական եւ նոր հորիզոններուն:

Ի՞մ նպատակս արուեստի պատմութիւն զրել չէ, ոչ ալ կը յաւակնիմ ունենալ հմտութիւնը: Ինձի համար էականը մարդկային ոգին է, որ տեւա- փան հոսանուտի մէջ է, որոնումի, արտայայտութեան նոր կերպերու եւ ստեղծագործական անսահման կարելիութիւններու: Եւ մարդկային հոգիին թափանցելու կերպը — եւ վայելքը — ինձի համար, արուեստն է:

Մինչեւ Միջին Գար եւ աւելի ուշ, մարդիկ կը յայտարարէին, որ յոյ- ներէն քաղ, անհնար է արուեստի մէջ բարձունքի հասնիլ, ոչ իսկ հաւասա- րիլ անոնց հունճարին: Վերածնունդէն ետք, վստահարար, մարդիկ կը մտա- օճէին, որ տա Վինչիէն եւ Միքել Անճելոյէն ետք, կարելի չէր նոր սահման- ներ եւ արտայայտութեան կերպեր ստեղծել: Եւ սակայն, Վերածնունդէն ետք եկան նոր հսկաներ եւ մարդկային որոնող եւ արարչադորձ ոգին ծնաւ նոր դարպալուիներ եւ բացաւ աներեւակայի նոր հորիզոններ:

Ինձի համար նիւթը, միշտ եղած է մարդը: Ամէնէն հետաքրքրական դիւտութիւնը, մարդու գիտութիւնն է: Ի վերջոյ, ամէն ինչի սկիզբը մարդ էակն է: Ան է, որ կը դիտէ, կը տեսնէ, կը տրամաբանէ, կը զգայ եւ կը ստեղծագործէ: Երբ մարդ էակը կը ծնի, իրեն հետ կը ծնի տիեզերքը եւ իրեն հետ կը մեռնի տիեզերքը: Տիեզերական միակ իրականութիւնը մարդ- կային գիտակցութիւնն է: Նոյնն է կեանք կոչուած երեւոյթը:

Կեանքը տեւականութեան կը հասնի միշտ փոփոխութեան ենթարկուե- լով եւ վերանորոգուելով: Նոյնն է պարագան մարդկային հոգիի նկատմամբ: Մայր էակը անընդհատ ապուորութիւններու եւ յոյզերու մէջ է: Չափէն ա- ւելի լեցում զգալունի մը նման պիտի պայթէր եթէ չկարենար արտայայ- տել ինքզինք: Եւ արտայայտութեան կարենալ հասնելու համար պայտան է վերանորոգումը, որովհետեւ կրկնուած, բովանդակութենէ պարպուած մի- ջոցները այլեւս չեն կրնար բուարարել զինք: Արտայայտութեան կերպի փո- փոխութիւնը յարաբերական է բովանդակութեան վերանորոգումին:

Արդ՝ դժգոհութիւնը, քննադատութիւնը, յեղափոխութիւնն ու ուրա- ցումը առողջ եւ անհրաժեշտ են: Գրուելուան են ներքին տաղանակն: Եր- կուճքի ցաւ:

Ցումերը դժգոհ էին ակադեմիզմէն եւ հաստատուած հեղինակութիւն- ներէն: Պոնդալա մեծ ըմբոստներով: Կոկէնի խորհրդապաշտութիւնը եւ ռարժը դէպի նախնականը, Վան Կոթի փոթորիկը, Սեզանի վերլուծողական

և կառուցողական գիւտերը, գոյնը մանաւանդ: Ճափոնական գունաւոր տը-
պագրութիւններ, միջնադարեան գունաւոր ապակին, հղիւպական, չինա-
կան, նեկրոյիտ արձանադործութիւնն ու դիմակները — բոլորը նոր շունչ և
թելադրանքներ բերին արուեստին:

Ճովերը իրենց մղումը ընտրեցին ստանալով հանդերձ, յանդիմանա-
նակ հետանալու և նկարչութիւնը դարձնելու անկախ իրականութիւն մը,
ինչպէս ոմանք ջանացեր էին իրենցմէ առաջ: Գոյնը, մանաւանդ, դարձաւ
կեդրոնական կորիզ և զղկցաւ մերացական ընոյթ: Այսինքն՝ դադրեցաւ իր
մը, ընական երեւոյթ մը ներկայացնելէ, այլ ենթարկուեցաւ արուեստագէ-
տին տրամադրութեան, յղացած ներդաշնակութեան և առնչութեան: Ինչ-
պէս երաժշտութեան մէջ, «տիտոնան»ները երեւան եկան: Ձեւը, ծաւալը,
գիծը ևս ենթարկուեցան ըմբոստութեան խիզարութիւններուն և ծայր աը-
ւաւ ձեւաղեղծմը: Պատասուը, տափակ, սլաքապ, երկտարածեան, որուն
վրայ պիտի ծնէր ու դարդանար արուեստագէտին տեսիլը, ըստ իր յղաց-
ման, սասնց նախապայմանի, սասնց պարտադրեալ տարազներու և օրէնք-
ներու: Ինչպէս այլ արուեստներու մէջ՝ մաքուր ձեւը, նկարչութեան մէջ
մաքուր գոյնը: Յանդուզն, մոլիզին, նոր առնչութիւններու և ճառագայ-
թումի արբշիտ խրախճանք մը:

Գոյնը կը դառնար հոգեկան դիճակներ արտայայտելու միջոց մը: Ա-
տոր պիտի հետևէր արտայայտապաշտութիւնը: Վերացական նկարչութիւ-
նը: Իտալականութիւնը և Վերածնունդը լիովին շրջափոխուած էին:

Միւզէ տը ՚Ար Մոսկոնի մէջ, այս նկարիչները ունին զմայլելի երկեր,
որոնց առջև երկար կը յամենամ: Ակամայ կը յիշեմ մեծ մօրս «Նազար ու
մէկ գիշերներ»էն հեքիաթներ: Գոյններու հարստութիւնը, երեւակայութեան
կրակը:

Կեդրոնական դէմքը, աչքի տը ՚էքոյը անշուշտ Անրի Մաթիսն է:
Բացառիկ տաղանդ մը. ամենարագմտողմանի, որոնող, փորձարկու, հնա-
րամիտ արուեստագէտ: Փորձած է բոլոր ոճերը, — նաև արձանադործու-
թիւն, — տաղնապալի փորձարկութիւններէ ետք, բացած է նոր ճամբաներ
և ներշնչած ուրիշներ: Լուծած է խնդիրներ: Ունի հոյակապ պատուաներ,
ունի երկեր, զորս չեմ հասկնար ևս չեմ կրնար փոյնել: Մաթիսը իմ զնա-
հատումիս չի կարօտիր անկասկած: Բաղմտկողմանի ըլլալը, որոնումը, փոր-
ձարկութիւնները, ազդեցութիւններն ինկ հասկնալի են ևս սակայն, համե-
մատութիւնները պահելով, տեւաբար ոճ փոխելը կրնայ նաև իրրեւ ժխտա-
կան երեւոյթ մեկնարանուել:

ՓԻՔԱՍՈՅԻ ԵՒ ՔԻԻՊԻՉՄԻ ՄԱՍԻՆ

Չուզանք մը կայ Մաթիսի և Փիքասոյի միջև: Բազմատաղանդ,
միշտ խուզարկող, նոր ճամբաներու հետամուտ, արտակարգօրէն ստեղծա-
գործ և հնարամիտ: Ընդունուած վարպետը: Գրեթէ չկայ արուեստի ճիւղ,
զոր փորձած չըլլայ և յաջողութեամբ: Առաւել ևս, արուեստագէտ մը, որ
կեանքի յորձանքին միշտ ուշադիր, ընկերային-քաղաքական նախընտրու-
թիւններով, միշտ զնդարուեստական մտահոգութիւններու և գործունէու-
թեան առնթներ, մասնակից իր ժամանակի դէպքերուն, որոնց ազդեցու-
թիւնները կ'անդրադառնան նաև իր երկերուն:

Անցած է զանազան հոգեփոխութիւններէ, որոնք կը կազմեն զլիսուոր
ընթանները իր ստեղծագործութեան. «Կապույտ Շրջան», «Վարդագոյն Շրջ-

ղան», «Նախնական» կամ «Պափոջեկային Շրջան», «Նէօ-Դասական» եւ, մա- նաւանդ, «Ֆիւլիզմ», որուն հիմնադիրներէն է Պրաքի Հետ:

1906ի առեւնները կը նկարէ իր նշանաւոր «Ալիմնանի օրինորդները», որ չըջաւորած մը կը նկատուի: Ժխտումն է ամէն ինչի, որ Վերածնունդէն ի վեր ընկալեալ նկարչական արուեստը կ'ըմբռնէր ու կը դործադրէր: Հետա- նկարը շքեցած է, նկարչական գիծը վերածուած է անկիւնաւոր, անշոքրէջ շրջագծի, գոյնը կորսնցուցած է իր արտայայտչականութիւնը, միջոցը կըտ- րատուած ու խորանարդային մասնատումի ենթորկուած է, իսկ արտայայ- տութիւնները նախնականացած, կապիկային ըլլալու ստոխման: Փիքասօ գիտակցօրէն կը քանդէ անցեալը եւ, ազդուած Սեզանի եւ միւսներու ճի- գերէն, նկարչական արուեստը կը դնէ նոր միջոցի եւ ժամանակի տարա- ծուփեան մէջ:

Անհնար եղած է ճշդել, թէ ֆիւլիզմի հայրը Պրա՞քն էր, թէ Փիքա- սոն: Ընդունուած է, որ երկու արուեստագէտները սկսած են միաժամանակ, թելադրուած Սեզանի նկարներէն: Պրաք եւ Փիքասօ այնքան մտերիմ էին եւ աշխատած են միասին, որ երբեմն դժուար կ'ըլլայ երկի բուն հեղինակը ճշդել:

1909ի վերջերք «Հերոսական ֆիւլիզմ»ը փոխակերպուեցաւ «Վերլու- ծողական ֆիւլիզմ»ի: Նկարչական ձեւերը եւ ծաւալները առաւել եւս մաս- Պաշտօնեցան, մակարդակները վերածուեցան անհամար փոքր մակարդակ- ներու, միջոցի սահմանափակումը իջաւ նաւազագոյնին: Առարկան ենթադ- վրեցաւ կատարեալ վերլուծումի եւ նկարչական ստեղծագործութիւնը բո- չորովին կորուեցաւ նկարագրական կամ ներկայացուցչական ըլլալէ, աշ- սինքն՝ բնութեան վերարտադրութեան իր հանգամանքէն: Որովհետեւ ան- շուշտ անհնար եղաւ բոլորովին ընթելը, որովհետեւ խորանարդներու, երկ- բաշտօնական ձեւերու իրարու վրայ դարսուիլը ինքնին կը հաստատէր մի- ջոցը, որքան ալ դոյզն:

1912ին, ֆիւլիզմը լանգեցաւ «համադրական ֆիւլիզմ»ին: Առարկան իր բաղկացուցիչ տարրերուն վերածուելէ, վերլուծուելէ հետք, համադրուե- ցաւ իր հիմնական տարրերուն մէջ: Հետանկարը հիմնովին բնաջնուած էր: Գոյնները դարձան աւելի հզօր եւ արտայայտիչ, գիծը վերստացաւ որոշ ճկու- նութիւն: Պրաք եւ Փիքասօ, երկրորդ շրջանին, սկսած էին «քոլլաժ»ի, աշ- սինքն՝ իսկական առարկաներու կամ տպածոներու մասեր փակցնել նկարին եւ զանոնք դործածել իրրեւ կառոյցին անբաժնի մասը: Համադրական ֆիւ- ղիզմը այնքա ճշտութեամբ չէր ընէր, բայց սկզբունքը կը դործածէր տափակ դոյնի մակերեսներով: Փիքասոյի նշանաւոր «Անրիխտ»ն կարծես «քոլլաժ» է, ինչպէս կ'ըսէ քննադատ մը:

Պրաք հաւատարիմ մնաց ֆիւլիզմին, որոնող Փիքասոն քաւեց նորա- նոր ուղիներէ:

Իսկանը այն է, որ այս նոր շարժումները հիմնովին յեղափոխեցին նկարչական արուեստին ըմբռնումը: Ամբողջ աշխարհ մը փլաւ, որ կանգնած էր անընդունելի հիմքու վրայ: Եւ ասկայն, յաւիտեանէն կայուն բան չկայ տիեզերքի մէջ եւ մարդու որոնող ոգիին: Մարդկային ստեղծագործութեան կարելիութիւնները անսահման են: Շարժումները, խառնուածքները, արտա- յայտչական կերպերը կրնան մեր անձնական նախասիրութիւններուն պատ- շանի կամ խոստր համեմատիլ: Ատիկա երկրորդական է եւ արուեստագէտը անտարբեր կը թողու: Հետաքրքրականը, եւ զեղարուեստական վայելքը, փոփոխութիւնը ինքն է, որովհետեւ իւրաքանչիւր իսկական արուեստագէտ

գիւտ մըն է, կեանքը եւ տիեզերքը դիտելու նոր կերպ մը, որ կը հարստացնէ մարդկային փորձառութիւնը եւ ապրելու հաճոյքը:

Արուեստը բնութենէն ճամբայ էլու եւ, բազմաթիւ փուլերէ անցնելէ ետք, հասաւ Քառօնակի եւ Մոնորիանի, որ դոյներու եւ դիժի աղբնութիւնն եւ համեմատութիւնն է միայն, տեսակ մը վերացական հաւասարակշռութիւն:

Փիքասոն բարեկամի մը ըսած է, որ ինք «առանց ոճի» նկարել է մըն է: Միւզէ տը չ'Ար Մոնէրնի մէջ ամբողջ արահ մը իրեն յատկացուած է: Ուղղակի ազնեցուցիչ է: Ա՛հա արուեստագէտ մը, որ նկարած է բոլոր կարելի ոճերով եւ դպրոցներով, միշտ մնալով տաղանդաւոր եւ յաջող: Մաթիսէն աւելի բազմակողմանի, աւելի տաղանդաւոր բոս իո: Անկարելի է հաւատալ, որ նոյն Հեղինակը արտադրած է այս երկերը: Ո՛րն է իր սեփական, անսոսորկելիորէն սեփական սճը, զժուար է ըսել: Ըսել չեմ ուզեր, թէ անհատականութիւն չունի, ընդհակառակն, հզոր է մի՛շտ: Ինչպէս Մաթիսի պարագային, այս մեծ արուեստագէտին մեծութեան եւ տկարութեան տարբերը նոյն երեւոյթին մէջ են պարփակուած:

էյֆէլի աշտարակի մօտէն կ'առնենք նաւը Մէնի վրայ նաւարկելու համար: Օղբ դժայիլի է: Տեղ-տեղ սմպեր, արեւը դիտելու թեան պէս է: Կամ մուրհները, աշնան ծառերը, շէնքերու դորշ հեքիաթները: Անհնար է չհամաձայնիլ: Փարիզը գեղեցիկ քաղաք է: Դեռ թանգարանի նկարներու ապաւորութեան տակ եմ: Շատ բան կայ այս տեսարանին ու մթնոլորտին, որ ներկայ է նկարներուն մէջ: Կարծես արուեստը կը մղէ, որ տեսնես իրականութիւնը եւ գեղեցկութիւնը: Թերեւս աւելի լաւ պիտի ըլլար ըսել, այժմ աւելի խորը կը թափանցես գեղեցկութեան: Առնչութիւնը կեանքին, տիեզերքին եւ անմահութեան: Եւ գեղեցկութիւնը հոս չէ, այլ արուեստագէտի հոգիին մէջ: Հոս ամէն ինչ այնպէս է, ինչպէս պիտի ըլլար: Համեմատութիւնները, առնչութիւնները, յուզումը, խանդավառութիւնը, լինելու դիտելութիւնը եւ որ մը անհանալու տխրութիւնը մարդու մէջ են միայն: Ընդ-վըդումը մահուան գէմ, տեսելու տենչը եւ հետեւող ստեղծագործութիւնը: Հետք մը ժամանակին մէջ: Խութիւնը թողուլ ետին: Ա՛խարհը, ինչպէս տեսար, էակը, որ սիրեցիր, տրտիւնը սրտիդ, որ զգաց, հրճուեցաւ, հասաւ արարչութեան:

Ժամը 3-30ր անց է: Կը մտնենք ճաշարան մը եւ կը նստինք սեղան: Քաղցած ենք: Օրիորդը կու գայ. «Կը ցաւիմ, ճաշարանը դոց է մինչեւ ժամը ութ»: Ահա թէ ինչ: Կ'ելլենք. նոյնն է պարագան ամէն տեղ: Կ'որոշենք բաներ մը գնել եւ պանդոկի սենեակը խնճոյք մը սարքել: Կը մտնենք «Ջարքի-թըրի» մը եւ կը գնենք պահածոյ միս, ենթարկուելով ծախողի կողմու վերաբերումին, սովորական երեւոյթ մը Փարիզ: Պանի՞ր. դիմացը: Կը գնենք պանիֆը, հա՛ց... հացագործին մօտ: Կը գտնենք փուռը, կ'առնենք հացը եւ կ'ուզենք շիշ մըն ալ գինի տնչուտ: Նիքոլայի մօտ: Կը փնտռենք, կը հասնինք Նիքոլայի խանութը... զոց է մինչեւ չորս: Ինչպէ՛ս չսիրենք Ամե-րիկան, ուր կը մտնես հսկայ հաստատութիւնները եւ կը գտնես ամէն ինչ, որ սիրուող կը ցանկայ: Անուամենայնիւ, պանդոկի վերի յարկը, որուն տուհանէն կը տեսնուի Փարիզի ծխնելոյցներու անտառը, եւ հետուն՝ սպիտակ Սաքրէ Քէօբը, կը վայելենք մեր ամենահամեղ ճաշը:

(Շար. 6)

Բ. ԿԻՍԼԵԱՆ



ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

ԺԱՆ ԺԸՆԷԻ

«ԱՂԱԽԻՆՆԵՐԸ»

Երեք կին դերակատարներու, աւելի ճիշդը՝ բեմին վրայ իրենց ստանձնած դերերով իրրեւ կին ներկայացող երեք անձերու մասնակցութեամբ խաղցուող թատերգութիւն մըն է Ժան Ժընէի «Աղախիճները», որ յատկանշական տեղ մը կը դրակէ հեղինակին թատերական գործերուն շարքին:

Երազանքներու եւ ցնորքներու վրայ կառուցուած «Աղախիճները» թատերախաղին մէջ հեղինակը ինքզինք կ'ազատագրէ բոնտային աշխարհի մը նեղ սահմաններէն եւ հանդիտատեղը կամ բնթերցողը կ'առաջնորդէ աւելի խորերը «Հայելիներու սրահ»ի մը, որ կը կազմէ նոյնինքն իր թատրոնին էութիւնը:

Իր ստեղծած հայելիներու սրահով՝ Ժընէ կը փորձէ բացատրել անհատ-ընկերութիւն բախումը, որ կը կազմէ անհեթեթի թատրոնին թեման: Արդարեւ, հայելիապատ սրահէն ներս գտնուող անձը ընկերութեան կողմէ մերժուած ու ծաղրուած անհատն է, որ հայելիներու անելին մէջ թակարդի բռնուած՝ իր սեփական անձին խեղաթիւրուած անդրադարձներով ինքնաճանաչման փորձի մը կ'ենթարկէ ինքզինք: Բան մը, զոր միշտ հետազննողած է Պէքէթ՝ իր անձին փնտրտութիւնով: Հայելիապատ սրահին գոհը կը փորձէ հաղորդակից դառնալ հայելիներէն անդին գտնուող ամբոխին տրամադրութիւններուն, բայց չի յաջողիր, որովհետեւ ամբոխը, այսինքն՝ ընկերութիւնը, կողտորէն ապակիին միւս կողմը կը մնայ:

«Հայելիներու սրահ»ին այս խորհրդուտը պատկերը, որ Ժընէի ստորագրութիւնը կրող իւրաքանչիւր թատերգութեան մէջ կը յայտնակերպուի իր առարկայական կամ քննական երեսներով, յատկապէս կը բանաձեւէ անհեթեթի թատրոնին պահանջները, աւելով անոր ժընէյեան ոճով մեկնաբանուած որակ մը:

Փրնէի ստորագրած իւրաքանչիւր թատերախաղի մէջ կայ այս հողեւորականը, որ երազային կացութիւններ կը ստեղծէ ու ծնունդ կու տայ երազանքներու: Ընդդ այս պատճառով՝ անոր ստեղծած տիպարները տիպարներ չեն, այլ պարզապէս խորհուրդներ բացատրելու միջոցներ են, խորհրդանիշներ բլլալու կոչուած անձեր:

«Աղախիմներ» գործին տիպարներէն Տիկինը կը պատկանի ազնուական դասուն: Ան իր սիրահարին՝ Պարոնին փութքին ցուցումն է, այն Պարոնին, որ ամբողջ թատերախաղին տեսողութեան բնաւ պիտի չներելի բեմին վրայ:

Նոյնպէս, երկու աղախիմները՝ Սոլանտ եւ Քլէր, կ'ապրին սէր-աստուածութեան պահեր, ըլլալով մէկը միւսին հայելին, ցուցնելով իրարու իրական պատկերը: Երբ Տիկինին բացակայութեան միջոցին Քլէր անոր մասը կը խաղայ, կ'ըսէ իր քրոջ Սոլանտին. «Հայելիի մը խորքէն դիտելու իմ պատկերս դիտելէն հիւանդ դարձած եմ՝ գարշահոտութեամ մը պէս»:

Քլէր սպասուհին, այսինքն՝ բուն Սոլանտը, խորհրդանիշն է հոս աղախիմներու ամբողջ դասուն, որ ապահով տէրերու խորտակուած անգրադարձն է եւ դոր իրենք՝ աղախիմները, կը պաշտեն, կը կապկեն եւ որմէ կը զղուին:

Անհետքի թատրոնին վարպետները Երբեմն մէկ տիպարին մէջ ձուլած կ'ըլլան երկու հակադիր ձգտումներ: Օրինակ, «Աղախիմներ» թատերգութեան մէջ Քլէր կ'ապրի հալածողի եւ հալածուելի առարկայ դառնալու իրարմեք եւ իրարու հակադրուող կացութիւնները: Անիկա կը մատնուի այս առաջին կացութեան, մինչ տարուած է Տիկինը ըլլալու յաճախանքով, թէեւ չի դադարի հալածուողի կացութիւնը ապրելէ այնքան ասան, որ դատաւարաւորուած է աղախիմ մնալու:

Այս կացութիւնը տիպարները կ'առաջնորդէ անելի մը, որմէ գուրս էլ չիլու լուծումը չի տրուիր, որովհետեւ գոյութիւն չունի: Ատիկա պատճառ կը դառնայ այդ տիպարներուն խորտակման:

Նոյն պատճառներով է, որ «Աղախիմներ»ու Քլէրը գիտակցաբար կը խմէ իրեն հրածցուած թունաւորուած թէյը, ու կը մեռնի Տիկինին դերին մէջ:

Երկու աղախիմները դաւ մը սարքած էին՝ ծառանալով տէրերու բռնատիրութեան դէմ: Անոնք անստորադիր նամակներ դրկած էին ուստիկանութեան, ամբաստանելով Տիկինին սիրահարը: Հիմա, որ Պարոնին անմեղ ըլլալը հաստատուած է, եւ արձակուած՝ բանտէն, Տիկինը, բնականաբար, տուն դարձին պիտի պատժէ զիրենք:

Այս կարգի անել կացութեան մը մասնուած է նաեւ Աղամովի «Փրոֆեսոր Թարան»ի թարան տիպարը, որ չկարենալով ինքզինք, այսինքն՝ տիպար ու յաջողած փրոֆեսոր Մենարը ըլլալ, կը պայքարի ընկերութեան պարտադրանքներուն դէմ եւ կը մերկանայ: Ան կը մերկանայ ո՛չ թէ անոր համար, որ մանուկները, այսինքն՝ ընկերութիւնը այդպէս տեսած են զինք, այլ՝ որպէսզի կարենայ իրաւութեամբ ապրել փոքր իրականութիւն մը: Այս արտքը կը բացատրուի ինքզինք ըլլալու այն ձգտումով, որ նման է Քլէրին թունաւորուած թէյը գիտակցաբար խմելու արարքին:

Ինչպէս կը տեսնուի, անհետքի թատրոնին մէջ անել կացութիւնները միշտ ալ տիպարներուն ինքնախորտակման պատճառներ կը հանդիսանան: Անելի մթնոլորտը տիրական է նոյնպէս Իոնեսքոյի թատրոնին մէջ:

Որինակ, «Իսար» խաղին երկու գլխուոր տիպարները՝ ուսուցիչն ու աշակերտուհին իրար հասկնալու կարողութենէն պարպուած քառասուն կաջու-թիւն մը կը պարզեն: Թատերախաղին վերջաւորութեան՝ աշակերտուհին զգացած ակռայի ցաւը, որ կ'արգիլէ իրեն դասին հետեւիլ, հետզհետէ կը տարածուի մարմնին միւս մասերուն մէջ եւս, եւ ուսուցիչը կը ստիպուի դա-նակով սպաննել զինք, վերջ տալու համար այդ դժուարութեան:

Պէջէթի պարագային, «Ալլասիւրով Կատոյին» Թատերգութեան գլխա-ւոր գերակատարներէն՝ Վլասովիւն ու Էսթրակոնը կը յանդին իրարմէ ճանճ-րանալու, իրարու հետ զրեթէ շիտուելու եւ իրարու հարցերով չլահազրդը-ւելու դժուարութեան: Այս կացութիւնը ա'յնքան մը կը խորանայ, որ հան-դիսատեսը պահ մը կը տարուի մտածելու, թէ անոնք շուտով պիտի բաժ-նուին իրարմէ, բայց յամառօրէն, մինչեւ խաղին աւարտը, կը մնան միա-սին: Ճիշդ է, որ անոնք կը հակադրուին իրարու, բայց չեն կրնար իրարմէ ձերբազատուիլ, կախում ունին իրարմէ ա'յնքան ատեն, որ երկուքն ալ կը սպասեն Կատոյին:

Իրարմէ շկարհնալ բաժնուելու եւ ատանձին մնալու սարսափէն հա-լածուած ըլլալու այդ յաճախանքն է, որ «Աղախիճճճ»-ու Քլէրն ու Սոյան-ժը, ապրելով հանդերձ սէր-ատելութեան պահեր՝ կը սիրեն զիրար: Անոնց-մէ իւրաքանչիւրը, երբ ինքզինքին համար երազային ճամբորդութիւն մը կը նախատեսէ կաթնովածառին հետ, մինչեւ իսկ մտքին մէջ չի կրնար նկատի չառնել երկրորդին ներկայութիւնը՝ իրեն եթերային այդ ճամբորդութեան ուղեկից:

Ժրնէի Թատրոնը, այսպէսով, իր արտայայտութիւնը կը գտնէ ծիսա-կան արարներու դրսեւորումով: Ասիկա սրբազան ծիսակատարութիւն մըն է, որուն յղացքը իրականութենէն կտրուած գործողութեան մը մոդական կրկնութեամբ բեմ կ'ելլէ, ինչպիսին է նաւային ճամբորդութեան յաճախան-քը, կամ՝ Տիկինը ըլլալու ծիսական արարողութիւնը: Իրականութենէն բո-լորովին կտրուած գործողութեան մը մոդական այս կրկնութիւնը Թատեր-գութիւնը հասկնալու բանալին է, ա'յն բանալին, որով լինելութեան աշ-խարհը գոյութիւն կ'ունենայ միայն կեանքի կարոտախտային յիշատակովը՝ երազի ու երեսակցութեան աշխարհի մը մէջ: Բան մը, որ միշտ ալ զլուց-ւած պիտի ըլլայ յարգալիք ընկերութեան մը կողմէ մերժուած, կրկնակի-րէն սրբացած ու արտաքուստ ընկեցիկին՝ Ժրնէին, կամ՝ իր «Աղախիճճ-Ր»-ու ազախիններուն, կամ՝ Արթիւր Ազամովի «Փրոփեսէօր Թարսն»-ին Թա-րան տիպարին, որ ընա պիտի չկորնենայ ըլլալ իր մտապատկերած փրոֆե-սէօր Մենարը: Կամ, վերջապէս, Իոնեսքոյի «Ճաղատ երգչուհին» գործին երգչուհին, որ ոչ իսկ մէկ երգ պիտի երգէ խաղին ամբողջ տեսողութեան:

Ինչ կը վերաբերի վերոյիշեալ Թատերգութիւններուն նիւթի, թեմայի ու կառույցի հարցերուն, անհեթեթի Թատրոնը տուած է այս բոլորին յտակ պատասխանը: Անիկա կը մերժէ դասական Թատրոնի աւանդութիւնները, նիւթ, թեմա կամ կառույց ունենալու անհրաժեշտութիւնը:

Անհեթեթի Թատրոնին բոլոր կարեւոր գործերուն պէս՝ Ժրնէի «Աղա-խիճճ»-ը Թատերգութիւնը նիւթ, տիպար, կառույց, յարակցութիւն կամ ընկերային ճամբորդութիւն չունի: Ունի սակայն այլ բան մը, որ հոգեբանա-կան ճամբորդութիւնն է: Հարողակցութեան պակասը, հայելիապատ սրահի ապակիները շկարհնալ փչրելու անկարելիութիւնը եւ անոր մէջ մնալով իր սեփական անձին խեղաթիւրուած անդրադարձները գիտելու ահաւորութիւնը

ժընէի թատրոնին կը հայթայթեն անհատին մինակ մնալու եւ ներսուզումի դիմելու հոգեբանական ճշմարտութիւն մը: Ծիշդ ատոր համար է, որ ազախիններուն ծովային ճամբորդութիւնը, որ տեղի պիտի ունենար կոթնափաճառին հետ, ընկերային ոչ մէկ ճշմարտութիւն ունի իր հոտին, որովհետեւ կաթնափաճառը իրենցմէ ունէ մէկուն այցի չէ եկած գիշեր ասնն:

Ժընէի թատրոնը լուծումներ չ'առաջարկեր, անիկա հապիւ կացութիւն մը կը պարզէ: Ո՛չ տիպարի զարգացում կայ հոն, ո՛չ թեմա, ոչ ալ կոտորոց: Հոն ներկայացուող դէպքերը կամ արտասանուող բառերը պէտք չէ դիտել կամ ըմբռնել իրենց առարկայական առումով, այլ պէտք է դիմել բնազանցականին, որովհետեւ այդ դէպքերուն ու բառերուն հոտին կացութիւններ պրուած են:

Անհեթեթի թատրոնը միշտ կ'աւարտի թնճուկով մը, կամ աննյով մը: Դերակատարները իրենց կացութիւնները լուծել չկարենալով, երբեմն իրենք հարցումներ կ'ուղղեն հանդիսատեսին: Այսպէսով, հանդիսատեսը պէտք է պիտակցի, թէ ինք անմասն չի կրնար մնալ բեմին վրայ գտնուող անմին կացութիւնէն, եւ պէտք է ընդունի, որ ինք ալ նոյն կացութեան մէջ է կամ կըրնայ ըլլալ որեւէ օր:

Որով՝ ժընէյան ոճով ներկայացուած անհեթեթի թատերգութիւն մը իր աւարտին կը փոխանցէ կացութիւն մը, որ հանդիսատեսին մէջ կը գոյատևէ իրբն հոգեբանական ճշմարտութեան մը յայտարարութիւնը:

ԷԼՑ ՍԱՐԱՃԵԱՆ



ժ Ա Ն ժ Ը Ն Է

«Ա Ղ Ա Խ Ի Ն Ն Ե Ր Ը»



ՏԻՊԱՐՆԵՐ

ՍՈՒԱՆԺ ԵՒ ՔԼԷՐ.— Երկու աղախիններ: Անոնք բոլորք են եւ կը գտնուին
30էն 35 տարեկանի միջեւ: Առլանձ աւելի մեծ է տարիքով:
ՏԻՎԻՆԸ.— Իրենց տիրուին: Հուրջ 25 տարեկան:

Տիկիհին մնջասեմեալը: Կա-
հաւարում՝ Լուի ժԵ. ոմով:
Մեմեակիմ պատուեանը կը
բացուի հանդիպակաց տան
վրայ: Աջիմ՝ անկողին մը:
Չախիմ՝ դուռ մը եւ արդու-
զարդի սեղան: Առատ ծաղիկ-
ներ: Որեկոյ է:

(Քլէր, գոգնոց մը հագած՝
կանգնած է արդուզարդի սե-
ղանին կռքեմ: Իր շարժու-
մեւերը բազկատարած եւ ձայ-
նին շեշտը ծայրայեղօրէն ոգ-
նըրգակամ են):

ՔԼԷՐ.— Այդ ձեռնոցները: Այդ յաւի-
տենական ձեռնոցները: Յաճախ ը-
սած եմ զեզի ու կը կրկնեմ. ձեզ՝
զանոնք խոհանոց: Հաւանաբար կը
յուրասս կաթնավաճառը հմայել ա-

տոնցմով: Ո՛չ, ո՛չ, մի ոտեր, ատի-
կա տեղ մը պիտի չհասցնէ զեզ: Կա-
խիհին վրայ անցուր զանոնք: Ե՞րբ
պիտի հասկնաս, թէ պէտք է՞ ազ-
տուակ սենեակը: Ամէն բան, այո,
ամէն ինչ որ խոհանոցէն կու գայ
ա՛ղտ է: Հետեւաբար վե՛րջ տուր
այդ բոլորին: (Այս խօսակցութեան
ընթացքին, Սոլանձ գրազուած կը
մնայ գոյգ մը քառչուկէ ձեռնոցնե-
րով եւ կը դիտէ իր ձեռնոց անցու-
ցած ձեռքերը, որոնք փոխն ի փոխ
կը բացուին հովահարի մը մտան ա-
կը ծալուին ինչպէս ծաղկեփունջ
մը): Ինքզինքդ տանդ մէջ զգայ:
Յարգարուէ սիրամարդի մը պէս:
Եւ ամէն բանէ առաջ՝ մի՛ աճապու-
րեր, մենք շատ ժամանակ ունինք,
դնա՛:

(Սոլանձին կեցուածքը կը
փոխուի.— կը ձգէ սենեակը

խոնարհորէն, մատնելուն ծայրովը բռնելով բառչուկէ՝ ձեռնացնէր: Քլէր կը նստի արդուգարդի սեղանին առջև: Ան կը հասարակ ծաղիկները, կը սահեցնէ ձեռքը արդուգարդի առարկաներուն վրայէն, կը վրձնէ մագերը, կը շարքէ երեսը:

Հագուստներս պատրաստէ՛: Արա՛ւ: Ժամանակը կարճ է: Հո՞ս ես: (Շուրջանակի կը դառնայ) Քլէ՛ր: Քլէ՛ր: (Սուրբ մերս կը մտնէ):

ՍՈՒԱՆԺ.— Տիկինը ներողամիտ կ'ըլլայ: Իր քայր կը պատրաստէ: (Քայր եւ ոչ թէ քէջը):

ՔԼԷՐ.— Դուքս հանէ ու պատրաստէ իմ իրեղէններս: Զերմակ փայլուն հագուստը: Հովահարը: Զմուռնունքը:

ՍՈՒԱՆԺ.— Ետտ բարի, Տիկին, Տիկին: Դուք զոհարեղէնները:

ՔԼԷՐ.— Դուքս հանէ բոլորը եւ ես պիտի ընտրեմ: Եւ, անշուշտ, չես մոռնար կաշիէ մուշակներս: Անոնք, որոնց երկար առնէ ի վեր աչք տրեկած ես: (Սուրբ զարակէն կը հանէ գոլարեղէնի քանի մը տափեր, կը բաճայ գանձի եւ կը փռէ մահճանակալին վրայ): Պահիր համար են առնք, կասկած չկայ: Ընդունէ որ ան հրապուրեց քեզ: Անդամ մը նայէ դուն քեզի: Արքան մեծ ես դուն: Ընդունէ այդ մէկը: (Սուրբ կը կկրի կարպետին վրայ, կը քֆնէ կաշիէ կոշիկներուն եւ կը փայլեցնէ գունոնք): Ըստ եմ քեզի, Քլէր, առանց քուէ: Զքէ որ մէջը մարի առիկա, դուստր, մոտցիր այդ մէկը: Ա՛հ: Ա՛հ: (Ջղայնորէն կը քրքրայ): Քոզ կորուսած ճամբորդը խեղճուի անոր մէջ: Ա՛հ: Ա՛հ: Պէտքի ես դուն: Մտեցիր եւ ինքզինքդ դիտէ իմ կոշիկներուս մէջ: Կը կարծես որ հանելի է ինձի գիտնալ, թէ իմ ստաքս կը ծածկուի քու լորձունքիդ քողերով: Կամ քու մորուսներուդ մը շուշերով:

ՍՈՒԱՆԺ (ծուկի եւ շատ խոնարհ) —

Կ'ուզեմ որ Տիկինը սիրուն ըլլայ: ՔԼԷՐ.— Պիտի ըլլամ: (Ան կը մտնեայ հայելիին): Կ'ատեն զիս, այնպէս չէ՞: Կը ճշմեա զիս քու բծախնդրութեամբդ ու հեղութեամբդ: Ենչա՛հեղձ կ'ընեն զիս թրաշուշանով ու միմոպայով: (Ոտքի կ'ելլէ, ցած ցընելով իր ծայրին քոնը): Ետտ մը ծագիկներ կան: Սենեակը անշուշտէն խոնարհորէն վերածուած է: Այս մէկը անկարելի է: (Կրկին ինքզինքը կը դիտէ): Սիրուն պիտի ըլլամ: Աւելի սիրուն քան դուն որեւէ ասան կրնաս ըլլալ: Նման զէմքով ու մարմնով մը, բնաւ պիտի չյարձուի հմայել Մարիան: (Փոխելով ողորդական քոնը): Միծաղելի երիտասարդ կաթնովաճառ մը կ'արհամարհէ մեզ, եւ եթէ մենք զուսկ մը ունենանք իրմէ...

ՍՈՒԱՆԺ.— Օ՛հ: Ես երբեք...

ՔԼԷՐ (վերակաշիւով).— Հանդարտէ, անմիտ: Հագուստս:

ՍՈՒԱՆԺ (կը նայի զարակին մէջ, մէկ կողմ երեղով քանի մը հագուստներ).— Կարմիր հագուստը Տիկինը կարմիր հագուստ պիտի հագնի:

ՔԼԷՐ.— Զերմակ հագուստը ըսի, փայլ-փրլուն հագուստը:

ՍՈՒԱՆԺ (հաստատորէն).— Կը ցուրտ: Տիկինը ծերանի թաւիչ հագուստը պիտի հագնի այս իրիկուն:

ՔԼԷՐ (սխալմտորէն).— Ա՛հ: Եւ ինչո՞ւ:

ՍՈՒԱՆԺ (ցրտաբեամբ).— Անկարելի է մոռնալ Տիկինին կուրծքը՝ թաւիչ ծալքերուն տակ: Եւ սեւ սաթէ պրորը, երբ Տիկինը կը հասաչէր եւ կը խօսէր Պարոնին՝ իմ գոհողութիւններու մասին: Այրիութիւնդ իրաւի կը պահանջէ, որ ամբողջովին սեւերու մէջ ըլլաս:

ՔԼԷՐ.— Ի՛նչ:

ՍՈՒԱՆԺ.— Պէտք ունի՞մ անելին ըսելու: Իստ մը անելի իմաստուն...

ՔԼԷՐ.— Ա՛հ: Աւրեմ խօսիլ կ'ուզես... շատ աղէկ: Կը սպաննաս ինձի: Կ'ա-

նարգես տիրուհիդ, Սուրճիկ : Կ'ուզես խօսիլ Պարոնին զժրատութիւններուն մասին, այնպէս չէ՞ : Ան՝ միտ : Ասիկա ամէնէն անյարժար վայրկեանն է զինք քննադատելու, այսուհանդերձ կրնամ հարցը վերածել լաւ զէնքի մը : Կը ժպտի՞ս : Կը կասկածի՞ս :

ՍՈՒԱՆԺ. — Ժամանակը հասած չէ տակաւին հարցը երեւան հանելու...

ՔԼԷՐ. — Ի՞նչ բառ : Վարկարեկութիւնն : Վարկարեկութիւնն : Երեւան հանե՛լ...

ՍՈՒԱՆԺ. — Տիկի՛ն :

ՔԼԷՐ. — Գթութեանդ ենթակա՞յ պիտի ըլլամ՞ Պարոնը ոստիկանութեան յանձնած ըլլալուս, կամ զինք ծախած ըլլալուս համար : Եւ դեռ ասոնք շատ աւելի վատ կամ լաւ արտք մը դորձած եմ : Կը խորհիս, թէ չե՞մ տուտապած : Քիչը, ինքզինքիս պարտազրեցի գրել այն նամակը — առանց ուղղադրական կամ շարադրական սխալներու, առանց յապատումներու — այն նամակը, որ սիրահարս քանտ առաջորդեց :

Եւ դուն, փոխանակ զօրավիդ կանգնելու ինձի, կը հեղձես զիս : Քու տեսակէտներդ կը պարտադրես ինձի : Կը խօսիս այլրութեան մասին : Ան մեռած չէ : Քիչը, Պարոնը պիտի փոխադրուի մէկ բանտէն միւսը, թե՛րեւս նոյնիսկ Սասանային Կղզին, ուր ես՝ իր տիրուհին, կ'սկիծէս խենթութեան զենիթին հոսած՝ պիտի հետեւի՞մ իրեն : Ես փոխադրութեան մէջ պիտի գտնուիմ : Իրեն հետ պիտի բաժնեմ իր փառքը : Կը խօսիս այլրութեան մասին ու կը զլանտս ինձի ճերմակ հազուատը — թաղուհիներու սուղի ղղեստը : Չես անդրադարձած ատոր, Քիչը...

ՍՈՒԱՆԺ (ցրտաթեամբ) — Տիկիներ պիտի հաչնի կարմիր հագուստը :

ՔԼԷՐ (պարզօրէն) — Ազիկ : (Խոտաւոր-բամբ) Ինձի տուր հագուստը : Ծ'հ : Ես այնքան միանկ եմ եւ անբարեկամ : Աչքերուդ մէջ կը կար-

դամ, որ կը զգուիս ինձմէ : Չես մըտահողուիր, որ ինչ կը պատահի ինձի հետ :

ՍՈՒԱՆԺ. — Պիտի հետեւիմ քեզի ամէն տեղ : Կը սիրեմ քեզ :

ՔԼԷՐ. — Կը սիրես զիս այնպէս՞ ինչպէս կը սիրեն տիրուհի մը : Կը սիրես ու կը յարգես զիս : Եւ կտակ մը կ'ազնկալես, յետմահու կտակ մը է նըպատ քեզի...

ՍՈՒԱՆԺ (հեզմակամ սեռով մը) . — Գիտեմ : Կրակին մէջէն ալ կ'անցնիս ինձի համար : (Սոյանժ կ'օգնէ Քլէրին, որ հագնի իր հագուստը) : Ամբողջութեամբ զայն : Դատ ուսում մի քաշեր : Մի փորձեր կայել զիս : (Սոյանժ ծռակի կու գայ Քլէրին քոտերում մտնել կը շտկէ հագուստին մալէրը) : Զղուշացիք ճանկիլէ զիս : Կը հատիտ անասունի մը պէս : Այդ հոտերը կը բերես տիմար ու ազտեղի խուցէ մը, ուր ծռռաններ այցելութեան կու դան մեղի զիչը ատեն : Աղախինին սենեակը : Ձեզնայարիք : (Մտորհալիօրէն) Քիչը, եթէ ես կը խօսիմ ձեզ-անյարկերու հոտին մասին, ատիկա պարզապէս յիշատակի մը սիրոյն է : Եւ այն զոյգ անկողիններուն մասին, ուր երկու քոյրեր կը քնանան, մէկը միւսը ըղձարով : Հոն (անիկա կ'ետ մը կը մատնանշէ սենեակին մէջ) հոն, երկաթէ երկու մահաճակատները եւ իրենց միջեւ գտնուող զիչերային սեղանը : Հոն (ան դիմացը գտնուող կ'ետ մը կը մատնանշէ), մայրիք փայտէ պատրաստուած հանդերձակալը Սուրբ Կոյսին խորանով : Ճիշդ է, այնպէս չէ՞ :

ՍՈՒԱՆԺ. — Մենք այնքա՞ն տպերջանիկ ենք : Կրնամ նոյնիսկ լալ : Եթէ շարունակես...

ՔԼԷՐ. — Ինչ որ կ'ըսեմ ճիշդ է, այնպէս չէ՞ : Մոռանք քու ծնրագիր աղօթքներդ : Նոյնիսկ պիտի չյիշատակեմ թուղթէ ծաղիկները... (Կը խօսուի) : Թուղթէ ծաղիկները : Եւ ոստ մը՝ սրբազան տապանէն : (Ան սենեակին մէջ գտնուող ծաղիկները կը մատնա-

նշէ): Անգամ մը նայէ, այս ծաղիկները կը բացուին ի պատիւ ինծի: Քլէր, ես աւելի սիրուն Սուբր Կոյս մը չե՞մ:

ՍՈՒԱՆԺ (կարծե՛ք պաշտամունքի մէջ ե- ղած ըլլայ) — Հանդարտէ...

Քլէր — Եւ հոն (ուն շատ քարճր կէտ մը կը մտածանշէ պատուահանին մօտ), այդ հոգեւորները երկնային լոյսը, ուրկէ կիսամերկ կաթնամանար կը ցատկէ քու անկողինդ:

ՍՈՒԱՆԺ — Տիկինը մոռնալու վրայ է ինքզինք. Տիկին...

Քլէր — Հապա քու ձեռքերդ: Դուն մի մոռնար քու ձեռքերդ: Ես յաճախ փսփոսցած եմ, թէ ասոնք կը խառնեն կոյուղին:

ՍՈՒԱՆԺ — Փէշր:

Քլէր — Է՞հ:

ՍՈՒԱՆԺ (շտկելով հագուստը Քլերի կռն- քիմ վրայ) — Հողուտարդ փէշր: Ենորհք մը ընելու համար կը շոկեմ փէշը:

Քլէր — Կորուէ՛, անճարակ: (Կից մը կը գարնէ Սոլամիի տունքին, Լուի Ժե.ի իր կրունկով: Սոլամի, որ ծուկնի հկած է, կ'երեքայ եւ հտեւ կ'իյնայ):

ՍՈՒԱՆԺ — Օ՛հ: Ես անճարա՞կ մը:

Քլէր — Անճարակ քոի, եւ եթէ ճգնգալ կ'ուզես՝ դիմ քու խուցը եւ աղատ դրաց ինքզինքդ: Հոս, իմ ննջասեն- ակիս մէջ, միայն ազնուական ար- ցունքներու կը հանդուրժեմ: Պիտի դայ ժամանակ մը, երբ հաղուտիս փէշերը պիտի դարդարուին անոնց- մով, բայց ասոնք թանկարժէք ար- ցունքներ պիտի ըլլան: Կարգի ղիբ փէշս, ապո՛ւշ:

ՍՈՒԱՆԺ (յափշտակուած) — Տիկինը տարուելու վրայ է:

Քլէր — Սասանայէն: Ան կը փոխադրէ գիս իբ բուրումնաւէտ բազուկներուն մէջ: Կը բարձրացնէ վեք, գետնէն կը կտրուի՛մ, չկամ... (Կրունկով կը հարուածէ գետինը): Ետեւ կը մը- նամ: Մանեակս բեր: Բայց անապա-

րէ, ժամանակ պիտի շունենանք: Ե- թէ հագուտը շատ երկար է՝ ծալք մը շինէ՛ սպահով գնդասեղներով: (Սոլամի ոտքի կ'ելլէ եւ կ'երթայ մանեակը քերելու, բայց Քլեր իրմէ առաջ կը հասնի եւ կը բռնէ գոնա- քեղեցնէրու տուփը: Անոր մտտները կը սկստեն Սոլամիի մտտները, որ կ'ընկրկի սարսափահար): Ձեռքերդ հեռո՛ւ պահէ՛ ձեռքերէս: Ձեմ կրնար տանել հպու՛մդ: Աճապարէ՛:

ՍՈՒԱՆԺ — Հարկ չկայ չափազանցելու: Աչքերդ կը բոցավառին:

Քլէր (ցնցուած գարմացումով) — Ի՞նչ ըսիր:

ՍՈՒԱՆԺ — Սահմաններ, արդելքներ, Տիկին: Սահմանդրուիները հա- մաճայնութիւններ չեն, այլ՝ օրէնք- ներ: Հոս՝ իմ կալուածս, հոն՝ քու ափը...

Քլէր — Ի՞նչ լեզու, սիրելի՛ս: Քլէր, ը- սել կ'ուզես, թէ ես արդէն անցած եմ ծովերը: Երեւակայութեանդ աղ- խուր աքտորով՝ յը կ'ընծայես ին- ծի: Վրէժ կը լուծես, այնպէս չէ՛: Կը դրաս, թէ պիտի դայ ժամանակը, երբ այլեւս ոչ մէկ աղախին...

ՍՈՒԱՆԺ — Ուղղակի ներաշխարհիս կը թափանցես: Կը դուշակես իմ մտա- ծումներս:

Քլէր (հետզհետէ վերացած) — Պիտի դայ ժամանակը, երբ այլեւս դուն աղախին մը պիտի չմնաս, վրէժ- խընդրութիւնը ինքը պիտի ըլլաս, բայց, Քլէր, մի մոռնար, — մտիկ կ'ընե՞ս, — մի մոռնար, աղախինը ինքն էր, որ երկնից վրէժխնդրու- թեան ուրուագիծը, եւ ես — Քլէր, մտիկ չես բներ:

ՍՈՒԱՆԺ (անուշադիր) — Մտիկ կ'ընեմ:

Քլէր — Եւ իմ մէջ կը կրեմ հաւասա- րապէս թէ՛ վրէժխնդրութիւնը եւ թէ աղախինը եւ կ'ընծայեմ իրենց տոիթ մը կեանքի, առիթ մը փրկու- թեան: Քլէր, տիրուհի մը ըլլալը բնւ մըն է, ծայրայեղօրէն ցաւցնող բան մը, կրել տուելութեան բոլոր ա-

կերբ, ըլլալ այն աղբակոյտը, որուն վրայ հասակ կը նետուս: Ամէն օր զիս մերկ կ'ուզես տեսնել: Ես գեղեցիկ եմ, այնպէս չէ՞: Եւ իմ սիրոյն կատաղութիւնը առաւել կը գեղեցկացնէ զիս, բայց դուն գաղափար չունիս, թէ որքան ուժի կը կարօտիմ:

ՍՈՒԱՆԺ (անարգակամ) — Սիրահարդ: **ՔԼԵՐ** — Իմ ապերջանիկ սիրահարս կ'աւսնէ իմ աղետականութիւնս: Այո՛: Այո՛, զաւակս: Այն ամէնը, որ պիտի գիտնաս՝ իսկապէս քու ստորնութիւնդ է:

ՍՈՒԱՆԺ — Կրնայ ըլլալ: Հիմա անպարէ: Պատրաստ ես:

ՔԼԵՐ — Իսկ դո՛ւն:

ՍՈՒԱՆԺ (տնիտ հանդերձարան կ'երթայ) — Ես պատրաստ եմ: Յոգնած եմ այլեւս զգուսնքի առարկայ մը ըլլալէ: Կ'ատեմ նաեւ քեզ: Կը զգուսնէ քեզմէ: Կ'ատեմ քու բուրմէնաւէտ կուրծքը: Քու... փղոսկրեայ կուրծքը: Քու... ռոպիայ բուրմէնըդ: Քու... սաքէ ստրեքը: Կ'ատեմ քեզ: (Կը թփնէ կարմիր հագուստին վրայ):

ՔԼԵՐ (անարեկ) — Օ՛հ... օ՛հ... բայց...

ՍՈՒԱՆԺ (խալիով ամօր քաղաքի մէջ) — Այո՛, իմ հպարտ գեղեցկութիւնս: Կը խորհիս, թէ միշտ կրնաս ընել այնպէս՝ ինչպէս կը ցանկաս: Կը խորհիս, թէ յաւիտենապէս կրնաս զրկել զիս երկնքի գեղեցկութենէն, տակաւին՝ կրնաս քնտրել քու անուշահոտութիւններդ եւ բռնափողկոտներդ, քու եղունգի ներկը եւ մետաքսեայ ու բեհեզէ շաւլըդ, եւ զրկել զիս այդ բոլորէն: Կը խորհիս նաեւ կորզել կաթնազանառը ինձմէ: Ընդունէ ասիկա: Ընդունէ կաթնազանառին պարագան: Անոր երիտասարդութիւնը եւ կորուրդ կը հմայեն քեզ, այնպէս չէ՞: Ինչ կ'ըսեմ քեզի կաթնազանառին մասին, ընդունէ: Այն ատեն, Սոլանժ կ'ըսէ, դժոխքի կէր դառնաս:

ՔԼԵՐ (վախէն դողաւար) — Քլէ՛ր, Քլէ՛ր:

ՍՈՒԱՆԺ — Է՛հ:

ՔԼԵՐ (մրմնալով) — Քլէ՛ր, Սոլանժ, Քլէ՛ր:

ՍՈՒԱՆԺ — Ա՛հ: Այո՛, Քլէ՛ր, Քլէ՛րը կ'ըսէ, դժոխքի կէր դառնաս: Քլէ՛րը հոս է, առաւել շարժուցիչ քան երբեք: Կենսազուարթ: (Անիկա կ'ապտակէ Քլէ՛րը):

ՔԼԵՐ — Օ՛հ... օ՛հ... Քլէ՛ր... Դուն... Օ՛հ:

ՍՈՒԱՆԺ — Տիկինը կը կործէր, թէ ինք պաշտպանուած էր ծաղիկներու իր պատեկչով, աղատադրուած՝ շատ մանայատուկ ճակատադրով մը, զո՛ւղտութեամբ մը: Բայց հոն նկատի առնուած չէր աղախինի ազատամարտիկները: Տեղի մի տար անոր զայրոյթին, Տիկին: Ան փոս կը փորէ քու նուրբ արկածախնդրութեանդ առջեւ: Քու Պարտիզ պարտապէս դող մըն էր, եւ դուն...

ՔԼԵՐ — Կ'արդիւնք քեզի: Վե՛րջ տուր անպարկեշտութեանդ:

ՍՈՒԱՆԺ — Տրտա՛: Ան կ'արդիւնք ինձի: Տիկինն է, որ շփոթի մէջ է: Անոր դէմքը ամբողջովին կծկուած է: Պիտի ուզէ՞ր հայելի մը ունենալ: Ահաւաստիկ: (Ան հայելի մը կու տայ Քլէ՛րին):

ՔԼԵՐ (զոհու ճակոթեամբ դիտելով ինքզինք) — Ես կը տեսնեմ ապտակի մը նշանները: Բայց հիմա աւելի գեղեցիկ եմ քան երբեք:

ՍՈՒԱՆԺ — Այո՛, ապտակ մը:

ՔԼԵՐ — Վտանգը իմ լուսապահս է, Քլէ՛ր, եւ դուն, դուն կը քնակիս խաւարի մէջ...

ՍՈՒԱՆԺ — Բայց խաւարը վտանգաւոր է, գիտեմ: Այդ բոլորը լուծ եմ նախապէս: Դէմքէդ կրնամ ըսել, թէ ինչ պատասխան կ'անկրայես: Հեռաւարար պիտի վերջացնեմ: Հիմա, հոս կան երկու աղախիններ, հաւատարիմ աղախիններ: Անոնք կեցած են դէմդ: Արհամարհէ դառնաք: Ե-

րեւցիբ աւելի գեղեցիկ: Այլեւս չենք վախնար քեզմէ: Ընկղմած ենք, մխրճուած մեր երեւակայութեանց մէջ, մեր կերութեամբերուն մէջ, քեզի դէմ ունեցած մեր ատելութեան մէջ: Կարգապարը կը կազմուի: Կը ձեւաւորուինք: Տիկի՛ն: Մի խնդար — ա՛հ: Ամէնէն առաջ, մի՛ փոքրիկը իմ ճամբարտակութեանս...

ՔԼԷՐ.— Դո՛ւքս ել:

ՍՈՒԱՆԺ.— Բայց պարզապէս Տիկինին աւելի ծառայած ըլլալու համար: Ես կը վերադառնամ իմ խոհանոցիս, ես՝ իմ ձեռնոցներուս եւ ակոսանքուս հոտին: Իմ յորդող կոյուղիիս: Դուն քու ծաղիկներդ ունիս, ես՝ իմ կոյուղիս: Ես աղախինն եմ: Առնըւազն չես կրնար ապահանել զիս: Բայց: Բայց... (Ան կը յառաջանայ դէպի Քլէրը, սպասնայով): Բայց մեկնումէս առաջ, պիտի վերջացնեմ զործը: (Յանկարծ զարթուցիչ մը կը հնչէ: Սոյաճի կամոց կ'առնէ: Ելիւս դերասանուհիները, զերգրուած վիճակի մը մատնուած՝ կը վազեն միասնաբար: Անոնք իրարու կը փաթթաւիճ ու մտիկ կ'ընեն): Արդէ՞ն:

ՔԼԷՐ.— Աճապարենք: Տիկինը պիտի վերադառնայ: (Ան կը սկսի քակել հագուստը): Օղնէ ինծի: Ամէն բան վերջացած է արդէն: Դուն չկրցար հասնիլ վախճանին:

ՍՈՒԱՆԺ (օգնելով անը: Եւ ծայնի տըխուր բռնով մը).— Նոյն բանը կը պատահի ամէն անգամ: Ատիկա ամբողջութեամբ քու սխալը է, կարելի չէ հետզ գործ մը ընել, դուն բնաւ պատրաստ չես եղած:

ՔԼԷՐ.— Մենք շատ ժամանակ կը կորսնցնենք նախապատրաստական աշխատանքներով: Բայց տակաւին ունինք...

ՍՈՒԱՆԺ (մինչ ան կ'օգնէր Քլէրին հանդիտու անը հագուստը).— Պատուհանին կողմը նայէ:

ՔԼԷՐ.— Տակաւին կարճ ժամանակ մը ունինք: Այնպէս մը լարած էի ժացոյցը, որ կարենայինք ամէն ինչ դասաւորել: (Ան ուժասպաս կ'իյնայ բազկաթոռի մը վէջ):

ՍՈՒԱՆԺ (ագնուութեամբ).— Օղը շատ ճնշիչ է այս իրիկուն: Արդէն ամբողջ օրը ճնշիչ էր:

ՔԼԷՐ (ագնուորէն).— Այո:

ՍՈՒԱՆԺ.— Ատիկա՞ է որ կը սպաննէ մեզ, Քլէ՛ր:

ՔԼԷՐ.— Այո:

ՍՈՒԱՆԺ.— Ճիշդ ժամանակն է հիմա:

ՔԼԷՐ.— Այո: (Ոտքի կ'ելլէ սպասած): Կ'երթամ թէյը պատրաստելու:

ՍՈՒԱՆԺ.— Պատուհանին կողմը նայէ:

ՔԼԷՐ.— Դեռ ժամանակ կայ: (Ան կը սրբէ իր դէմքը):

ՍՈՒԱՆԺ.— Դեռ դուն քեզ կը դիտես...

ՔԼԷՐ, սիրելիս...

ՔԼԷՐ.— Առանձին ձգէ զիս, սպասած եմ:

ՍՈՒԱՆԺ (խօսուածութեամբ).— Նայէ պատուհանին: Ենթահակ է, ամբողջ սենեակը խառնաշփոթութեան մէջ է նորէն: Եւ պէտք է որ կարեմ Տիկինին վերաբերուին: (Ենչուակի կը նայի իր քրոջը): Լաւ, ի՞նչ ունիս: Ինծի պէս կրնաս ըլլալ հիմա: Ինքզինքդ վերադարձիր: Արազ, Քլէ՛ր, իմ քրոս եղիբ նորէն:

ՔԼԷՐ.— Վերջացած եմ: Այդ լոյսը կը սպաննէ զիս: Կը խորհիս, որ դիմացի մարդիկը...

ՍՈՒԱՆԺ.— Որո՛ւ հոգր: Մեզմէ չես ազնկալիբ որ... (Անիկա կը տատանուի) մութին մէջ, կարգի դնենք առարկաները: Հանդիչ քիչ մը: Փակէ աչքերդ: Փակէ աչքերդ, Քլէր:

ՔԼԷՐ (Ան կը հագնի իր սև հագուստը).— Օ՛հ, սպասած եմ բռնի՛ պարզապէս բռնու ձեւ մըն է: Ինծի դիմաւոր համար մի՛ օգտագործեր ատիկա: Դարդէ՛ վրաս իշխել փորձել է: ...

ՍՈՒԱՆԺ.— Երբիք փորձած չեմ իշխանութիւն բանեցնել վրադ: Պարզապէս կ'ուզեմ, որ Հանդիտա ընես: Այդպէս սո՞վ աւելի օգնած պիտի ըլլաս ինձի:

ՔԼԷՐ.— Կր Հասկնամ: Մի՛ բացատրեր:

ՍՈՒԱՆԺ.— Այո՛, պիտի բացատրեմ: Դուն էիր, որ սկսար այդ մէկըն: Երբ յիշեցիր կաթնալմանաւը: Կը խորհիս, թէ չէի՞ կրնար թափանցել այն բանին, որուն կը ձգտէիր: Եթէ Մարին...

ՔԼԷՐ.— Օ՛հ:

ՍՈՒԱՆԺ.— Եթէ կաթնալմանաւը անպատկառ բաներ կ'ընէ ինձի, նոյնը կ'ընէ նաեւ քեզի: Բայց դուն կը սիրես խառնշուկել...

ՔԼԷՐ (քօթաւիղով իր ուսերը).— Աւելի լաւ կ'ըլլայ ստուգելով, որ ամէն ինչ կարգի դրուած է: Նայէ՛, քարտուղարութեան բանալին այսպէս էր (Ան քանալիմ կը պատրաստէ) եւ, ինչպէս Պարոնը կ'ընէ...

ՍՈՒԱՆԺ (քրտօրէն).— Կր սիրես շփոթել քեզի ուղղուած նախատինքները...

ՔԼԷՐ.— Թէ՛ ան աղախիններուն մաղերը կը նախընտրէ շահաբաժնեբէն եւ վարդերէն:

ՍՈՒԱՆԺ.— Եւ մեր սեփական կեանքին հետ կապ ունեցող բաները...

ՔԼԷՐ.— Ի՞նչ, ի՞նչ, ինչո՞վ, ըսէ՛: Անունը տուր անոր: Արարողութի՛ւնը: Արդէն վիճարանելու ժամանակ շունինք հիմա: Պիտի վերադառնայ ետ, ետ: Բայց, Սոյսնձ, այդ անգամ մենք նուաճեցինք զինք: Կը նախանձիմ քեզի: Որքա՛ն պիտի փափաքէի տեսած ըլլալ իր գէմքին արտաշայտութիւնը, երբ կ'իմանար իր սիրահարին ձերբակալութեան լուրը: Կեանքիս ընթացքին մէկ անգամ միայն լաւ գործ մը ըրած եմ: Պէտք է ընդունիս ատիկա: Եթէ ինձի Համար չըլլար, եթէ իմ անտորադիր նամակը չըլլար, դուն կ'որսնցուցած պիտի ըլլայիր գեղեցիկ տեսարան մը, սիրահարին ձեռքերը կապուած, եւ Տիկնը՝ արցունքներու մէջ: Այդ-

քանը բուական էր զինք սպաննելու Համար: Այս առտու, ան գօուարաւ կը յաջողէր սաղի միայն:

ՍՈՒԱՆԺ.— Աղէ՛կ: Ան կ'ընայ ի յնալ ու մեռնիլ: Եւ է՛ս պիտի ըլլամ ժառանգորդը: Որպէսզի այլեւս չստիպուիմ որք դնել տղ յեխած ձեղնայարկէն ներս, այդ երկու յիմարներուն, այդ խոհարարին եւ այդ մատակարարին հետ:

ՔԼԷՐ.— Իսկապէս սիրած եմ մեր ձեղնայարկը:

ՍՈՒԱՆԺ.— Պարզապէս հակասած ըլլալու Համար ինձի: Մի՛ սկսիր զգացական ըլլալ այդ ուղղութեամբ: Կը պէ՞զամ ատկէ եւ կը տեսնեմ զայն այնպէս՝ ինչպէս որ է, մերկ եւ ստոր: Եւ զոտոտ: Բայց ինչո՞ւ խօսինք այդ մասին: Պարզապէս փլըփուր ենք:

ՔԼԷՐ.— Ա՛: Ո՛չ: Մի՛ սկսիր կրկին: Աւելի լաւ կ'ընես նայելով պատուհանին: Ոչ մէկ բան կը տեսնեմ: Շատ մութ է դուրսը:

ՍՈՒԱՆԺ.— Թոյլ տուր, որ խօսիմ: Թոյլ տուր, որ դուրս ձգեմ զայն իմ առօրեայէս: Միտեցի ձեղնայարկը անոր Համար, որ պարզ էր եւ սէտք չունեցայ ձեռակերպութիւն մը ընելու: Վարագոյրներ չկան՝ մէկընք քայելու Համար, չկան գորդեր՝ թօթուելու Համար, չկան կարասիներ՝ աչքովս կամ լաթով մը փափայելու Համար: Ո՛չ մէկ Հայելի, ո՛չ մէկ պատշգամ: Ո՛չ մէկ բան կը պարտադրէ մեզի, որ գեղեցիկ շարժումներ ընենք: Մի՛ մտահոգուիր, դուն յաջողութեամբ պիտի կարենաս շարունակել խաղալ թաղուհիին՝ Մարի Անթուանէթի դերը, զիչերը թափառելով յարկարամին թուր կողմերը:

ՔԼԷՐ.— Խե՛նթ: Իս երբեւիցէ չըլած չեմ յարկարամին զանազան կողմերը:

ՍՈՒԱՆԺ (հեզմանով).— Օ՛հ, Ո՛չ, Վարագոյրներուն ետին ու անկողնի ծածկոցներու ցանցին մէջ պահուը-

տելով՝ Օրբորդը ընա՛ւ դեղերած չէ : Օ՛հ, ո՛ր : Ինքզինքը երբեք չէ դիտած հայելիին մէջը, ընա՛ւ չէ ողջունած հասարակ ժողովուրդը, որ դուրս ելած է թափօր կաղամբու իր պատըշղամին տակ : Երբե՛ք, ո՛հ, ո՛չ, երբե՛ք :

ՔԼԷՐ. — Բայց, Սոլա՛նժ :

ՍՈՒՍՆԺ. — Շատ գժուար է գիշերով լրտեսել Տիկինը, եւ կը խորհիս, թէ անտեսանելի՞ կը մնաս պատշգամիդ վրայ : Ինչի՞ տեղ կը դնես դիս : Մի՛ փորձեր բռնել, թէ քնաչըջիկ ես : Հասած ենք տեղ մը, ուր կրնաս ընդունիլ ատիկա :

ՔԼԷՐ. — Բայց, Սոլա՛նժ, կը պոռաս : Հաճիս, հաճի՛ս ցածցուր ձայնդ : Տիկինը կրնայ ներս մտնել անշուշկ (Ան կը վազէ դէպի պատուհանը եւ կը բարձրացնէ վարագոյրը) :

ՍՈՒՍՆԺ. — Շուտ լուս, խօսք ըսած եմ : Գոցէ վարագոյրները : Օ՛հ, չեմ կըրնար տանիլ գանոնք բարձրացնելու ձեռք : Ատիկա կ'անհանգստացնէ զիս : Այդպէս կ'ընէր Պարոնը, երբ կը լրտեսէր ոտակահանները, իր ձերբակալման ատուօտուն :

ՔԼԷՐ. — Ուրեմն կը սարսափի՞ս հիմա : Ամենադոյզն շարժումն իսկ պատճառ կ'ըլլայ, որ ոճրագործի մը պէս զգաս, ոճրագործի մը, որ կը փորձէ սարդիլ սպասուէիներու յատուկ անդրոյնին :

ՍՈՒՍՆԺ. — Շարունակէ, հեղնական եղբր, շարունակէ խաղալ հետս : Շարունակէ, հեղնէ զիս : Ոչ ոք կը սերէ զիս : Ո՛չ ոք... :

ՔԼԷՐ. — Ան՛ այո՛ : Ան կը սերէ մեզ : Ան ազնիւ է : Տիկինը ազնիւ է : Տիկինը կը պաշտէ մեզ :

ՍՈՒՍՆԺ. — Ան կը սերէ մեզ այնպէս՝ ինչպէս կը սերէ իր բազկաթուր : Նոյնիսկ աս այդքան : Իր լականին նման : Աւելի՛ն. նման իր վարդագոյն կեղծ լուացարանի աթոռին : Եւ մենք, մենք չենք կրնար սերել մէկը զմէկ : Աղաւա... :

ՔԼԷՐ. — Ա՛հ... :

ՍՈՒՍՆԺ. — ...Ձի սրեր ապականութիւնը : Կը խորհի՛ս, թէ պիտի տանիմ ատիկա, եւ թէ պիտի շարունակեմ խաղալ այս խաղը եւ յետոյ գիշերով վերադառնամ իմ ծալուող խրճիթիս : Խաղը : Երբեւեղէ կարող պիտի ըլլա՞նք շարունակելու զայն : Եւ եթէ ստիպուիմ դադարել թքնելէ՝ ո՞վ զիս Քլէր պիտի կոչէ. ես պարզապէս պիտի խեղդուիմ : Թուքի իմ ժայթքումը ազամանդներու շատըրուանս է :

ՔԼԷՐ (նստի կ'ըլլէ եւ կը պոռայ). — Աւելի մեղմ խօսէ, հաճիս, հաճի՛ս : Խօսէ, խօսէ՛ Տիկինին ազնուութեան մասին :

ՍՈՒՍՆԺ. — Իր ազնուութեան, այդպէ՞ս : Դիւրին բան է ազնիւ ըլլալ, եւ ժըղատուն, եւ քաղցր — ա՛հ : Իր այդ քաղցրութիւնը — երբ դեղեցիկ ես ու հարուստ : Բայց ի՞նչ կ'արժէ, եթէ պարզ օգտախիս մըն ես : Առաւելագոյնը, զոր կրնաս ընել՝ ինքզինքդ հովեր տալն է, երբ մաքրութիւն կամ լուացք կ'ընես : Կ'ուրբես փետրակներ հովաճարի մը պէս : Երազային շարժուճեւեր կ'ընես պնակներու լսթին հետ : Կամ ճեղի պէս, Տիկինին յարկաբաժնէն ներս պատմական շքահանգէսներու աստղը կը համարես ինքզինքդ :

ՔԼԷՐ. — Սոլա՛նժ : Նորէն կը սկսիս : Ի՞նչ ընել կը փորձես : Մենք ընաւ պիտի յիսադադինք, եթէ այդպէս խօսիս : Ես ալ կրնայի բան մը կամ երկու ըսել թու մասին :

ՍՈՒՍՆԺ. — Դո՛ւն : Դո՛ւն :

ՔԼԷՐ. — Այո, ե՛ս : Եթէ ուղէի : Որովհետեւ, վերջին հաշուով... :

ՍՈՒՍՆԺ. — Վերջի՞ն հաշուով : Ինչի՞ կ'ակնարկես : Դուն էիր, որ սկսար խօսիլ այդ մարդուն մասին : Քլէ՛ր, կ'ատե՛մ քեզ :

ՔԼԷՐ. — Նոյն զգացումը ես ունիմ քեզի հանդէպ. եւ ունի՛ն : Բայց եթէ ես ուղի յուզել քեզ, կաթնավաճառը

իրբեւ չքմեղանք պիտի չօղտագործէի: Ես աւելի լաւ բան մը ունիմ քեզի հետ կապուած եւ դուն գիտես ասիկա:

ՍՈՒՍՆԺ.— Ո՞վ աւելի լաւ բան մը պիտի ունենայ, որո՞ւ հետ կապուած: Է՛հ: Լա՛ւ, բռէ բան մը:

ՔԼԷՐ.— Ետրունակէ, սկսէ: Նախ գո՛ւն զարկ: Սուրճի, դուն ես, որ կ'ընկերկէիր: Ձեռն համարձակիր ամբաստանել զիս ամէնէն փառ բաներով, իմ նամակները: Էջեր եւ էջեր անոնցմէ: Ձեզնայարկի խոնուած է անոնցմով: Ամէնէն երազային պատմութիւնները յօրինեցի եւ դուն օգտագործեցիր զանոնք թու սեփական հեռանկարներուդ համար: Քիչ առ քիչ սպասեցիր իմ կատարութիւնս: Երէկ, երբ Տիկինը եղած էիր, կրթնայի տեսնել, թէ որքա՞ն կը հըրճուէիր այն առիթին հաշտին, որ տրուեցաւ քեզի Լամարթիմիէր նաւուն մէջ պահուելու համար, փախչելու ճիւղնս, քու սիրահարիդ հետ...

ՍՈՒՍՆԺ.— Քէ՛ջր...

ՔԼԷՐ.— Սիրահարիդ հետ դէպի Սասնային կողմն, դէպի Կուխնա: Կը հրճուէիր, որ իմ նամակներս թոյլատրեցին քեզի ըլլալ պոռնիկը՝ ծընրադրելու համար աւազակին ոտքերուն: Երջանիկ էիր դահուլու համար ինքզինքդ, կրելու՝ աշխարհիկ աւազակի մը խաչը, սրբերու՝ իր դէմքը, կենտրոն՝ իր կողքին, թիափարելու՝ իր տեղը, որպէսզի հանդիստ ընէ ան: Եւ անշուշտ դուն թու մէջդ կ'անէիր: Քիթդ բարձրացաւ աւելի, քան իմս, անիկա եղաւ աւելի բարձր, քան արմաւենիները:

ՍՈՒՍՆԺ.— Իսկ դուն, ինձմէ անմիջապէս առաջ՝ գո՛ւն եւս կը խօսէիր իրեն հետուելու մասին...

ՔԼԷՐ.— Ճիշդ է: Ձեմ ուրանար: Վերջուկը ա՛յն պահուն, երբ դուն կը ձգէիր: Բայց նուազ փայրագ, քան դուն: Նոյնիսկ ձեզնայարկին մէջ, բայր նամակներուն մէջ, դուն սկը-

սար տատանիլ ետ ու առաջ նաւուն արձակման հետ:

ՍՈՒՍՆԺ.— Դուն չտեսար ինքզինքդ...

ՔԼԷՐ.— Տեսա՛յ: Աւելի զգայուն եմ, քան դուն: Դոն այն անձն ես, որ պատմութիւններ կը սարքէ: Դարձուր գրուխդ: Հա՛: Սուրճի, եթէ միայն կարենայիր անսնել ինքզինքդ՝ Ինչմաքըդ աւակաւին կը բոցափառի այն արեւով, որ մայր կը մտնէ կոյս անտառներուն մէջ: Դուն կը ծրարեսիր փախուսալ: (Ան ջղայնութեամբ կը խնդայ): Վստահարար կը փորձես: Բայց ասիկա թող չմտահողէ քեզ, անգթութիւն պիտի ըլլար խանդարել թու երանաւէտ ճամբորդութիւնդ: Ես քեզ կ'ատեմ այլ պատճառներով, եւ դուն գիտես թէ ի՞նչ են անոնք:

ՍՈՒՍՆԺ. (ցածցնելով իր ձայնը).— Ես չեմ վախնար քեզմէ: Գիտեմ, որ կ'ատես զիս, զիտեմ նաեւ, որ սողուն ես, բայց հիմա ուշադիր եղիր: Ես աւելի մեծ եմ, քան դուն:

ՔԼԷՐ.— Այսինքն ի՞նչ — աւելի մեծ: Եւ զօրաւոր ես: Կը փորձես հեռացնել զիս՝ խօսեցնելով ինձի այդ մարդուն մասին: Հը՞մ: Կը խորհիս, թէ չե՞մ հասկնար: Դո՛ւն փորձեցիր սպաննել Տիկինը:

ՍՈՒՍՆԺ.— Ձի՛ս կ'ամբաստանես:

ՔԼԷՐ.— Մի՛ ուրանար: Տեսայ քեզ:

(Նրկար լռութիւն):

Եւ վախցած էի: Վախցայ, Սուրճի: Անոր ընդմէջէն ե՛ս էի թու թիրախ: Ես եմ այն անձը, որ վտանգի մատնուած է: Երբ վերջացնէք արարողութիւնը, պիտի փրկեմ պարանոցս:

(Նրկար լռութիւն, Սուրճի կը բօքուէ իր ուսերը):

ՍՈՒՍՆԺ. (վնասկան).— Ա՞յդ է ամէնը: Այո՛, ես իրապէս փորձեցի: Ուղեցի ազատել քեզ: Ձէի կրնար տանիլ այլեւս: Ինձի համար խեղդամահութեան համազօր է տեսնել, որ դուն չնշահեղձ կ'ըլլաս, տեսնել, որ կը կարճորիս ու կանաչ գոյներ կը զծագըր-

ւին դէմքերդ վրայ եւ կը փոխ այդ կնկան կծու քաղցրութեամբ: Մեղադրէ դիտ այդ մէկուն համար, իրաւունք ունի: Ես քեզ շատ սիրեցի: Եթէ սպաննած բլլայի գինք, գուն առաջին անձը պիտի բլլայիր ինծի սպաննացող: Թերեւս ոտականութեան ալ յանձնած պիտի բլլայիր դիտ, այ՛ն, գո՛ւն, գո՛ւն:

Քլէր (կը բռնէ գայն դաստակեցիւն) — Սոյա՛նժ...

ՍՈՒՍՆԺ (ազատելով ինքզինք) — Ի՞նչ բանէ կը վախնաս դու: Ատիկա իմ հարցս է:

Քլէր — Սոյանժ, պղտիկ քոյրս, ան շուտով պիտի վերադառնայ:

ՍՈՒՍՆԺ — Ես ոչ ոք սպաննեցի: Վախկոտ մըն էի: Կ'ըմբռնես: Ըրի իմ լաւագոյնս, բայց ան ինքն իր վրայ դարձաւ քունին մէջ: (Բարձրացող ոգիւրտութեամբ): Ան կը շնչէր մեղմօրէն, կը տարածուէր սաւաններէն դուրս, Տիկինն էր:

Քլէր — Վե՛րջ տոր այլեւս:

ՍՈՒՍՆԺ — Հիմա կ'ուզես, որ վերջացընեմ: Բայց այն ատեն կ'ուզէիր գիտնալ մտէն բան, այնպէս չէ՞: Լա՛ւ, սպասէ, քեզի բսիլիք աւելի շատ բաներ ունիմ: Պիտի տեսնես թէ ի՞նչ նախանիլի կողմուած է քոյրդ: Ի՛րապէս ի՞նչ տեսակ սպասուհի է ան: Ուզեցի խեղդել զինքը...

Քլէր — Առանձին ձգէ զիս: Մտածենք, թէ ի՞նչ է հետեւանքը ատոր:

ՍՈՒՍՆԺ — Ոչինչ կը հետեւի: Հիւանդ եմ, եւ յոգնած՝ ատեաններու մէջ ծնրադրել: Եկեցեցուց մէջ ես կ'ուսնենամ մայրապետներուն կարմիր ծածկոյթը կամ ալ ապախարողներու քարը, բայց իմ բնայրուստ ազնիւ արարք մը պիտի բլլար առնըւազն: Նայէ, անգամ մը նայէ եւ տես, թէ ի՞նչպէս կը տատապի ան: Ի՛նչպէս կը տատապի գեղեցկութեան մէջ: Յասու՛մը կ'այլափոխէ գինք, այնպէս չէ՞: Կը դեղեցկացնէ՞ զինք: Երբ իմացաւ, թէ իր սիրահարը ա-

ւաղակ է, գնաց ոտականութեան մօտ: Հրճուեցաւ: Հիմա ինք մենակեաց է եւ փառաւոր, ա՛մէն ինչ ունի ձեռքին տակ, առաւել՝ երկու զոհուող սպասուհիներ, որոնց սիրտերը կ'արբունին անոր վիշտը տեսնելով: Կը հասկնա՞ս, ի՛ր վիշտը, որ կը փայլէր գահարեղէններուն նշոյններուն հետ, իր հաղուտներուն օրնդուսին հետ, աշտանակին շառագուտումին հետ: Քլէ՛ր, ես ուզեցի փոխարինել իմ վշտիս աղքատութիւնը ոճերիս փառքով: Որմէ ետք, կրակը վառած էի:

Քլէր — Հանդարտէ, Սոյա՛նժ: Կրակը կրնայ բռնկած չբլլալ: Եւ կրնաս ճանչցուիլ: Գիտես, թէ ինչ կը պատահի հրձիգներուն:

ՍՈՒՍՆԺ — Ամէ՛ն բան գիտեմ: Ոչքերս ու ականջներս պահեցի բանալիին ծակին վրայ: Ոչ մէկ ազատին մտիկը բամբ է այնպէս՝ ինչպէս ըրի ես: Գիտե՛մ ամէն բան: Հրձի՛գ: Մքանչելի տխրոտ մըն է ատիկա:

Քլէր — Հանդարտէ: Կը խեղդուիմ: Դուն կը խեղդե՛ս գիտ: (Կ'ուզէ բանալ պատուհանը): Օ՛հ, Քլէ՛ր մը մաքուր օդ չնշենք:

ՍՈՒՍՆԺ — Հետաքրքիր պատուհանէն: Բա՛ց նրբանցքին ու խոհանոցին զուտները: (Քլէր կը բանալ երկու դուռները): Գիտ՛ եւ տես, թէ շուրջ կ'եռա՞յ:

Քլէր — Առանձի՞նս:

ՍՈՒՍՆԺ — Սպասէ, շատ ազնիւ, սպասէ մինչեւ ինք գայ: Ան իրեն հետ կը բերէ իր աստղերը, արցունքները, ժպիտները, հոտաչիւղերը: Ան պիտի սպականէ մեզ իր քաղցրութեամբ: (Հետաձայնը կը հնչէ: Երկու էայրները կ'ունկեցնեն):

Քլէր (հետաձայնը վերցնելով) — Պարո՛նը: Պարոնն է... Քլէրն է խօսողը, Պարոն... (Սոյանժ եւ մտիկը անի կ'ուզէ, բայց Քլէր անգին կը երէզի): Եստ լաւ: Պիտի տեղեկանամ Տիկինին: Տիկինը հրճուանքն պիտի

յորդէ՝ լսելով, թէ Պարոնը աղատած է... Այո, Պարոն... Շատ լաւ...
Մնաք բարով, Պարոն: (Կ'ազէ ընկալուչը տեղաւորել իր տեղը, բայց ձեռքերը կը դողդղան, եւ կը դնէ զայն սեղանին վրայ):

ՍՈՒՍՆԺ.— Արձաւուած է:
ՔԼԷՐ.— Դատաւորը զինք ազատ ձգած է երաշխաւորութեամբ:

ՍՈՒՍՆԺ.— Լաւ, յաւ զործ մը տեսած ես: Ի՞մ գնահատանքներս: Քու ամբաստանութիւններդ, զու նամակներդ սեղեցիօրէն կը կատարեն իրենց զերը: Իսկ եթէ անոնք ճանչնան ձեռագիրդ, կատարեալ պիտի բլլայ ամէն բան:

ՔԼԷՐ.— Հաճիս, հաճիս, մի՛ ջախջախեր զիս: Քանի որ այդքան ճարտիկ ես, մինչեւ Հիմա պէտք է Տիկինին Հետ Հարցր փակած բլլալի: Բայց միշտ կը վախճայիր: Անկողինը տաք էր: Օդը թանձրացած՝ անուշահոտի բոյրերով: Ատիկա Տիկինն էր: Մենք ստիպուած ենք ապրիլ նոյն տեսակի կեանք մը: Նոյն Հին խաղով: Բայց դուն, ողորմելի արարած, նոյնիսկ խաղը վատնուար է: Վատաւ եմ, որ Հետքեր ձգած ենք մեր ետին: Ամէն անգամ Հետքեր կը ձգենք: Կը տեսնեմ Հետքերու ամբողջ շարան մը: Երբեք պիտի չկարենամ զողարկել զանոնք: Եւ ան, կը շրջէ իրեն ընտանի դարձած գաղտնանոցին մէջ: Կը լուծէ բանալիներուն գաղտնիքը: Իր վարդազոյն բթամատին ծայրով կը մատնանչէ մեր Հետքերը: Երեւան կը Հանէ մեզ, մէկ առ մէկ: Տիկինը կը ծաղրէ մեզ, եւ ատիկա զո՛ւ սըխալը է: Ամէն ինչ կորսուած է, որովհետեւ քեզի կը պակսի քաջութիւնը:

ՍՈՒՍՆԺ.— Ես դեռ կրնամ վերադառնել այն ուժը, որուն կը կարօտիմ:

ՔԼԷՐ.— Ո՞ւր: Ո՞ւր: Ես կը գերազանցեմ քեզ: Դուն ծառերու դադաթնեւուն վրայ չես ապրիր: Կաթնամաճառը հազիւ յիշած՝ միտքդ ամբողջ¹ ջնովն չփոթի կը մտանդի:

ՍՈՒՍՆԺ.— Ատիկա անոր համար է, որ չկրցայ տեսնել Տիկինին զէ՛մքը, Քլէր: Որովհետեւ, ես շատ ծօտիկ էի Տիկինին, շատ մօտիկ անոր զունին: Կորսնցուցի կորովս, ա՛յն կորովը, որուն միջոցաւ պիտի հասնէի անոր կողորդին, պէտք էր որ վերջնէի սաւանը իր Հեւացող կուրծքին վրայէն:

ՔԼԷՐ (հեղմաւեմով).— Ու սաւանները տաք էին, գիշերը՝ խաւար: Նժան արարք մը պէտք է տեղի ունենայ որ ցերեկով: Դուն ատակ շեռայր զործիս: Շատ ստիպալի արարք մըն է: Բայց ես կրնամ յաջողցնել:

ՍՈՒՍՆԺ.— Քլէ՛ր:
ՔԼԷՐ.— Հոն ուր զո՛ւն ծախողեցար, ես պիտի յաջողիմ:

ՍՈՒՍՆԺ (մազը կը սանտրէ).— Քլէ՛ր, մի՛ տարուիր, անխոհեմ մի՛ բլլար...

ՔԼԷՐ.— Ի՞նչ բան մտածել կու տայ քեզի, որ անխոհեմ եմ: Ամէն բանէ առաջ, զու ծամակալներդ մի՛ խտաներ իմ ծամակալներուս: Դուն... Օ՛հ: Շատ լաւ, խառնէ աղտերդ իմ աղտերուս Հետ: Խառնէ՛: Խառնէ՛ զու ցնցոտիներդ իմ քուրջներուս: Խառնէ՛ ամէն ինչ: Ատոնք պատճառ պիտի դառնան ազատիներուն մատնութեան: Հետեւարար, Պարոն ոչ մէկ դժուարութիւն պիտի ունենայ մեզ երեսան հանելուն մէջ: Ու մենք պիտի մեռնինք ամօթի Հեղեղի մը մէջ: (Յանկարծ կը խաղաղի): Ես որեւէ բան ընկու ատակ եմ, գիտես:

ՍՈՒՍՆԺ.— Քնարեր դեղահասաները:

ՔԼԷՐ.— Այո՛: Խօսի՛ր հանդարտօրէն: Զորաւոր եմ: Փորձեցիր իշխանութիւն բանեցնել վրաս...

ՍՈՒՍՆԺ.— Բայց Քլէ՛ր...

ՔԼԷՐ (համարաւորութեամբ).— Ներողամիտ եղիր, բայց ես գիտեմ, թէ ինչ կ'ըսեմ: Ամէն բան որոշած եմ: Պատաստ եմ: Ես յոյնեցայ տապալկ մը, հովանոցի պատեան մը, կամ զոտոս, անաստուած ու անընտանիք մայրապետ մը բլլալէ: Յոյնած եմ նոյնպէս խորանի փոխարէն օճախ մը ու-

նենալէ: Ես այդ անհանդուրժելի, տխուր, հոտող աղջիկն եմ: Նոյնիսկ քեզի համար:

ՍՈՒՍՆԺ.— Քլէր... Երկուքս ալ իրարին ենք: (Մտախոզուած): Ո՛ւր է Տիկինը: Չեմ կրնար տանիլ այլեւս: Չեմ կրնար տանիլ մեր իրարու նման ըլլալը, չեմ կրնար տանիլ ձեռքերուս, գուլպաներուս, մազերուս դոյրութիւնը: Չեմ այլաներ քեզ որեւէ մէկի բանի համար, իմ պզտիկ քոյրս: Ծառ լաւ կը հասկնամ, թէ յարկաբաժնին մէջ կատարած քու գեղերումներդ նպատակեցին դիւրացնելու քու ձգտումները:

ՔԼԷՐ (զայրացած).— Ա՛հ: Վերջացա՛ւր:

ՍՈՒՍՆԺ.— Կ'ուզեմ օգնել քեզի: Կ'ուզեմ հանգստացնել քեզ, բայց դիտեմ նաեւ, որ զոգուանք կը պատճառեմ: Լաւ ծանօթ է ինծի այդ կէտը, որովհետեւ դուն ես կը զգուցնես դիւ: Երբ ստրուկները սկսին իրար սիրել, սէրը իր իմաստը կը կորսնցնէ:

ՔԼԷՐ.— Եւ ես, հայեցիի մը խորէն դրսևետրուող իմ պատկերս դիտելէն հիւանդ դարձած եմ, նման զարչահոտութեան մը: Դուն իմ զարչահոտութիւնս ես: Լաւ, ես պատրաստ եմ: Պատրաստ՝ խածնելու: Պիտի ունենամ իմ թագս եւ պիտի դեզերիմ յարկաբաժնին մէջ:

ՍՈՒՍՆԺ.— Ատիկա բաւարար պատճառ մը չէ գի՛նք սոցանկելու համար:

ՔԼԷՐ.— Իրապէ՛ս: Ինչո՞ւ, հաճո՞ւ: Ուրիշ ի՛նչ պատճառի համար: Ո՛ւր եւ է՛րք կրնայինք տակի լաւ արդարացում մը գտնել: Ա՛հ, ուրեմն ատիկա բաւարար չէ, բաւարար չէ բրանարուած ըլլալ այն կաթնափաճանին կողմէ, որ զուարթօրէն կ'անցնի մեր ձեռնայարկերէն: Այոք Տիկինը ակնհաստես պիտի ըլլայ մեր մեղքին: Պիտի պայթի ինդալէն, պիտի խնդայ մինչեւ որ արցունքները հոսին դէմքէն վար, իր թոյլ հասակներուն ընկերակցութեամբ: Ո՛ւ, պիտի ու-

նենամ իմ թագս: Ես պիտի ըլլամ թունաւորողը, բան մը, որ դուն ձախողեցար ըլլալ: Իշխանութիւն բանցնելու կարգը ի՛մս է հիմա...

ՍՈՒՍՆԺ.— Բայց ես երբեք...

ՔԼԷՐ.— Ինծի տուր անձեռոցը: Ինծի տուր հազուստները: Կեզուէ ստիւբը: Քերթէ ստեղծիչները: Վրէժնէ դիտարկները: Վերջացած բան է: Վերջացած: Գրեթէ մոռցած էի: Դարձուր պատուակը: Վերջացաւ: (Ոգիւտուած): Ես պիտի դարձնեմ այլաբան:

ՍՈՒՍՆԺ.— Իմ փոքրիկ քոյրս:

ՔԼԷՐ.— Պիտի օգնես ինծի:

ՍՈՒՍՆԺ.— Պիտի չդիտես ինչ շարժումներ քեզի: Իրադարձութիւնները առաւել քան լուրջ են, Քլէր, եւ նոյնքան ալ պարզ:

ՔԼԷՐ (ոգիւտուած).— Մենք կարգացած ենք պատմութիւնը «Օրինուած Ձոր»ին Սուրբ Խաչ Քրոջ, որ թունաւորած է Չ՛ր արարներ: Ան կը քաշէր առանց կօշիկի, պիտի ոտքերով: Կը քշուէր դէպի ոճիւր: Մենք կարգացած ենք պատմութիւնը Ալպանորէզ Իշխանուհիին, որ պատճառ դարձաւ իր սիրահարին ու ամուսնոյն մահուան: Ան հանեց շիւթի խցանը եւ խաշի մեծ նլան մը դրաւ սկահակին վըրայ: Մինչ կը կենար դիակներուն առջեւ՝ ան միայն մահ կը տեսնէր, եւ Հեռուն, տարածութեան մէջ, իր անձին եթերային պատկերը կը տարւէր հովէն: Ան ցուցաբերեց երկրային յուսարեկութեան բոլոր դրսերները: Վենոզայի Մարքիզուհիին մասին դրուած գիրքին մէջ մեզի կ'ըսուի, որ Մարքիզուհին ինքն էր դուստրուրը թունաւորողը եւ հրք կը մօտենար անկողնին, թուերը կ'առաջնորդուէին իր սիրահարին ուր-ւականով:

ՍՈՒՍՆԺ.— Պզտիկ քոյրս, հրեշտակ:

ՔԼԷՐ.— Ես պիտի առաջնորդուիմ կաթնափաճանին հուժկու բազուկներով: Պիտի դնեմ ձախ ձեռքս անոր վիզին:

Ան պիտի չընկրկի: Պիտի օգնես ինծի: Եւ, հետուն, Սոլա՛նժ, եթէ Հարկադրուինք շատ հետուները երթալ, Աստանային կողմն մինչեւ, Ղուն պիտի ընկերակցես ինծի: Յամաք պիտի Հանես նաւը: Այն թափչը, զոր կը ծրարէրք ունենալ իրեն հետ՝ ինծի Համար կրնայ իրականութեան վերածուիլ: Մենք այդ յաւիտենական զոյգը պիտի ըլլանք, Սոլա՛նժ, մեր կրկուքը՝ ոճիբի ու սրբութեան յաւիտենական զոյգը: Մենք պիտի ազատագրուինք, Սոլա՛նժ, պիտի ազատագրուինք, կ'երդնում քեզի: (Ան կ'իյնայ Տիկիմիմ անկողինն վերայ):

ՍՈՒԱՆԺ.— Հանդարտէ: Պիտի քնանաս: Վեր պիտի փոխադրեմ քեզ:

ՔԼԷՐ.— Առանձին ձոյէ զիս: Մարէ՛ լոյսը: Հանձի՛ս, մարէ՛ լոյսը: (Սոլանժ կը մարէ լոյսը):

ՍՈՒԱՆԺ.— Հանգչէ: Հանգչէ, պզտիկ քոյրս (Ան ծուկի կու գայ, կը հանէ Քլէրին կօշիկները, կը համարտը աճար շտփերը): Հանդարտէ սիրելիս: (կը գգուէ զինք): Ոտքերդ ուսերուս վրայ դիր: Այդպէս, փակէ՛ աչքերդ:

ՔԼԷՐ (կը հառաչէ).— Ես կ'ամչնամ, Սոլա՛նժ:

ՍՈՒԱՆԺ (մեղմօրէն).— Մի՛ խօսիր: Ինծի ձեզ զէպքերը: Անկողինն մէջ պիտի դնեմ քեզ, եւ, երբ քուն մտնես, վեր պիտի Հանեմ, մինչեւ ձեզնայարկը: Պիտի Հանեմ Հազուստներդ եւ դնեմ քեզ պզտիկ անկողինդ մէջ: Քնացիր, շուտով հոս պիտի վերագանամ:

ՔԼԷՐ.— Ես կ'ամչնամ, Սոլա՛նժ:

ՍՈՒԱՆԺ.— Ե՛րջ: Թոյլ տուր, որ քեզի պատմութիւն մը պատմեմ:

ՔԼԷՐ (պարզօրէն).— Սոլա՛նժ:

ՍՈՒԱՆԺ.— Ի՞մ Հրեշտակ...:

ՔԼԷՐ.— Սիրուն մազեր ունիս: Ես ահարուն մազեր ունիս: Անոր...:

ՍՈՒԱՆԺ.— Մի խօսիր անոր մասին այլեւս:

ՔԼԷՐ.— Անորը կեղծ է: (Երկար լռու-

քիւն): Կը յիշե՛ս: Մառին տակ երկուքս միայն: Մեր ստեղծը արեւուն: Սոլա՛նժ:

ՍՈՒԱՆԺ.— Ես հոս եմ: Քնացիր: Ես քու մեծ քոյրդ եմ: (Լռութիւն: Վայրկեան մը հտփ Քլէր շտփի կ'իյլէ):

ՔԼԷՐ.— Ո՛չ: Ոչ մէկ տկարութիւն: Վանէ լոյսը: Վանէ: Արա՛դ: Վճռական պահ մըն է: (Սոլանժ լոյսը կը վանէ): Ոտքի ել: Ուտենք: Ի՞նչ կայ խոհանոցը: Է՛հ: Պէտք է ուտենք: Զօրանալու համար, Հետս եկուր, ուղղութիւն պիտի տաս ինծի: Թըմբեցուցիչը...:

ՍՈՒԱՆԺ.— Զափազանց յոգնած եմ: Այո՛, թմբեցուցիչը...:

ՔԼԷՐ.— Թմբեցուցիչը: Մի ծամածուեր զէմբոյ: Պէտք է ուրախ ըլլանք: Եւ երգենք: Երգենք: Երգէ ախպէս՝ ինչպէս պիտի ընէիր, երբ մուրալու երթայիր պալատները կամ հիւպատոսարանները: Թե՛ղա՛: (Անոնք խրճիկ կը մարին): Այլապէս այնքան ողբերգական պիտի թուինք: Գոցէ պատուահանը: (Սոլանժ խնդալով կը գոցէ պատուահանը): Ոճիբը բան մըն է, որ... անխոստովանելի է:

ՍՈՒԱՆԺ.— Երգենք: Անտառ պիտի տանինք զինք եւ բոկ-բոկ պիտի ընենք եղնահիներուն տակ, լուսնի լոյսով: Եւ պիտի երգենք: Զինք պիտի թաղենք ծաղիկներուն տակ, ծաղիկէ շինուած մեր անկողիններուն մէջ եւ զիւրը պիտի ջրենք իր շտփին մատները ջուրի պզտիկ խողովակով: (Մատիքի գրանգ քանգը կը հնչէ):

ՔԼԷՐ.— Տիկի՛նն է:

ՍՈՒԱՆԺ.— Ի՛նք ըլլալու է: Յարգարէ՛ անկողինը: (կը բռնէ քրոջ դաստակներէն): Քլէ՛ր, վստահ ես, թէ զըլուխ պիտի կարենաս Հանել այդ գործը:

ՔԼԷՐ.— Քանի՞ հատի պէտք ունինք:

ՍՈՒԱՆԺ.— Ես ըլլալու եմ: Տասը զեղա-Հատ զիւր անոր թէյին մէջ: Պիտի Ենե՛ս:

ՔԼԷՐ (ագատելով ինքզինք, կ'երթայ յարդարելու անկողինը: Ապա՝ վայրկեան մը կը դիտէ գայն) — Այո՛, սրուակը գրպանս է:

(Սոյանժ դուրս կ'ելլէ ատիտն, Քլէր կը շարունակէ յարդարել սենեակը, եւ դուրս կ'ելլէ աջէն: Քանի մը երկվայրկեան կ'անցնի: Բեմին ետեւէն փայլին խնդուքներ կը պայթին: Տիկինը մուշտակէ վերարկուով մերս կը մտնէ խնդուով, իրեն կը ձեռնելի Սոյանժ:

ՏԻԿԻՆԸ — Ատիկա վերջ չունի: Ի՞նչ սարսափելի թրաշուշաններ, ի՞նչ հիւանդարտը շահաբաժներ եւ միմոզաներ: Հաւանաբար մթնշաղէն առաջ ամբողջ շուկան շրջած են՝ աւելի ատան զնով զնելու համար դանոնք: (Սոյանժ կ'օգնէ իրեն՝ վերարկուն հանելու):

ՍՈՒՍՆԺ — Տիկինը չմտեցա՞ւ:
ՏԻԿԻՆԸ — Այո՛, Սոյանժ: Ես'տ մտեցայ: Ամբողջ գիշերը միջանցքներուն

(Մնացեալը յարդարով)

մէջ կ'երթեւեկէի: Կը տեսնէի տառած մարդիկ եւ քարացած դէմքեր, բայց յաջողեցայ ակնթարթի մը համար տեսնել Պարոնը: Հետուէն: Ձեռքս շարժեցի: Ճիշդ հիմա դատաւորին կնոջ քովէն կու գամ: Քլէ՛ր:

ՍՈՒՍՆԺ — Ան Տիկինին թէյը պատրաստելու վրայ է:

ՏԻԿԻՆԸ — Երանի քիչ մը անպարէ: Կ'ամչնամ թէյ ուղկու, երբ անդին Պարոնը առանձին է, առանց որեւէ մէկ բանի, առանց կերակուրի, կամ առանց ծխախոտի:

ՍՈՒՍՆԺ — Բայց Պարոնը երկար պիտի չմնայ հոն: Անմիջապէս պիտի հաստատեն, թէ ինք յանցաւոր չէ:

ՏԻԿԻՆԸ — Յանցաւոր կամ ոչ՝ զինք երբեք պիտի չլքեմ, երբե՛ք: Կը տեսնես, Սոյանժ, այսպիսի պարագաներու կ'անդրադառնաս, թէ որքա՞ն շատ կը սիրես մէկը: Ձեմ կարծեր նաեւ, որ յանցաւոր է, բայց եթէ նոյնիսկ յանցաւոր ըլլար, ես անոր մեղսակիցը պիտի ըլլայի: Պիտի հասեւէի իրեն մինչեւ Սատանային կողին, մինչեւ Սիպերիս:

ԺԱՆ ԺԸՆԷ
Հայացուց՝ Է. Ս.



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Այս տարի, երաժշտութեան և ներդաշնակութեան բոլորովին անյարբիր հարցի մը առիթով՝ աշխարհահռչակ երգչուհի Արամ Խաչատուրեան բուսական շատ մեղան հասեցուց հայ մամուլին մէջ և Կը թուի, թէ շուտով պիտի շմոռցուի շնոյսի գիտեր որո՛ւ կողմէ և որո՛ւ հաշտոյն ստեղծուած խնդրոյ սուարկայ բիծը:

Նախ ամփոփենք պատմութիւնը:

Արամ Խաչատուրեան «Սովետական Ռուսիա» թերթի թղթակիցին շքեղ հարցադրոյցի մը ընթացքին, ի միջի այլոց ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը, որ լոյս տեսաւ յիշեալ թերթի 6 Յունիսի համարին մէջ.

— Միտումով հայ եմ, սակայն ծնուել եմ Վրաստանում: Իսկ ինքս ինձ համարում եմ ռուս, սովորել եմ ռուսական դպրոցում եւ արդէն կէս դար է, ինչ ապրում եւ աշխատում եմ Ռուսաստանում:

Կարգաւով այդ յայտարարութիւնը, սուքթ. էդ. Յովհաննիսեան «Ազգակ» օրաթերթի Յունիս 23ի թիւին մէջ յայտնեց իր բնդվումը, գիտել տալով նոյն ատեն, թէ նման ելոյթներով անձնասպան կ'ըլլայ Խաչատուրեան մարդը, բայց չի մեանիր հայր, որովհետեւ, Յովհաննիսեանի բառերով՝

— Ո՞վ ասաց, որ ամէն մի մարդ ունի բարոյական իրաւունք ինքնուրոյն արձայնելու, թէ որ ազգին է աւելի յարմար պատկանել:

— Ո՞վ ասաց, որ բնութեան կողմից շնորհուած ազգային պատկանելիութիւնը կարելի է թեթեւամտորէն վերափոխել ռուսերէն դպրոցի միջոցով, կամ էլ՝ 50 տարի Մոսկուայում ապրելով:

— Ո՞վ ասաց, որ Արամ Խաչատուրեանի տաղանդը տուել է իրեն ռուսական դպրոցը:

— Եւ վերջապէս, ո՞վ ասաց, որ եթէ ինքը իրեն համարում է ռուս, ապա ճա խնդապէս ռուս է:

Յովհաննիսեանէն ետք, «Ազգակ» Յունիս 25ին խմբադրական մը հրատարակեց, խորանելով զինքդինքը իր մողովուրդին օտար և օտարին մէջ

Հարագատ զգալու՝ խաչատուրեանական մետառաներորդ ժամու կեցուածքը, ընդգծելով մասնաւորաբար ա՛յն, որ,

«Ժողովուրդներու կեանքին մէջ, մասնաւորաբար տառապած եւ իրաւազրկուած փոքր ժողովուրդներու կեանքին մէջ՝ գիտով, ձայնանիշով եւ գիտական նուաճումներով համբաւուած անձերը միտքապարփուններ են եւ այդ իսկ պատճառով անոնք պարտաւոր են իրենց վարձով, կեցուածքով ու արտայայտութիւններով օրինակ հանդիսանալ սերունդներուն, մեծութեան բաժին մը յատկացնել Հայաստանին, բայց թէ իրենց մեծութենէն շահ չունի Հայաստան... իրե՛նց ալ, իրենց մեծութեան՝ ալ...» :

«Ազգակ»ի Հրատարակած յօդուածէն ու խմբագրականէն հետք, գաղափարակից ուրիշ թերթեր եւս արտայայտեցին իրենց դառնութիւնները եւ դատնօրէն յիշեցուցին Ռաչատուրեանին եւ ամենեցուն, թէ ուղղային պատկանելիութիւնը չապրկ չէ, որ ուզած օրդ ծախս ու մէկգի շարտես զայն :

Ոչ-զաշնակցական թերթերը, փոխանակ վիրաւորուելու Ռաչատուրեանի յայտարարութենէն, սկսան ըստ սովորութեան յարձակումներ գործել վէրքը մասնաշողներուն դէմ : «Արարատ» օրաթերթի մէջ, Մանուէլ Արամեան ստորագրող յօդուածագիր մը նոյնիսկ մերժեց ընդունիլ արձանագրուած փաստը : «Մեր կարծիքով, նրա յայտարարութիւնը (եթէ անշուշտ կատարել է) պէտք է վերագրել Երախտագիտական արտայայտութեան ղէպի ռուսական մշակոյթն ու ժողովուրդը եւ ոչ թէ մի հրատարականի՝ ներկայացուած իր հարագատ ծագովրդին» :

Այս եւ փաստերուն հանդէպ թոյլ տրուած ոչ-յարգալիբ ալ չարագրութիւններու առթիւ, «Ազգակ», իրողութիւններուն հանդէպ աւելի լուրջ մտնելով ցուցարկելու կոչով Դ Յուլիսին Հրատարակեց երկրորդ խմբագրական մը, ապա, 31 Յուլիսին Հանրութեան ներկայացուց փաստը, «Սովետականայա Ռոսսիա»ի խնդրոյ առարկայ թիւին լուսանկարչական պատճէնը, որ շրջանակի մէջ մատնանշուած էր Ռաչատուրեանի «աղղային» դատանունքը :

— Ծնունդով հայ եմ, տակայն ծնուել եմ վրաստանում : Իսկ ինքն ինձ համարում եմ ռուս... :

Այս էր Ռաչատուրեանի կապուած հարցին ոչ-լրիւ պատմութիւնը՝ մինչեւ 17 Նոյեմբեր, մինչեւ «Կանչ»ի նոյն շարթուան թիւին (144) Հրատարակութիւնը, որ Գրանիկ Աղզարեան, մեծ երգահանին հետ Մոսկուայի մէջ ունեցած իր տեսակցութիւնը գրի առնելու ատեն, պարտականութիւն համարած է յիշեցնել, որ ամիսներ առաջ «Էդ. Յովհաննիսեանն ու «Ազգակ» օրաթերթը անարգական անօրինակ արշաւ մը ձեռնարկած էին մեծամուն հայուն դէմ՝ առանց նուազօրոյն խղճաւարութեան եւ խղճանքի» :

Ի՞նչ արշաւի եւ ի՞նչ անարգանքի մասին է խօսքը : Էդ. Յովհաննիսեանն ու «Ազգակ» առանց հիմնաւորուած պատճառի պարտաւարքե՞ր ստորագրեցին Ռաչատուրեանի դէմ, որպէսզի խղճահարութիւն ունենային, թէ Հայ ժողովուրդի խղճին հետ փորձուած խաղը ձաղկելու հանրային պատասխանատուութեամբ պարտաւորուեցան խօսք բանալ այդ մասին : Ի վերջոյ ո՞վ է մեղաւորը, նման էլոյթներու դէմ իր զայրոյթը պողստող անհմտը, թէ աղղային պատկանելիութեան վրայ խաչ քաշող անձը :

Ահաւասիկ Գրանիկ Աղզարեանի օրագրութեան մէկ հատուածը :
«... Կ'ընդհատ գիտ յանկարծ՝ շնորհակալութեան ջերմ խօսքերով, եւ ապա, — մի րուպէ, — կ'ըսէ մեզմ ձայնով մը, կ'երթայ կողքի սենեակը ու կը վերադառնայ... Աստուած իմ, Օեոէրն «Ազգակ»ն է...» :

«— Այս պատմութիւնից տեղեակ ես, — կ'ըսէ կարգալամ...
«Շնիրքած, կը նայիմ սեղանին, քանակին, գիրքերուն, միայն թէ չը-
նայիմ իրեն, միայն թէ... ու հագիւ յսի ձայնով մը՝

«— Այո. — կ'ըսեմ, — տեղեակ եմ...»:

*Զարմանալին՝ այս դիւրազածութեան («Աստուած իմ») եւ խղճա-
հարութեան («միայն թէ իրեն չնայիմ») թատերական բնութիւն անդին կը
զսնուի դարձեալ, ա՛յն հին, անփառունակ, բիւրիցս հաստատուած վարկա-
քեկիչ կեցուածքին մէջ, որ կը կարծուէր, թէ իր ժամանակը ապրած վեր-
ջացած է, բայց որ կը շարունակէ ահաւասիկ իր դոյութիւնը եւ, անտեսելով
առարկայական տուեալները՝ բոլոր պարագտեղութեան մեղաւոր կը հաշակէ
ազդարարական հակառակորդը:*

*Զեզ մը դարձեալ նայեցէք վերի պատկերին: Կարծես մեղք դորձող ու-
րիչ մարդ չկայ խնդրոյ առարկայ ելութիւն մէջ, մեղքի ուրիշ աղբիւր չկայ,
նշատուրեանը յայտարարութիւն ըրած չէ կարծես եւ «Առկեսակայա Ռոս-
սիա» թերթը յայտարարութիւն տպած չէ, անոնք չկան, կայ մէկ մեղաւոր
միայն՝ էր. Յովհաննիսեանը, ու մեղքի մէկ աղբիւր՝ «Ազգակ» օրաթերթը:
Նման կողմնակալութիւնները, սակայն, մեղմ ասած՝ ինքզինք յարգող մար-
դու վայել կողմնորոշումներ չեն:*

Վերոյիշեալ յօդուածին մէջ, Նաչատուրեանի բերնով գրուած է.

— Հայ մարդիկ ինչպէ՞ս կարող են նման բաներ գրել... Միթէ սա րն-
ծա՞յ է իմ եօթանասունամեակի առթիւ... Սպասէիմ զանէ իմ յոբելեանը
անցնել...

*Իրեն չափ եւ իրմէ աւելի իրուունք չունէի՞ն արդեօք միւսները, նման
բաներ գրող «Հայ մարդիկ», երբ կը լսէին, որ մեծատաղանդ Հայ մարդ մը,
իր եօթանասունամեակին առթիւ՝ «իմֆս ինձ համարում եմ ռուս» կ'ըսէր
եւ կը հանդուրժէր քսածին տպագրութիւնը: Անբարեկրօն հակառակը պիտի
ըլլար: Արդ՛հետեւ ի՞նչ խօսք կրնար ըլլայ Հայ մարդոց հայութեան ու ար-
ժանապատուութեան մասին, առաւել եւս Հայ մտաւորականութեան եւ մա-
մուլին մասին, երբ նման առթիւներու լուս պիտի մտան, չպրտան իրենց գալ-
բութիւն կամուրջ ուրացումներու, կամակոր զեղչերու, յուսալքումի առաջ-
նորդող անպատասխանատուութիւններու դէմ:*

*Նոյն օրագրութեան մէջ, միշտ Նաչատուրեանի բերնով գրուած է
դարձեալ.*

— Իմ ազգութիւնը վնասած է ի սկզբանէ, եւ ո՛չ ես, ո՛չ էլ արիշը
չի կարող փոխել դա: Եթէ հիմա դուրս գամ ու պոռամ, որ ես հայ չեմ, էլի՛
մարդ չի հաւատայ... այդ մարդիկ գիտե՞ն, թէ ինչ են անում — իրենք ի-
րե՛նց են կողոպտում, դուք ձե՛զ էք կողոպտում... ավր, չի՛ լինի, այդպիսի
բան չի՛ լինի...

*Հակառակը ըսող եղա՞ծ է արդեօք, որ Նաչատուրեան այս լեզուով կը
խօսի կամ նման բռտեր կը գրուին շրթներուն: Անշուշտ թէ իր ազգութիւնը
ի սկզբանէն վնասուած է, անշուշտ թէ ոեւէ մէկը չի կրնար փոխել այդ իրա-
կանութիւնը, անշուշտ թէ մարդ չի հաւատար, եթէ Նաչատուրեան պոռայ,
որ «ես Հայ չեմ»: Իր «իմֆս ինձ համարում եմ ռուս» յայտարարութեան ա-
ռթիւով զանուութիւն ապրած մարդերը ուրիշ բան չբռին արդէն իրեն, ազգա-
յին պատկանելիութիւնը չէ՛ս կրնար ուրանալ բռին, բնութեան կողմէ շնորհ-
ւած էութիւնը հերքել հնարուոր չէ բռին: Նման ճշմարտութիւններ յիշուե-
ցան միայն, գրուեցան, արձանագրուեցան նաեւ ա՛յս ամառգրին մէջ.*

«Այլասերման քափ տալու դիրքութեան, առաջացնելիք պատրամաքա-

փառքի մեծերում պատճառով էր, որ հայ մտաւորականութիւնը ընդվզեցաւ դաշնաւորութեան մեծ վարպետ հայատաւրեանի համած անդաշն ձայնին դէմ եւ ոչ թէ ըստ էութեան լուրջի առնելով անոր ազգութեանը: Ռոպինտի՛ ճինքս ինձ համարում եմ որով» յայտարարելով, Ֆիշը է, բան մը կը փի մեր մէջ, բայց հայկական իր կառոյցին հետ փառ գալով չի կրնար յանկարծ սուսանալ ինքը, կը մնայ ի՛մքը»:

Պաշտօնական ինքը, իր «ինքն ինձ համարում եմ որով» յայտարարութեամբ խոցեց ուրիշներուն ազգային դիրքազգացութիւնը եւ շեռ գիտեց տրամաբանական ինչ հիմունքով հիմա կը մեղադրէ արդար սրտմտութեամբ մը իր կոյրի ղէմ ծառայողները:

— Իմ հայութիւնը կասկածի ենթարկելի, ի՛մ՝ որի ամբողջ էութիւնը հայկական է ու այդ հայկականութիւնը ես զգում եմ, սիրում, յարգում, պարծենում»:

Բայց նորէն, «՛վ կասկածի ենթարկած է իր հայութիւնը, զայդ մարդի՛կ», որ երբեք չէին կրնար նման կասկած մը ունենալ, հարեւ, երեւակայել, թէ ի՛նք, որ ճշտասաներորդ ժամուն, իր ծննդեան եօթնասուներորդ տարեդարձին, հաշիւներու հետ քիչ հաշիւ ունեցող տարիքի մը ուրացման բացայայտ փաստի մը տպագրութիւնը հունդուրժելով պատճառ դարձաւ այս վրդովումին: Առաջին բողոքողը ինք՝ էդ. Յովհաննիսեան կ'ընդգծէր Պաշտօնականի հայութիւնը, քանի մը տողի մէջ խոսեցնելով այդ ահօսով կուսակուած ու հաստատուած խաչատուրեանական բոլորակէ ճշմարտութիւնը.

«Եթէ այսօր Արամ հայատրեանը Արամ հայատրեան է եւ արժանաճում է ծափահարութիւնների, սպա այդ փառքի մեծ մասը պատկանում է հայ ժողովրդին: Ը ինչպէ՛ս կարելի է մտածել այլ կերպ: Զէ՛ որ այն կիրքը, որով մա ստեղծագործում է՝ հայկական է, այն աչքերը, որով մա տեսնում է գեղեցիկը՝ հայկական են, այն զգացմանները, որով մա ընկալում է մեղաշնորհութիւնը՝ հայկական են, այն մտածելակերպը, որով մկարագրում է նշմարտութիւնը՝ հայկական է եւ մերը կաթը ու օրօրցայինները մոյցմէն հայկական են: Ինչպէ՛ս կարելի է ունենալ այդքան հայկական յատկութիւններ, այդպիսի հայկական կառուցումք, ՀԱՅԿԱԿԱՆ ԷՌԻՓԵԱՆ ԵՆՈՐ ՀԻՒ ԿԱՐՈՐԵԱՆ այդպիսի փառաւոր պատուանդանի վրայ եւ յայտարարել, թէ ես ինձ հայ չեմ համարում»:

Իրենց կարգացածը ճիշդ հասկնալու սրժանապատուութեան տէր ընթերցողները այս հաստատումներուն մէջ դուր պիտի փնտռեն այն մեղադրանքները, որ իրր թէ «այդ մարդիկ» կասկածի տակ կ'առնեն Պաշտօնականի հայութիւնը, որով նաեւ ճիշդ իրենց են կողոպտում»: Բայց եղածը Պաշտօնականի հայութիւնը ուրանա՛լ է իրապէ՛ս, թէ անոր ուրացումը անկարելի յայտարարող հաստատում, «Իրենք իրենց կողոպտելու» ճի՛շ է սակաւ ի վերջոյ, թէ՛ կողոպտուելու ճի՛շ:

Արամ Պաշտօնական ընաւ պէտք չունէր «այդ մարդոց» լսածը, գիտցածը, զրածը վերապատմելու, յիշելու իր հայութիւնը, դործներուն հայկական էութիւնը: Հայ մարդուն համար պիտի բաւէր դիտնալ, թէ ի՛նք կատարած է «Մովսէսական Ռոստի» թերթին 6 Յունիսի համարին մէջ իր անունով հրատարակուած յայտարարութիւնը, թէ թղթակիցը ի՛նչ-ի՛նչ հաշիւներով կամ թիւրմտցարար իր գրութեան մէջ թոյլ տուած է խնդրոյ առարկայ այդ անհեթեթութիւնը: Երաժիշտը խօսած է նաեւ այդ մասին, իր հիւրին կողմէ զրի առնուած միշտ նոյն օրագրութեան մէջ:

— Հիւանդանոցում պառկած էի, երբ քերթի բոլակիցը եկաւ ինձ

մտ... Պարզ է, ես այդպիսի բան չեմ ասել, ու չէի կարող ասել, չէ՞ որ ծի-
ծագելի կը լինէր: Ասել եմ, որ հայ եմ, ծնուել եմ վրաստանում, ուսումնս և
դաստիարակութիւնս առել եմ Մոսկուայում»:

Ու քանի մը ատր վար.

«... Եւ երբ թղթակիցները ինձ հարց տան, կը պատմեմ, կը շեշտեմ,
որ հայ եմ, սովորեի եմ Մոսկուայում ու հայկականի հետ կրել բարերար ազ-
դեցութիւնը ուսական երաժշտութեան, որին շատ բանով եմ պարտական:
Իմ ամբողջ ասածը այս է եղել ու մնում է այս — մնացածը անհիմն է ու ծի-
ծագելի՛ տառջին հերթին ռուս երաժիշտների համար, որոնք ամէն առիթով
շշուտել են իմ երաժշտութեան հայկական ակունքները: Փաստեր, վկայու-
թիւններ՝ ինչքան ուզէք...»:

*Սոյն խօսքերը բովանդակող գրութիւնը կ'ուզէ ձգել այն սպառնու-
թիւնը, որ հարցը կը դոցուի այս ձևով եւ ատանձին, անպաշտպա՞ն կը
մնան իրաւասութեանի շինքս ինձ համարում եմ ռուս» սպառնալ յայտարար-
ութեան դէմ ընդդրոջները, որոնք, այս անգամ յօգուածագրին կարծիքով՝
«կը փորձեն անարգել, վարկարելի ճան հայ մը ու ճման մարդ մը, որուն
անունը հայարտութիւն ու անցագիր է մեզի համար եւ որուն գործը, ամբողջ
էութեամբ հայկական գործը՝ մեր մշակչի հարստութեան ու յաւերժու-
թեան երաշխի՛քն է ու վկայութիւնը միանգամայն»:*

*Թէ ի՞նչ վարձին էութիւնը այդպէս է, եւ տեւողական անոր բախը՝ այն-
պէս, նոր չէ որ պիտի գիտնանք: Խաչատուրեան արուեստագէտին մեծու-
թիւնը ծանօթ է ամէնուն, անըմբռնելին մարդ իրաւասութեանի փոքրագու-
թիւնն է, որ կը շարունակէ անըմբռնելի մնալ, հակառակ ուրիշին գրութեան
մէջ ի՞նչ դաւարուն ինքնապաշտպանութեան եւ ուրիշներուն պաշտպանողական
ճառերուն:*

«Վաղը, Պէյրութ վերադարձիս, — կ'ըսէ յօգուածագիրը, — պիտի
գրեմ այս հանդիպման մասին: Պիտի անվայման գրեմ...»:

«Եւ, ա՞վ գիտէ, թերեւս խղճահարութեան առիթ մը ընծայեմ անոց,
որոնք անխղճօրէն անարգական անօրինակ արշաւ մը կազմակերպեցին մե՛ծ
հայուն, մե՛ծ մարդուն ու մե՛ծ երգահանին դէմ, որ այժմ ու դարերուն հա-
մար կը կոչուի՝ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԻԱՆ»:

*«Անոնց» ընծայում խղճահարութեան առիթի մը հանդիսատես ըլլալէ
աւելի, ուշիմ ընթերցողը նկատեց հարկաւ, որ անգոր կատարութիւն մը
յգարտկող անգորի մը դէմ յանդիման կը պտնուի դարձեալ: Արդարեւ,
Հիւրընկալին տան մէջ, քոնեակի բաժակներուն առջեւ տեղի ունեցող խօ-
սակցութիւն մը խմբազերելով՝ մարդիկ կրնան թերեւս պաշտօնական թերթի
մը մէջ եղած յայտարարութիւնը հերքած ըլլալու պատրանքը տալ շարքային
ընթերցողին, բայց մատնանշուած խաչատուրեանական վէրքը ըստ էութեան
կը մնայ նոյնը՝ — «Ինքնս ինձ համարում եմ ռուս»:*

*Ի՞նչ բարտարար, միայն շարքային ընթերցողները չինկան աչքի փոշի
ցանող յուշագրական վերոյիշեալ յօգուածին մշուշներուն մէջ: Յօգուածա-
գիրնե՛րն անգամ տարուեցան Մոսկուայէն բերուած իրապայտօնէն: Առաջին
հերթին, այս գրութեան սկիզբը յիշատակուած Մանուէլ Աշաճեանը, որ սե-
նակի մը մէջ անձի մը ըրած իրաւասութեանի յայտարարութիւններով ինք-
զինք բաւարարած համարելէ ետք, «Արարատ»ի 24 նոյեմբերի թիւին մէջ
«Ինչո՞ք համազուն» խորագրով գրութիւն մը ստորագրեց, դժուար համոզուող-
ները նեղ կացութեան մը մատնած ըլլալու երջանի՛կ զոհունակութեամբ:
«Արարատ»ի յօգուածագիրը կ'ըսէ.*

«Այսօր գոհունակութեամբ կը յայտարարեմ, թէ առաջինը հակազդեցիմք այդ ազգավեճա յողուածին՝ յեճուելով ոչ թէ չոր փաստերու վրայ, այլ տրամաբանութեան, արուեստի մասին մեր ունեցած հասկացողութեան, հաշատրեան մարդու եւ անոր հասարակական գործունէութեան վրայ»:

Մենք չենք դիտեր, թէ ի՞նչպէս կրնան մարդիկ յողուած գրել զյեճունելով ոչ թէ չոր փաստերու վրայ, այլ տրամաբանութեան: *Մենք չենք գիտեր նոյնպէս, թէ տրամաբանութիւն մը ի՞նչպէս տրամաբանական կ'ըլլայ, երբ կ'անտեսէ չոր փաստերը:* *Չենք դիտեր տակաւին, թէ յողուածագիր մը նման տրամաբանութեամբ ի՞նչպէս կը համարձակի հանրային բեմի մը ներկայանայ:*

Մանուէլ Ազամեան երջանիկ Նոյն միամտութեամբ կը շարունակէ Հուլիսուտէ ընծայելի Պաշտօնականի «սենեկային երաժշտութեան».

«Ազգուած բանավեճին վրայէն անցաւ մի քանի ամիս: Վստահ էի, թէ անցանկալի բանավեճը իր մանրամասնութիւններով ծածկոթ է Արամ Խաչատրեանին եւ անհամբեր կը սպասէի հակազդեցութեան: Քիչ մը ուշ, սակայն այդ հակազդեցութիւնը եկաւ, եկաւ շատ վճռական»:

Եկա՞ւ սակայն հակազդեցութիւնը եւ եկածը իրապէ՞ս միակն է: *Չենք կարծեր, որ «Արարատ»ի ընթերցողները յողուածագիրին դիրքութեամբ կարծիք կը կազմեն «քիչ մը ուշ» համոզող հակազդեցութիւններու մասին եւ քիչ մը երկար չեն մտածեր «քիչ մը ուշ»ին հետեւող հակազդեցութեանց ուշացման պատճառներուն մասին: Զմոտեանք: Հակառակ հարցին տեղեակ ըլլալուն («Աստուած իմ, ձեռքիմ «Ազգակ»ն է...»), Արամ Խաչատրեան հակազդեցութեան ոչ մէկ փորձ ըրած է: Զրոյցի մը ընթացքին բառած խօսքերը բնական հակազդեցութեան մը հրամայականէն բխած կարելի չէ համարել տակաւին: Անշուշտ: Քիչ մը ուշը մտածել կու տայ, որ եթէ Արամ Խաչատրեան Պէյրութէն հիւր շունեհար, ո՛չ միայն «քիչ մը ուշ», այլեւ բնաւ պիտի չգիտէր «հակազդեցութեան»:*

«Կանչ»ի յողուածին մէջ մեր մտանանշած հատուածներէն մէկը («Իմ ազգութիւնը վճռուած է...») մէջբերելով, «Արարատ»ի յողուածագիրը կը կարծէ տակաւին, թէ՛

«Այս յայտարարութիւնը իր մէջ կը բովանդակէ այն ամէնը, ինչ պիտի գոհացնէր բոլոր Թովմա առաքելները»:

Մենք, ինչ խօսք, նման պարագաներու, Թովմաներ ենք ու Թովմասական: Մնաց որ, եթէ անգամ ուրիշներու չափ դիրահաւատ ըլլանք, չենք խորհիր, որ վերջը կը սոյխնայ յանկարծ: Որովհետեւ Հայ մարդուն ձգած կոմ առած տպաւորութիւնը հարցին մէկ էր ենք է միայն: Ի վերջոյ Հայ Թերթի մը մէջ չէ սպուած Պաշտօնականի յայտարարութիւնը եւ Հայ ընթերցողներուն միտաւորուած խղճմանքին օրօք կարգալով խնդիրը դոցանած կարելի չէ համարել: Մահանագու Հայ մը չէ՛ Պաշտօնական: Մեր մեծերէն է: Ու մեծերը պարտաւոր են նաեւ յայտ օտարին դուրգուրալ ազգային պատկանելիութեան մը, իրենց մեծութեամբ առաւել եւս մեծցնեն ազգը, ազգային օրակը եւ ոչ թէ կոմակորութեամբ փութան լուծուել օտար ուղիքանսերուն մէջ:

Պահ մը ենթագրենք տակաւին, որ մենք՝ Հայերս, կոյր զկուրայն Հուլիսուտէ ընծայեցինք «Կանչ»ի մէջ սպուած յողուածին ու ջնջեցինք մեր մէջ առաջացած աննպատ տպաւորութիւնը, ի՞նչ պիտի մտածենք սակայն այն ատեն «Կանչ» չկարգացող եւ «Սովետական Ռուսիա» կարդացող բոլոր եւ ոչ-բոլոր միլիոնաւոր ընթերցողներուն մասին, ի՞նչ պիտի մտածեն անոնք մեր մասին, երբ Պաշտօնականի չափանիշով մարդերը բոլորացման յայտարարութիւնը կ'ընեն:

բարութիւններ կ'ընեն, կամ իրենց անունով մտքանենդօրէն կաարուածները չեն հերքեր նոյն բեմէն: Իրենց մինուհար ընթերցողները սենեկային խօսքերով օրօրող յօդուածագիրները կը մտածեն արդեօք այս բոլորին մասին, թէ ցաւազին այս տուեալներուն վրայ բարձրացած դիմացի ցաւազին ազդեցիկներուն թիթեօրէն պատասխանելով կը շատանան ու կը կարծեն ծառայած ըլլալ Հանրային կարծիք ղեկավարելու պատասխանատու կոչումին:

Ո՛չ, խաչատուրեանական վէրքը ըստ հոսթեան կը մնայ նոյնը: Փորձենք աւելի պարզ ըլլալ:

Պաշտօնական «Եմէս ինձ համարում եմ որ» յայտարարութիւնը բովանդակող «Ազգայնական Ռոսիան» լրջ տեսած է 6 Յունիսին:

Այդ մասին «Ազգայնական» մէջ լրջ տեսած էր. Յովհաննիսեանի գրութիւնը՝ 23 Յունիսին:

«Ազգայնական» օրաթերթը Պաշտօնականի ձեռքը հասաւ Հաւանաբար տասը-տասնըհինգ օրէն, Յունիսի առաջին շաբաթներուն:

Իսկ Պէյրութի հիւրը Պաշտօնականի զուտ բախած է 14 Սեպտեմբերին:

Ուրեմն ամբողջ շրջան սպասած է Պաշտօնական եւ չորս ամիս մտք միայն կ'անդրադառնայ, թէ «Ես այդպիսի բան չեմ տեսի ու չեի կարող տեսի», եւ շատուր կ'ըսէ ոչ թէ «բնական» տպած «Ազգայնական Ռոսիան» թերթին, այլ այդ մասին հետաքրքրուող պէյրութցի հիւրին:

Այս պայմաններուն մէջ արտօնուած ենք մտածելու, որ վերի մէջբերուածներուն մէջ տեղաւորուած արտայայտութիւնները իրական չեն, թատերական են աւելի: Որովհետեւ, ինքզինքը այդքան դառնացած, խոցուած, ազգային զգացումներուն մէջ այդ աստիճան վերաւորուած ձեւացնող մարդը, «չի լինի, այդպիսի բան չի լինի, անհիմն է, ծիծաղելի է» բացազանչող ու ինքնիր մէջ աւելորդ հողին, արամբանական չէ, որ ամբողջ շրջան ամիսներու պահէր իր պայթուցիկ գառնութիւնը եւ անմիջապէս չպայթէր ազգային իր պարունակները շարափոխող շարաշահներուն գլխուն, «Ազգայնական Ռոսիան» թերթին եւ անոր թղթակիցին գլխուն, իր ստորագրութիւնը կրող թուղթով մը, «Ես այդպիսի բան չեմ տեսի եւ չեի կարող տեսի» հերքումով:

Ո՛չ, այս յայտարարութիւնը եւ իրաւ կասկածելի հանգամանակներուն մէջ դրոշմաւորուած դառնութիւնները Համոզիչ չեն: Մնաց որ, ինչպէս կը յիշեցնէինք «Բագին» Սեպտեմբերի Համարին մէջ, ինքզինք որս դաւանելու խաչատուրեանական այս ելոյթը առաջինը չէ: Երկու տարի առաջ, «Ազգայնական» թերթին մէջ, այս անգամ ի՞ր ստորագրութեամբ երեւցած յօդուածը կը պարունակէր նոյն միտքը, այն՝ որ

«Ազգայնական» հայ եմ, ծնած եմ Վրաստան եւ շատ յարաբերութիւն ունեցած եմ ազգայնական մշակոյթին հետ:

«Բայց ճշմարտութիւնը այն է, որ անոնցմէ ձեռք մեկտն տեսի որս եմ, քան որ աւելի քան յիսուն տարի ապրած եմ Մոսկուայի մէջ»:

Հրամայէ՛ք: «Ճշմարտութիւնը այն է, որ անոնցմէ ձեռք մեկտն տեսի որս եմ»: Կը նշանակէ, թէ «Ազգայնական Ռոսիան» թերթին մէջ Պաշտօնականին անունին դիմաց արկածով մը երեւցած չէր «Ռոսիան», այլ ապուած էր արտաքին կամ ներքին հետեւողական ճնշումի մը հետեւանքով:

Արամ Պաշտօնական իր ստորագրութեամբ եւ սուսական թերթի մը մէջ երեւցող հերքումով միայն կրնայ Համոզիչ դառնալ եւ ոչ թէ սենեկային իր աւելորդութիւններով...

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

Ե Ր Կ Ո Ւ Խ Յ Ս Ք

Ա Մ Ե Ր Ի Կ Ե Ա Ն Կ Ա Ր Ճ - Կ Ա Ր Ճ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ծ Ր Ի Ի Մ Ա Ս Ի Ն

Ասենք անմիջապես, որ այս գրութիւնը կարճ-կարճ պատմութեան գրելաձևի ուղեցոյց չէ, այլ միայն ծանօթութիւն:

1

Կարճ-կարճ պատմութեանը դեղար-ւետական արձակի զուտ ամերիկեան ձեւ է: Այն կարճ-կարճ պատմութեան է կոչուում (Short-Short Story), որովհետեւ մեր, հայկական, կամ միջազգային ըմբռնումով սովորական պատմութեան ու նորավէպին, ամերիկացիներն իրենք էլ չգիտեն թէ ինչու, կարճ պատմութեան (Short Story) են անուանում:

Կարճ-կարճ պատմութեան իր քրոջից՝ մեր բմբռնումով՝ պատմութեան կամ ամերիկեան կարճ պատմութեան տարբերում է իր զարմանալի կարճութեամբ: Տարիներէ ընթացքում այն մը-չակուել է, յիկուել ու կոկուել եւ այժմ ստացել է իր մնայուն ձեւն, այն է՝ հազար երկու հարիւր բառի սահմաններում, որը ժողովրդագիտական հասարակութեան կողմէն ընդունուած է:

Կարճ-կարճ պատմութեան այդ առաւելագոյն ծաւալն արդէն քաղաքացիական իրաւունք է ստացել եւ խախտել այդ սահմանում մի գրողի համար դժուար է, որովհետեւ լայն մրցակցութեան պատճառով ամերիկեան զբաղման պարբերականները խմբագիրներն անդրդուելի են իրենց առաջարկած պայմաններում: Բայց եւ այնպէս, կան հազար երկու հարիւրից աւելի եւ պակաս բառ պարունակող կարճ-կարճ պատմութեան: Պակասը միշտ էլ ընդունելի է: Աւելին՝ դժուար ընդունելի, եթէ հեղինակն «անուն» չէ...

2

Ամերիկացի սկսնակ գրողները թիւրիմացաբար միշտ էլ կարճ-կարճ պատմութեան են սկսում զբաղման ասպարէզ

մտել: Այդ՝ երկու պատճառներով: Նախ պէտք է ասել, որ այս երկրում, չուանն աւելի դիւրութեամբ կարող է աւելի աւանջով անցնել, քան մի սկսնակ կամ քանուն չունեցողը դրող իր գործը գրական մի պարբերականում հրատարակւած տեսնել: Սկսնակ գրողի տաղանդի մասին խօսք չի կարող լինել, որովհետեւ խմբագիրներն առանց կարգալու, շատ անգամ նորնիսկ առանց ծրարը քննելու, այն վերադարձնում են ուղարկողին: Ամերիկեան խմբագրին անուն է պէտք, եւ ոչ տաղանդի յայտնաբերում:

Կարճ-կարճ պատմուածքի դէպքում այդ սպանիչ անտարբերութեամբ ստեղծւած դժուարին պայմաններն աւելի մեղմ են, որովհետեւ ամէն մի պարբերականի խմբագիր, համարեա՛ թէ, կարճ-կարճ պատմուածքի կարիք է զգում, եթէ տրւեալ պատմուածքը թե՛ման համապատասխան է իր պարբերականի «ուղղութեանը», եւ եթէ կարիք կայ վաճառքային յաշարարութիւնների սիւնակների տարածում գեղարուեստական բան հրատարակել:

Սկսնակ գրողների համար կարճ-կարճ պատմուածքի երկրորդ գրաւշութիւնը նրա կարծութիւնն է, որը ձեւ է միայն:

Սկսնակ գրողները միշտ այն սխալ կարծիքին են, որ եթէ այն կարճ է, ապա եւ գիւրին է այն գրել: Այդ ամենեւին էլ այդպէս չէ: Շատ փորձառու գրողների համար նորնիսկ կարճ-կարճ պատմուածք գրելը շատ դժուարին է: Այդ առաջնում է, ինչպէս նախապէս ասացինք, նրա տարածքի փոքրութիւնից:

Կարճ-կարճ պատմուածքը գրական շատ սեղմ ձեւ է: Ասում են, որ այդ ձեւի պատմուածքում դորձածուած մի բառը փոխարինում է տասը բառին վէպում, եւ հինգ բառին՝ սովորական պատմուածքում: Բառերի խնայողութիւնը կոտորւում է ի հաշիւ հեղինակի անձնական մտածումների ու խորհրդածութիւնների, դորձողութեան վայրի ու եղանակի նըկարագրութիւնների, դորձող անձանց

հոգեբանական ծաւալուն վերլուծումների, նրանց արտաքին պատկերումների, եւ այլն:

3

Սակայն միայն բառերի խնայողութեամբ չէ, որ ստեղծւում է կարճ-կարճ պատմուածքը: Ճիշդ է, տնխնիկան բարդ է, բայց այն դիւրութեամբ իւրացւում է, եթէ գրողները յամառութիւն են ցուցաբերում:

Ենթելով այն խմատութիւնից, թէ ինչքան փոքր է իրն, այնքան կարճ է նրա նկարագրութիւնը, կարճ-կարճ պատմուածքի փորձառու գրողներն առաջարկում են նուազագոյնի իջեցնել՝

- ա. Գործող անձանց թիւը,
 - բ. խտացնել գործողութիւնների ժամանակը, վայրը, եւ՝
 - գ. խտացնել գործողութիւնները:
- Պէտք է ասել, որ այդ նորութիւն չէ, այլ հին յունական զմի ժամանակ, մի վայր եւ մի գործողութիւնը զբաղանտնխնիկական մեթոդ:

Սակայն, շատերը կարծում են, որ վերոյիշեալ պայմաններով գրուած պատմուածքը զուրկ կը լինի հոգուց, արիւնից եւ սրտից, որ այն ուրուագծային կը լինի:

Այդ այդպէս չէ: Անշուշտ, ուրուագծային չգրելու համար պէտք է տառապել: Բայց ո՞վ, ո՞վ, եթէ ոչ գրողները գիտեն ստեղծագործական տառապանքի անլափելի մեծութիւնը:

4

Մեր այս գրութեան երկրորդ հատւածում ասացինք, որ կարճ-կարճ պատմուածքում խնայողութեան համար յապուում են, դորձողութեան վայրի, ժամանակի, եղանակի, գործող անձանց արտաքինների նկարագրութիւնները: Բայց եթէ մի հեղինակ գտնում է, որ պէտք է

խօսել զբանց մասին, ապա նա խօսում է միջանցուկ կերպով, այլ ոչ՝ նկարագրելով:

Ասենք, մի կարճ-կարճ պատմուածք գործողութիւնը անդի է ունենում մի նեղ հովտում, եւ հեղինակն ուղում է խօսել վայրի եւ ժամանակի մասին: Նա փոխանակ նկարագրելու ամբողջ հովտը եւ գործողութեան ժամանակը, որ երեկոյ է, միայն գրում է՝

«Արեւը հազիւ էր մայր մտել, բայց մեզ հովտում արդէն մութ էր...»:

Եթէ հեղինակն ուղում է ասել, որ իր գործող զլխաւոր անձն մի գրաւիչ երիտասարդ է, նա ոտից ցզլուի չի նը-կարագրում այդ երիտասարդի արտա-քինը, այլ միայն գրում է՝

«...Նա ձեռքի ափը սանցրեց իր գրաւիչ դէմքի վրայով...»:

Եթէ հեղինակը ցանկանում է ցոյց ասել, որ այսինչ գործող անձը մի եր-կարահասակ մարդ է, նա չի նկարագրում այդ մարդու մարմնային կազմուածքը, այլ միայն գրում է՝

«...Սեղանի տակից դուրս էին եկել նրա երկար շաւերը...»:

Նոյնը եւ եղանակի նկարագրութիւն-ներն մէջ:

Հեղինակը փոխանակ երկար-բարակ նկարագրելու եղանակը, որ ասենք անձ-րեւային է, միայն գրում է՝

«...Զնայած դրո՛ւ խոնարհանքնը եւ դէռ շարունակուող անձրեւին, նա ա-նանց գլխարկի եւ անձրեւանոցի դուրս եկաւ փողոց...»:

Վերեւում մէջբերուած օրինակները, ո՛չ դասական են եւ ոչ էլ օրինակելի օրի-նակներ, այլ միայն նմոյշներ, ցոյց տա-լու համար, թէ ինչպէս են խնայում բո-ւաքանակը կարճ-կարճ պատմուածքում:

Բայց ինչ էլ ուղում է լինի, կարճ-կարճ պատմուածքում երբեք չի կարելի հանդիպել այլևս հինցած ու Բլիշէ դար-ձած այնպիսի նկարագրութիւնների, որոնցմով լեցուն են զգացականութեանը հետեւորդ շատ զբողներն գործեր: Օրի-նակ.

«Գարուն էր: Դաշտ ու անտառ կա-նաչ էին հագնել եւ ողողուել մայրիսան արեւի ոսկեգոծ շողերով...»:

Կամ՝

«...Երկինքը լալիս էր...»:

Կամ՝

«...Լուսինն ամօքից դէմքը ծածկեց ամպերի յետեւը...»:

Կամ էլ՝

«Արեւը սկի էր ցանում գաշտերի վրայ...»:

Կարճ-կարճ պատմուածքը նման զգա-ցականութիւններ չի ընդունում եւ լու է անում, որովհետեւ, նախ՝ դրանք ճիշդ չեն եւ, յետոյ էլ՝ ոչինչ չեն աւելացը-նում պատմուածքի գեղարուեստական արժէքի վրայ:

5

Կարճ-կարճ պատմուածքը իր տա-րածքով փոքր լինելով, թեման էլ պէտք է փոքր լինի:

Կարճ-կարճ պատմուածքի համար չի կարելի այնպիսի թեմա ընտրել, որը յարմար է սովորական պատմուածքի կամ վէպի համար:

Այլ կերպ, այդ նման կը լինի հսկայ մի ժայռ պայթեցնել այն գորութեան ու-ժանակով, որը նշանակուած է սեղանի մեծութեան մը քարի կամ ժայռակտորի համար: Այսինքն՝ կարելի է պայթեցնել, բայց այդ ժայռից փոշի անգամ չի բարձ-րանայ, երբ մեր ցանկութիւնն է եղել այդ ժայռը մի քանի մասերի ճեղքել:

Ուրեմն ընտրում են թեթեւ թեմա-ներ: Իսկ այդպիսի թեմաների թիւը շատ-շատ է: Նիւթ են ընտրում առօրեայ կեանքից, որոնց մենք ականատես եւ ա-կանջալուր ենք լինում: Այդ ուղղու-թեամբ շատ նիւթ են քաղում թերթերից եւ ձայնասփիւռային հաղորդումներից:

Այդ բոլորի կենտրոնում է կանգնած մարդը: Զարմանալի մարդն, երբեմն իր ջինը, երբեմն էլ մու՛թ ու աւաւոր հո-գիով: Սէր, ստեղծութիւն, մարդասիրու-

թիւն, բարեպիտեթիւն, ինքնապաշտու-
թիւն, ազատութիւն, տարիանք, փառա-
սիրութիւն, համեստութիւն, եւայլն,
եւայլն: Բայց ոչ քարոզ, որովհետեւ դը-
րողը հողերան-գեղազէտ է եւ ոչ այլ
ինչ: Գրողը միայն նշում է փաստը, եզ-
րակացութիւնը թողնելով ընթերցողնե-
րին:

Սակայն, կարճ-կարճ պատմութե-
քում կարեւորը թեման չէ, այլ զրեւա-
ձեւը, այն է՝ տեխնիկան:

Պէտք է սեղմել, սեղմել եւ նորից
սեղմել: Շատ անգամ այդ սեղմումները
նման են լինում նեղ կօշիկի, որ ցուեցը-
նում է ոտքը: Սակայն, այդ լինում է այն
ժամանակ միայն, երբ դրողը մեծ թեմա
է ընտրում, տարածքով փոքրիկ պատմը-
ւածքի համար:

6

Ճնշուելուած է, որ կարճ-կարճ պատ-
մըւածքն անսպասելի մի յայտնարերու-
մով վերջանայ. կամ ինչպէս բրոնզերն
են ասում՝ «պայթիւնով»:

«Պայթիւնով» է վերջանում Փրան-
սացի դրող Գի-դը-Մօպսանի «Մանեա-
կ»ը անունով պատմութեքը, որի բովան-
դակութիւնը շատ պարզ է եւ հոյակապ:

Յածրաստիճան մի պաշտօնեայի կին
առաջին անգամ լինելով պիտի զնայ պա-
րահանդէս: Երիտասարդ կինը գեղեցիկ
է, բայց է՛լ աւելի գեղեցիկ երեւալու
համար նա իր մի ծանօթուհուց խնդրում
է նրա աղամանդեայ մանեակը այդ դի-
շեք կրելու համար:

Երեկոն անցնում է շատ յաջող: Ա-
մուսինները տուն են վերադառնում զը-
ւարթ տրամադրութեամբ: Բայց ասանը
նրանք յայտնարերում են, որ կորել է
փոխ վերջուած մանեակը: Նրանք փրճա-
տում են երկար, բայց չեն գտնում: Միւս
օրը, նրանք զնում են մի ոսկերիչի մօտ
եւ պարտքով ու ահագին գումարով դը-
նում են նոյնանման մի մանեակ ու վե-
րադարձնում տիրոջը, որը ոչինչ չի նը-

կատում: Նրանց մնում է վճարել ման-
եակի պարտքը, որը շատ մեծ է: Ամու-
սինները զրկում են իրենց ամէն ինչէց:
Երիտասարդ ու գեղեցիկ կինը ամբողջ օ-
րերը լուացք է անում, յատակ լուանում
եւ կատարում է ամէն տեսակի ծանր աշ-
խատանք: Տաս տարուց յետոյ, երբ այլ-
եւս վճարուած է լինում աղամանդեայ
մանեակի պարտքը, երիտասարդ կինը
փոխուած է լինում մի զառամեայ կնոջ:
Մի օր նրան հանդիպում է մանեակի աչ-
քը եւ զարմանալով նրա արտաքին փո-
փոխութեան վրայ, հարցնում է պատճա-
ռը:

Այդ ժամանակ զժբախտ կինը պատ-
մում է ամբողջ պատմութիւնը:

« — Բայց, խեղճ ընկերուհիս, —
ասում է մանեակի տէրը, — չէ՞ որ
կորցրածդ իմ մանեակը ամբողջովին
կեղծ էր»:

Բառիս լայն իմաստով Մօպսանի
այդ կատարեալ պատմութեքի պայթիւ-
նը կամ անսպասելի յայտնարիւնը Հենց
մանեակի կեղծ լինելն է:

7

Սակայն, կարճ-կարճ պատմութեքից
ո՛չ միայն անսպասելի յայտնութիւն է
պահանջում, որը պարտադիր չէ սովո-
րական պատմութեքի եւ վէպի համար,
այլեւ իւրապատուկ մի թեթեւ թեմա,
սեղմ, բայց շատ բան ասող մուտք եւ
բովանդակութեան կուռ զարդացում:

Մօպսանի «Մանեակ»ը կարճ-կարճ
պատմութեք չէ, այլ՝ սովորական:

Ուշում եմ պատմել վերջերս իմ կող-
մից կարդացուած մի կարճ-կարճ պատ-
մըւածքի բովանդակութիւն եւս:

Ամէն Ձորեղջարթի երեկոյ, տիկին
Նելիի քնակտրոնում են հաւաքում նրա
երեք ընկերուհիները եւ յիսունական
սենթ զնելով սեղանի վրայ «Bridge» տե-
սակի քարթ են խաղում: Քաղի վերջում
չահող տիկինը սեղանից վերցնում է եր-
կու շուլար:

Այդ երեկոյ էլ տիկիները պրիճ էին խաղում եւ միաժամանակ սեմտալիչ ուտում ու զովացուցիչներ խմում, երբ տիկին Նեյին իր Հիւրերին յատնում է, թէ իր ամուսինը, որ այժմ ձիարձակարանում է, քիչ յետոյ իրեն պիտի հեռախօսի եւ եթէ տիկիները Համաձայն են, նա կարող է ամուսնուն ինդրել, որ իրենց երկու դուրսով ձիալազրի տոմս գնի, եւ եթէ այդ տոմսը շահելու լինի, խաղաքարտի մէջ շահող տիկինը կարող է վերջնէլ ձիալազրի տոմսի շահած գումարը, Տիկիները Համաձայնում են:

Քիչ յետոյ, իրապէս տիկին Նեյիի ամուսինը հեռախօսում է եւ տիկին Նեյին իր ամուսնուն յայտնում է իր ընկերուհիների ցանկութիւնը:

Պաղը շարունակում է: Մերիից բացի, միւս երեք տիկիները խօսում են եւ ծիծաղում: Պարզ է, որ նրանք չեն խաղում դրամի Համար, այլ խաղում են ժամանցի Համար: Մերին լուրջ է: Նա խաղում է ուշադրութեամբ:

Պաղը վերջանալու մօտեցը, տիկին Նեյիի ամուսինը զանգահարում է եւ յայտնում, որ տիկիների տոմսը շահել է ութսուն դոլար: Պարզ է, որ խաղը շահողը պիտի ստանայ այդ ութսուն դոլարը:

Քանի խաղը մօտենում է իր վախճանին, այնքան պարզ է լինում, որ այդ ութսուն դոլարը պիտի ստանայ տիկին Մերին, քանի իր շահած կէտերով նա առաջին տեղն է գրաւում: Բայց կացութիւնը փոխում է, երբ բաժանում է քարտերի վերջին ձեռքը: Չորս տիկիներին երկուսը իրենց քարտերը վար են դնում եւ իրենց պարտուած յայտարարում: Մնում են տասներուհի Նեյին եւ Մերին: Երբ Նեյին բացում է իր քարտերը, դարձանքից ուզում է ճշտել: Ինչպէս ստում են, Հաղարից մէկ անգամ քարտերի այդպիսի անպարտելի դասաւորում չի պատահում: Այժմ պարզ է, որ այդ ութսուն դոլարն ինքը պիտի ստանայ եւ Մերին պարտուած է: Նա մտածում է, թէ այդ դրամով նոր Հազուստ եւ շատ

բան է դնելու իր Համար ու նայում Մերին: Մերին յօնքերը կիտած եւ շարուածութեամբ իր քարտերն է դնում: Յանկարծ Նեյին յիշում է, որ Մերիի ամուսինը վեց ամիս է ինչ անգործ է, որ նա ամէն օր քաղաք է դնում աշխատանք գտնելու, բայց ձեռնունայն տուն է դառնում: Որ, թէ եւ Մերին Հպարտութիւնից ծածկում է իր ամուսնու անգործ լինելու Հանգամանքը, բայց նրանց տնտեսական վիճակը շատ ծանր է:

Նեյին միայն մէկ վայրկեան է տատանում, եւ մէկ էլ իր ամէնից զօրաւոր քարտերը նետում է սեղանին, արագօրէն դրանք խառնում մնացած քարտերին եւ իրեն պարտուած յայտարարում: Յետոյ, շմտնելու Համար իրեն իր կատարած «խարդախութեան» Համար, նա էլ ինքով սեղանից իր միւս երկու ընկերուհիներին առաջարկում է:

— Աղջիկներ, դուք շնորհաւորեցէ՛ք Մերին, իսկ ես դնում եմ սուրճ պատրաստելու:



Այս մի տիպից կարծ-կարծ պատճըրւածք է, որը նոյնիսկ Հաղար բառ չի պարունակում: Այս պատճըրւածքը կուռ է եւ միաձոյլ, սրովհետեւ կազմուած է միայն մէկ պատկերից: Ետտեքը կարող են կարծել, որ այն բարոյախօսական է, ուրեմն եւ գուրկ՝ գեղարուեստական արժէքից: Բայց այն բարոյախօսական չէ, որովհետեւ տիկին Նեյին իր ունեցած քարտերի զօրութեամբ չի շահում ութսուն դոլարը եւ յետոյ այն նուիրում կարիքաւոր Մերին: Պատմուածքը վերջանում է պայթիւնով (տիկին Նեյիի ծածուկ զոհարեցութիւնը) եւ խոր տպաւորութիւն ձգում ընթերցողի վրայ:

Վերեւի կարծ-կարծ պատճըրւածքը ուսանելի շատ բան ունի:

Նախ՝ հեղինակը բառերի ծայրայեղ ինայում է կատարել: Նա չի նկատարել չորս տիկիների արտաքինները եւ

Նրանց հաղուստ-կապուտը: Նա չի նկարագրել բնակարանը: Նա մի բառ չի ասել տիկինների անցեալների մասին եւ չի բնութագրել նրանց խառնուածքներն ու հոգեկան աշխարհները: Նա մի բառ չի ասել Եղանակի մասին: Ժամանակի մասին միայն ասել է, որ օրը Ձորեքշաբթի էր եւ երեկոյ:

Կարեւոր է նաեւ նրա զրելւածել վարպետութիւնը: Նա ոչ մի բառ չի ասել տանտիրուհու հոգեկան աղետութեան մասին եւ ոչ մի բառ էլ չի ասել Մերիի անտեսական ծանր վիճակի մասին: Եթէ ասէր, այդ կարճ-կարճ պատմըածքը կը կորցնէր իր դեղարուեստական նշանակութիւնը եւ այն կը դառնար քարոզ:

Գեղարուեստական արձակի մի երկի յաջողութիւնը Հենց դրանում է, որ Հեղինակը չի ճզնում դրսեւորել իր գործող անձանց հոգեկան աշխարհներն, այլ թողնում է, որ գործող անձինք իրենք այդ անհն: Եւ նրանք այդ անում են իրենց գործունէութեամբ, երկախօսութիւնների միջոցով կամ իրենց ներքին մտորումներով կամ էլ ներքին մենախօսութիւններով, որը Հիմա շատ տարածուած գրելածեւ է դարձել:

Եւ այդպէս, կարճ-կարճ պատմութեան չի Համար ընտրուած է պարզ ու թարմ

մի թեմա, որի շուրջը եւ հիւսուած է ամբողջ պատմութիւնը:

Ձանց են տանում երկրորդական կամ երրորդական տեսարաններ: Ձանց է ասուելու գործող անձանց անցեալը: Ձանց են տանում ամէն տեսակի նկարագրութիւններ:

Գործող անձանց հոգեներկայացումները կատարուած են նրանց գործունէութեամբ կամ կարճ ու կուռ երկախօսութիւններով:

Գործող անձինք երեւում են ու անցնում արագօրէն, բայց աչքառու կերպով: Պատմութեան զարգացումն ընթանում է ուղղակի (առանց շեղումների եւ յետագարձ հայեացքների) եւ անմիջականօրէն:

Ոչ մի անձի, իրի, որեւէ երեւոյթի, գործողութեան մասին մի բառ անգամ չի ասուում, Եթէ դրանք որեւէ գեր շունեն կամ էլ չեն սատարում պատմութեան զարգացմանը:

Եւ, որովհետեւ ամէն մի կարճ-կարճ պատմութեան զարգացումը պիտի վերջանայ պայթիւնով կամ անակնկալ յայտնութեամբ, Հեղինակը մէկ կամ երկու բառով, բայց շեղակի, նախապէս զգացնել է տալիս այդ մասին, որպէսզի տրամաբանական հետեւութիւն ունենայ պատմութեան վերջը:

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

Ս. Կ Ի Բ Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ե Ա Ն Ա Ն Մ Ի Զ Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

XV

Բանաստեղծական լեզուն հազարակցութեան միջոց ու մտածումները բանաձևեղ ազգակ մը բլլալէ առաջ՝ ինքնատրոնում մըն է, գոյութեան մը հարցը, բազմազան կարողութիւններ պարփակող կարեւորագոյն շաղախն ու արիւնը՝ մարդուն կերտման արարքին մէջ: Լեզուին առաջնակարգ նպատակը ուրիշ բան չէ հոս, եթէ ոչ փոփոխութեան մը յաջողութիւնը իրագործող ա՛յն երկրաշարժը, որ կը ցնցէ մեզ, կը փշրէ մեր միտքն ու հոգին բանտարկող սովորական մտածումներու եւ զգացումներու թանձր պարխուզը եւ, ի վերջոյ, կը դառնայ մղիչ ուժն ու աւիւնը տնկարելի գեղեցկութեան ափերն ի վեր ճախրող գործողութեան:

Նման լեզու մը միաժամանակ ե՛ւ ճարտիւիսք է, ե՛ւ անաւարտ գործողութիւն մը: Հոս գիրեր, ձայներ, հնչիւններ ու երաժշտութիւն մը բլլալու սահմաններէն դուրս եկած կարողութիւններու ամբարներ են, թռիչք են բառերը, որոնց մէջ կ'եռայ արտասովոր գործողութեան մը արիւնը, շերտութիւնը, տրոփներն ու երանգները:

Այս հեռաւորութիւններով հարուստ բանաստեղծական լեզուի մը սլաքաորման ականատես կ'ըլլանք Ճպրան իսախի Ճպրանի մօտ, որուն դրականութիւնը, շնորհիւ այս կենսատու ուժին՝ կ'ըլլայ ջերմ ու եռուն: Աւելի՛ն. յեղափոխական ու միատիպ մթնոլորտ մըն է Ճպրանի գրականութիւնը, ուր բառերը կ'այրին մեծ տենչերու քուրային մէջ, կը պայթին անդադար ու կը լուծուին ներկայէն աւելի վե՛հ գոյութեան մը հասնելու արարքին:

Ճպրանի լեզուն ու տեսիլքները կը ձգտէին արժատական փոփոխութեան ենթարկել աշխարհն ու կեանքը: Ասոնք դարձան այն զլխաւոր հանգամանքները, որոնք պատճառ դարձան, որ Ճպրան նկատուի արաբական արգի բանաստեղծութեան ճարտարակերտ:

Աւելին .

Ճպրան արաքական արդի քերթուածին հարտարապետը չէ միայն, այլ առաջին յիշափոխականը, որ տակնուվրայ ջրաւ փոշեծածկ լեզուին կուպարեայ կատոյցը, վերջ տուաւ անթիւ լեզուին եւ հիմը դրաւ իրաւ բանաստեղծութեան: Իրմով բանաստեղծութիւնը դարձաւ թոհիք, իսկ լեզուն՝ ինքնակերտում, այլ խօսքով՝ լինելու քիւն:

«Հին ձեւերը չէին կրնար դրսեւորել իմ նոր հարցերս, եւ ես հարցերս մեկնաբանող ձեւեր կը ստեղծէի միշտ: Ինքզինքս ցոյացնող նոր բառեր կերտելու համար բնաւ ճիգ չխնայեցի, ընդհակառակն, ռիթմն եւ երաժշտութիւնս նոր էին, ինչպէս արարելու կարողութիւններս ինքնատիպ ու արտասովոր, որովհետեւ նոր մտածումներու համար անհրաժեշտ էր, որ գտնուէ նոր կառույցներ»:

1914ին, Մարի Հասքէյի ուղղուած նամակէ մը քաղուած վերի խօստովանութեան մէջ ներկայ է Ճպրան արուեստագէտը՝ բառին լայնագոյն առումով: Ան՝ որ դիտէ ինչ կ'ուզէ, ինչ կ'ընէ եւ ինչու համար: Իր ներքոյ ծաւալող ձայններուն ունկնդիր՝ ան ներկայ է իւրաքանչիւր բառին մէջ, իւրաքանչիւր ստղին մէջ: Այս այն արուեստագէտն է դարձեալ, որ ուրիշ նամակի մը մէջ կ'ըսէ ինքնավստահ՝ «գիտեմ, որ աշխարհին ունիմ ըսելիք այլ բան մը, որ կը տարբերի ցարդ բնութիւնս որեւէ բանէ»:

Նորին, եզակիին ու անծանօթին պապականերով տուայտող Ճպրանի նամակներն ու զբազան յօդուածները արուեստագէտին զիմագիծը բնութագրող Հազուադէպ գանձեր են:

1914ին, դարձեալ նոյն բարեկամուհիին ուղղուած նամակի մը մէջ՝ կը կարդանք .

«Արաքական գրականութեան մէջ գոյութիւն ունիմ իմ ստեղծագործութեան աւելի հռչակապ բազմաթիւ երկեր, սակայն կ'ըսեմ անկեղծօրէն, որ իմ ստեղծագործութիւններս արաքական արդի գրականութեան մեծագոյն հարստութիւններն են»:

Այս ստղերուն ետին պէտք չէ տեսնել ամբարտաւանութեան կամ շնչին ետի մը ցուցադրութիւնը: Մարդուն անաւարտ կարեկիտութիւններուն հանդէպ խոր հաւատք ունեցող եւ զանոնք իրենց մէջ գումարած տաղանդներուն մօտ անորոշ պտոթիւնով մը չէ ասիկա, այլ՝ ինքնաճանաչման խոր ակերթ եկող պիտակից բնութագրում մը:

Համաստեղծութեան շերտ պաշտպան արուեստագէտը, յիշափոխականն ու մարդարէն յաջորդաբար կը ճշան, կը պոռթկան, կը գոռան ու կը փայլատակեն Ճպրանի էջերուն հոսող խորախորհուրդ ալիքներուն հետ, զինք կ'ընեն եզակի ժամագրութիւններու ժամագրավայր, ուր քերթողը մարդէն կը մեկնի զէպի Աստուած, իսկ անկէ զէպի մարդ: Որոնում մը չէ այս մէկը, այլ՝ նոյնինքն լինելութեան երկունքը, որուն ընթացքին բանաստեղծը կը լուծուի անսահման միջոցին ու ժամանակին մէջ, կը նոյնանայ ամբողջութեան, իր մէջ կը տարբարութեւն բնութիւնն ու աստուածային զաղտիքները, ապա կը վերադառնայ մարդկային դրութեան ու կ'ըլլայ աւելի պայծառ, հասուն եւ գամբադրական մարդը, եւ այսպէսով մարդկային մշակոյթին, փորձառութիւններուն, հարստութիւններուն վրայ կը գումարէ նոր ու անծանօթ հարստութիւններ, փանդի՛:

«Մարդու հոգիէն անդին խորութիւն մը չկայ եւ հոգին այն խորութիւնն է, որ ձայն կու տայ ինքզինքին, որովհետեւ չկայ խօսակից այլ ձայն մը, եւ ոչ այլ ունկեր՝ գայն լսելու համար»:

Ճպրան խալիլ Ճպրան իմաստասէր մը չէ բառին դասական առումով: Անընթեանելի բլլալու շափ միատիւք Արեւելքով լիացած բանաստեղծը կը փոխտփայէ առանց փիլիսոփայութիւն ընելու: Ի վերջոյ մարդուն համաստեղան կարելիութիւններուն հաւատացող, այս ջորմին համար անաւարտ աղբիւր է մարդուն հոգին ու միտքը, իսկ «վերջնական մտածումները» մարդուն հասցէին ուղղուած անարգանքներ են պարզապէս: Արեւուն պէս ամէն օր ծագող, բայց վերջնական ամբողջութիւն երբեք չճանչցող զօրութիւնն է մարդը, վերջնական շունչաց շունչը, ուր մահն իսկ կը մահանայ առաջին հանդիպումին:

Համաստեղան զաշնակից ուշագրու յայտարարութիւններու կարելի է հանդիպիլ Ճպրանի գործերէն որեւէ մէկուն մէջ: «Պարտէզը» հատորէն քաղուած վարի մէջբերումները ուրիշ բան չեն, էթէ ոչ ընդգծումներ՝ յեղափոխական Ճպրանի համաստեղան համոզումներէն:

«Զխօսիմք այլեւս Հայր-Ատուծոյ մասին, այլ՝ խօսիմք աստուածներուն, այսինքն՝ ձեր դրացիներուն, եղբայրներուն ու տարերուն մասին, որոնք կը շարժին ձեր տուններուն ու դաշտերուն մէջ:

«Ձեր պզտիկ ետերը կըրնցնելու պարագային միայն փնտնեցէք երկինքը, գոր Աստուած կը կոչէք: Երանի՛ր գտնիք ձեր մեծագոյն ետերուն առաջնորդ ուղիները: Երանի՛ր նուազ ծոյլ բլլայիք ու համբաներ հարբէիք»:

Եւ կամ՝

«Նախընտրելի է նուազ խօսիլ Աստուծոյ մասին, եւ աւելի՛ իրարու մասին» - որովհետեւ՝ մենք ո՛չ թէ Աստուծոյ հեւքն ու բոյրն ենք, այլ՝ «մեմք Աստուած ենք՝ սաղարթին, ծաղիկին ու յանախ պտուղին մէջ բազմած»:

Սկզբնապատճառին միանալու բնազանցական այս գիծը Որդի-Աստուծոյ մասին է եւ մարդուն հողոյն կիզիչ խորերէն ժայթքող տնջողը:

«Ձեր անօրեայ կեանքն է ձեր տանարն ու կրօնը: Երբ անկէ ներս մըտնէ՛ք՝ ձեզի հետ տարէ՛ք ձեր ամբողջութիւնը: Տարէ՛ք արօրը, դարբնօցը, մուրը եւ տաւիղը... Ձեզի հետ տարէ՛ք բոլոր մարդերը, որովհետեւ պաշտամունքի ձեր գրացումին մէջ ո՛չ կրնաք անոնց յայտերէն վեր թեւածել, եւ ոչ ալ անոնց անյուսութեան վար իջնել:

«Այժմ մտածեցէ՛ք... սրտի մը մասին, որ կը պարիակէ ձեր բոլոր սերտերը, սիրոյ մը մասին, որ կը պարփակէ ձեր բոլոր սէրերը, հոգիի մը մասին, որ կը պարտը՛ ձեր բոլորին հոգիները, ձայնի մը մասին, որ կ'արտաբերէ ձեր բոլորին ձայները, եւ յուստեան մը մասին, որ աւելի խոր ու յաւիտեանական է՝ ձեր բոլորին լուստիւններէն»:

Ապա վերստին կը ծնի Մարդը Ճպրանի մարմինն մէջ, կը ծաւալի, կը դառնայ անմար արեգակ ու կ'եզրակայնէ մարգարէ մը ինչպէս:

«Եթէ կ'ուզէք զԱստուած հանչնալ, առեղծուածներ լուծողներ մի՛ ըլլաք, ընդհակառակն, նայեցէ՛ք ձեր շարքը եւ պիտի տեսնէ՛ք գայն, որ կը խաղայ ձեր մանուկներուն հետ: Նայեցէ՛ք միջոցէն ներս եւ պիտի տեսնէ՛ք, որ կը իջնի ամպերուն հետ, եւ իր թեւերը տուած փայլակին ու անձրևին կ'իջնէ վար: Պիտի տեսնէ՛ք, որ Աստուած կը ժպտի ծաղիկներէն, սպա կը բարձրանայ ու ծառերուն մէջէն իր ձեռքերով ձեզ կը կանչէ...»:

Յաւիտեանական սիրոյ տարադամն է այս, յաւիտեանականին ու անմահութիւն տանող դերուծը, ստեղծադործման անհրաժեշտ շունչը, անհանգարտ կեանքին լուսնն ու միթը, որ «ինքնստեղծուելն գտաւ ո՛չ մէկ իղձ ունի»:

XVI

Ճպրան ինչի՞նչ ձայրանի մօտ ընկերութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ բարիքի ու շարիքի անպակաս ուղիներուն թափառող մարդուն իմացականութեան մէկ վրիպանքը, զոր պէտք է սրբազրել: Մարդն է ձայրանի գրականութեան պարունակութիւնն ու պարունակեալը միտմանակ: Աւելի՛ն. մարդուն անպարփակ արտայայտութիւններուն վերահաստատման հաշտոյն ծաւալող հրդեհ մըն է իր գրականութիւնը, որ կը տենչայ ու կը դառնայ ինքնակերտում: Պէտք է հասնիլ ո՛չ թէ կեանքի նախնականութեան, այլ՝ երազէն անդին դառնալու աշխարհակերտման էական շողախները բովանդակող անծանօթ սահմաններուն, պէտք է վերստին ստեղծել անչափելին ու անսահմանակը միեւնոյն տունն իր մէջ յարաշարժ պատարազի վերածած մարդը, անսակարկ յեղափոխականը, որովհետեւ մարդը ձայն է համապարփակը, կամ՝ ինչպէս պիտի ըսէր ինք, «Յիսուսը» հատորին մէջ, «երկինքն ու երկիրը, ինչպէս նաեւ դժոխքը, մարդաստեղծ են»:

Իր «Յատուցարան արարական բանաստեղծութեան» հատորին մէջ, գարաբակամ արդի բանաստեղծութիւնը կը սկսի ձայրանով՝ յայտարարելէ ետք, Ատոնիս կը կատարէ հետեւեալ խորացումը.

«Ասիկա մեզ կ'առաջնորդէ տա հիմնական եզրակացութեան, թէ ձայրան իր ամսին մէջ կը գումարէր յեղափոխականին ու մարգարէին ժայները: Այս իսկ պատմառով, անոր բանաստեղծական գգայարանէն փոխութեան գգայարանէ մըն է եւ ոչ թէ մկարելու: Ան կը մերժէր իր շուրջի աշխարհը ու կը տեկնար նոր աշխարհ մը. հաս է կրկին պատեալը, որ իր բանաստեղծութիւնը եզակիութիւն մըն է, ներկայէն անգին անցնիլ է, յաւելում՝ անոր վրայ: Իրեն համար ստեղծագործը ան է, որ կը գառարշուէ ընդհանուրէն ինքնադաշտ յատկութեամբ եւ մարդուն ինքնատեղութեան ու մշակութային գանձարանին վրայ կ'աւելցնէ նոր հարստութիւններ:

«Բանաստեղծին եզակիութեան վրայ այս կեդրոնացումը ուրիշ բան չի նշանակեր, եթէ ոչ այն հաստատ համոզումը, որ իրաւ բանաստեղծը միայն իւրայատուկ աշխարհ մը ներկայացնողը չէ. այլ ա՛ն, որ ինքնատիպ աշխարհը կը ներկայացնէ խոր կերպով. ու գայն կ'ընէ կենդանի՝ շնորհիւ իր անմահական նորութիւններուն, տեւիլիներուն, մարդկային ու հագեթամական կըտրած հեռաւորութիւններուն...: Այս տեսակիւնէն դիտած՝ ձայրան արարական բանաստեղծութեան վերահորոցիչը չէ միայն, այլ՝ բանաստեղծական հրաշագործութիւնները պարագրկող իրաւ բանաստեղծին (որ մեծ քաց մըն էր ձայրանէն առաջ) առաջին ու ամբողջական տիպարը՝ մերօրեայ հասկացազօքեամբ:

«ձայրանէն մեկնելով, առանց նախապարտաւորութիւններու եւ առանց յառաջաբանի ու յանկարծական ձեւով՝ արարական բանաստեղծութիւնը փոխադրուեցաւ այլ աշխարհ մը՝ անցնելով գգացումներու եւ մտածումներու նպագած մակերեսէն անդին:

«ձայրան կ'երազէր այն բանին մասին. որ տեւի հետո էր երազէն. — կեանքը փոխել: Այս գծով, մեր բանաստեղծութեան անտարբէրն է ան: Ինքն էր, որ սարվեցուց մեզի, թէ ինչպէս պէտք է գեղեցիկ շունչը պոկել մեր շուրջէն ու չափանիշներէն, աւելի՛ն. ինչպէս պէտք է փիլիսոփայութիւնը ընդլուծել բանաստեղծութեան մէջ: Ինքն էր դարձեալ, որ հրահրեց բանաստեղծը, որ իրբեւ Աստուծայ պատկերն ու անոր որդին, ի գործ դնէ իր բոլոր

կարողութիւնները, որպէսզի կարենայ գլուխ հանել իր բոլոր առաքելութիւնները «*Բերեւ առուածային սերմ*»։ Այսպէսով մեր մէջ մտաւ տագնապ մը, որ սկսաւ ննջել մեզ, որ չգոհանանք միայն եզակիով, իսկ մեր հոգիներուն խորերը հրդեհուեցան եզակիիմ ռումբան բոցերը, որոնք մեզ առաջնորդեցին կեանքի ու բանակամութեան փրատակներէն դուրս»։

Ճպրանի մասին Աստուծոյ վերոյիշեալ տեսակէտը կարելի է ընդունել իբրև «*ՇԷՂԵՐ*»ի սերունդին դիրքորոշման բանաձևումը։ Այս եղաւ այն սերունդը, որուն ներկայացուցիչները նմանօրինակ արժեւորումով բազմիցս մեծարեցին Ճպրան իմաստի Ճպրանը։ Ասոնց համար Ճպրանի արժէքը իր ըստեղծագործութիւններուն խորքէն ու կառոյցէն աւելի կը կայանայ անոր եզակի ձայնին մէջ, որովհետև Ճպրան բանաստեղծ է աւելի իր ինքնուրոյն, թարմաշունչ ձայնով, քան իր ստեղծագործութիւններուն մէջ։ Բանաստեղծ է իր մասնանշած հեռաւորութեամբ եւ ոչ թէ գրական իր նուաճած հեռաւորութիւնով։ Ան անցեալին ու ներկային դէմ ըմբոստացող յատուկ ձայնն է, յեղափոխութիւնը, որուն առաջնակարգ նպատակը եղաւ տարտղնել անցեալին ու ներկայ լեացած կեանքին կարծրացած մաշկը, ցնցել հիմերէն թէ՛ անցեալը, թէ՛ ներկան, կեբաւելու համար «*երազէն անդին գտնուողը*»։

Ճպրան մշտաբարժող հրարուին է եւ կարելիութիւններու թթիւորը։ Ինքն է դարձեալ այն ջրհեղեղը, որ մաքրեց դրական ուղիներուն վրայ շերտապէս շարձուող բոցերը՝ լեզուն, ապազան, բանաստեղծութեան ողջ պատմութիւնը, եւ յաջորդ սերունդները, որոնք իրենց առջև պիտի գտնէին մըշակուած ու պարարտ հող, ուր պիտի ծաղկէին՝ ծծելով Ճպրանին կողմէ որոշուած բանաստեղծական անդամանին աւիտն ու բոյրը միաժամանակ։

«*ՇԷՂԵՐ*»ի սերունդին կարծիքին յար ու նման ինքնարեւութապարտմի մը կը հանդիպինք, 1915ին դրուած, եւ դարձեալ Մարի Հասքէլի ուղղուած նամակի մը մէջ։

«*Գիտես, Մարի, քէ ի՞նչ երջանկութիւն կու գար ու կը հաստատուէր մէջս, երբ մարդիկ ստեղծագործութիւններս կը գովարանէին։ Իսկ հիմա, գովարանութիւններ կը տխրեցնեն զիս. խոր ու տարօրինակ այն տխրութիւնն է ասիկա, որ ինձի կը յիշեցնէ բաներ, գորս ցարդ իրագործած չեմ, եւ կ'ուզեմ մոխրովի շիրագործուած սերնդուս»։*

Ճպրան ճշդեց չիրագործուած տենչերու բարձունքն ի վեր տանող ճամբան, թեւաւարեց հրահաւի մը նման, իր ազատ ու անկաշկանդ բովանդակ գորութեամբ եղաւ ալիք-ալիք հեռացող հորիզոնին ստուերը, եւ ամբողջական ազատութեան չհասած՝ հեռացաւ մեր տեսողութիւններէն, դարձաւ ուղեներէ եւ արտաբան արդի բանաստեղծութեան թէ՛ հիմնադիրը, թէ՛ նորարարպետը։

Նորին ու եզակիին պայակով այրող ժողովուրդի մը ժայթքումն է Ճպրան, դարն ու ժողովուրդը, մարդն ու բնութիւնը հողիին մէջ ձուլող, միութիւն մը ստեղծող Բանին յեղափոխականն ու մարգարէն։

XVII

Ճպրանով իր կատարելութեան հասած եւ համաշխարհային երկու մեծ պատերազմներուն միջև դտնուող ժամանակաշրջանի ընթացքին լայն տարածում գտած ուսմանթիքներու գրականութեան էջերուն օրըստօրէ սկսան յաճախակի ներկայութիւն գտնուել խորհրդապաշտ երանդներն ու անորժակները։

1920-ական թուականներուն լոյս տեսան խորհրդապաշտ շարժումը ուսումնասիրող եւ խորհրդապաշտութեան ի նպաստ դիրքորոշումներ ճշգրտող յօդուածներ: «Արիւն»-ի երեսասարդ բանաստեղծներուն կողմէ՝ ձեռնարկը ւած այս արշաւը, արարական բանաստեղծութեան ընծայեց պարարտ ու ընդարձակ ա՛յն նեթահողը, ուր տպուող նոր-նոմանթիքներու փորձերը դուռնա-ւորուեցան խորհրդապաշտութեան թարմ ուստերոյ: Միաժամանակ ծնունդ առած ու անող թէ՛ նոր-նոմանթիքը եւ թէ՛ խորհրդապաշտութիւնը իրենց զազաթնակտին հասան 1930ի երկրորդ կիսուն, երբ 1937ին ու 1938ին յա-լորդարար լոյս տեսան Սախա Ադլի «Էլ Մէհուլի» (Մազթաղինացին) եւ Ի-լիաս Ապու Շապուքէի «Ափսոսի Էլ Ֆարսուս» (Դրամտի օձերը) անուն գեր-թողարկերքերը:

Երկու բանաստեղծներն ալ իրենց հատորները կը բանային յառաջաբա-նոյ: Այդ յառաջաբանները մեծ դեր խաղացին ո՛չ միայն լիբանանեան, այլեւ դասուեցան արարական արդի բանաստեղծութեան պատմութեան մէջ նուա-ճումէ մը անդին անցնող իրողութիւններու կարգին: Թէ՛ լիբանանեան եւ թէ՛ արարական արդի բանաստեղծութեան կարեւորագոյն հանգրուաններն են Ազլի եւ Ապու Շապուքէի անդրանիկ հատորները, սկիզբը, այլ խօսքով՝ բա-նաստեղծութեան յեղափոխութեան նախերգանքները:

Այդպիսի, կարելի է Սախա Ադլի յառաջաբանը նկատել խորհրդապաշտ բանաստեղծութեան մամիֆեստը, իսկ Ապու Շապուքէի յառաջաբանը՝ նոր-դասականներու հանդանակը:

19րդ դարուն, Ֆրանսոյի մէջ երեւան եկած խորհրդապաշտ շարժումը դարուն բնական ծնունդն էր: Իրապաշտութեան, կեանքի նիւթականացման եւ ընկերութեան զազեհեհացման գէ՛մ ծառայող բողոքի արտայայտութիւն էր: Լիբանանի մէջ ծնունդ առած խորհրդապաշտութիւնը նոյն նկարագիրը չունէր սակայն, որովհետեւ, անկեա տաղնայի մը առիթով բարձրացած ճիւ-մը չէր, ներկան մերժելու ձեւ մը չէր եւ չունէր Ֆրանսացի խորհրդապաշտ-ներուն դժգոհութեան տարերքն ու բովանդակութիւնը: Այլ խօսքով՝ անկեա արդիւնքն էր լիբանանցի բանաստեղծներուն մտաւորական այն մակարդակին, որ զարգացաւ ու հասուեցաւ շփումներու գծով: Արեւմուտքի եւ, ի մասնա-ւորի, Ֆրանսական դրականութեան պատմութեան զարձանքն ու գրական նորագոյն շարժումներուն հեւ ի հեւ հետեւող բանաստեղծները որդեգրեցին խորհրդապաշտութեան առաջադրանքներն ու համոզումները, մկրտեցին փիւ-նիկեան ու լիբանանեան աւագանին մէջ, եւ այսպէսով, խորհրդապաշտ շար-ժումին տունն նոր երանգներ, նոր բոյրեր, նոր ձայներ, ու խորհրդապաշ-տութեան առիւ բացին նոր հորիզոններու առաջնորդող արեւելեան ուղիներ, որոնց շնորհիւ, արարական խորհրդապաշտ բանաստեղծութիւնը կըցաւ ձեռ-քազատուիլ Ֆրանսականին լուծէն եւ ստացաւ նոր դիմազիծ:

Մալարմէի, Փօլ Վալէրիի եւ Ֆրանսացի խորհրդապաշտներու ուղի-ներով յառաջացող արար խորհրդապաշտներն ալ բանաստեղծութիւնը սահ-մանեցին իրր անարամարտական գիտակցութիւն, այսինքն՝ բնադանցական անխառն պահու մը մէջ տեղի ունեցող աշխարհաբնական գրեւորում: Ա-սոնք եւս բանաստեղծութիւնը հաշակեցին ինքնանպատակ, եւ անոր առաջ-նակարգ նպատակներէն մէկը դաւանեցան հրաժարութիւնը: Այն ատիճան, որ դարձան գերին երաժշտութեան եւ կատարելագոյն զեղեցկութեան: Այս մասին արտայայտուելով, «Մագթաղինացին» հատորին յառաջաբանին մէջ, Սախա Ապու կը կատարէ ուշադրաւ խոստովանութիւն մը.

«Ստեղծագործման պահէն առաջ վրաս կ'իշխէ քերթածին երաժըշտութիւնը...»:

Իսկ քիչ ժը անգին կ'եզրակացնէ.

«Երբ կը ստեղծագործեմ՝ կը գտնուիմ անգիտակցութեան մը մէջ, այնպէս որ՝ չեմ կրնար խօստավանիլ, թէ ինչ կատարուեցաւ ինծի հետ, բացի այն հայեացքէն, որ կրնամ շուրջիլ ստեղծագործութեան «առաջ» եւ «ետք» գտնուող այնպէս կացութիւններու վրայ եւ որ թերեւս լոյս մը արձակէ գաղտնիքի լուծման աշխատանքին վրայ:

«Ստեղծագործութեան «առաջ» եւ «ետք». ե՞րբ տեղի կ'ունենայ սակայն ստեղծագործութեան պահը, եւ որքա՞ն կ'երկարի: Արդեօք կը սկսի քերթածին առաջի՞ն բառով եւ վերջաւորութեան իմաստ-տեսիլով կ'աւարտի՞...: Ո՛չ: Տալու իրաւ պահը, այսինքն՝ անգիտակցութեան այս պահը, հագուացիւտ է, որ քանի մը բառերէ աւելի երկարի. դիրաբեկ է ստեղծագործութիւնը. եւ իր կեանքը, հագիւ հագ տոյճ մը կամ քանի մը տողեր է միայն:

«Անհիկա բիրեղ է՝ ինչպէս հոգեկան կացութիւնները եւ հագիւ սկսած գայն կը հտրէ մտածում մը, պատկեր մը կամ զգացում մը: Ու հո՛ս է, որ բանաստեղծը դէմ առ դէմ կը կանգնի գիտակցութեան (եւ սակէ է բանաստեղծութեան մէջ տարբեր արձակի՞ն՝ քերթածին ամբողջութիւնը նկատի առած) ներշնչեալը կը շարունակէ գրուցել եւ վերափոխել, եւ թերեւս կը շարունակէ գայն, ձերբագատուելու համար, այսինքն՝ հասնիլ նոր անգիտակցութեան մը. իսկ օրէնքը կը շարունակէ իր գործունէութիւնը իր իսկ գործին մէջ, եւ հո՛ս է, որ ան կը ստացալիտ արձակը»:

Ազլի Համարումով բանաստեղծութիւնը կը յաջողի այն պարագային միայն, երբ կ'երկարի անգիտակցութիւնը, երբ քերթողը կը յաջողի ձեռք ձգել բնազանցական իր ամբողջական կարողութիւնը, որովհետեւ բանաստեղծութիւնը ուրիշ բան չէ, էթէ ոչ գեղեցկութեան պատարագին մասնակցող «բացատրիկ շարական մը»: Հոս գեղեցկութիւնը կը ներկայանայ իր բնական ամբողջական կարելիութիւն. այս իսկ պատճառով՝ ան կը մերժէ թէ՛ մարգարէութիւն, թէ՛ իմաստասիրութիւն եւ թէ՛ հայրենասիրութեան հորը արծարծող բանաստեղծութիւնը, վասնզի բանաստեղծութիւնը գերբնականութիւն է, բարձրացում՝ անկարելիին, միութիւն՝ լոյսին, ընդհուրում՝ անկարելիին եւ ամենակալին անսահման անհունութիւններուն մէջ:

Ազլ կը խզէ բանաստեղծ-ընթացող, բանաստեղծ-երկիր, բանաստեղծ-ընկերութիւն, բանաստեղծ-քարոզչութիւն բոլոր կապերը եւ յանդուգն կ'ըլլայ յայտարարելով, թէ մտածումները, զգացումները, պատկերներն ու փոխարեքութիւնները գիտակցութեան պտուղներն են, իսկ բանաստեղծութիւնը գիտակցութենէն առաջն է, ետէք եւ անգիւնը:

«Մագքագիւնացի» հատորի յառաջարանին մէջ՝ ան տեղ մը կ'ըսէ. «գիտակցութիւնը ո՛չ մէկ դեր կը խաղայ բանաստեղծութեան մէջ», իսկ քիչ ժը անգին կ'եզրակացնէ. «բանաստեղծութիւնը կը պատկանի խոնարհ միտ-քերթում, ընտրեալ դասակարգի մը, որ ստակ է գայն ըմբռնիմելու, իսկ արձակը՝ աշակերտներուն...»:

Ազլի այս անդիւնը կրօնական հոգեվիճակին հետ պէտք չէ շփոթել: Ընդհակառակն, իր գրականութիւնը անթերի գեղեցկութեան ձգտող, անոր բացերն է վեր սրացող շարական մըն է: Պատմական է Սախո Ազլ, գեղեցկութեան, «արուեստը՝ արուեստին համար» ջերմ հաւատացեալ-ջատագովը: Հոս անգիւնը, Աստուածը եւ կամ Աստուծոյ անթերի, ամբողջական գեղեցկու-

թեամբ օժտեալ կիճը այլ բան չեն, եթէ ոչ անթերի գեղեցկութիւնը ժարմնաւորող շնչաւոր սեմպոլը:

«Մագքադիմացիմ»ի մէջ կան տասնեակ մը բառեր, որոնք ընտրուած են աղամանդադործի բծախնդրութեամբ: Այս բծախնդիր յարարութիւնը բանաստեղծութեան բառային դանձարանին հետ, պատաստումի կենսատու ջերմութեամբ մը վարարեց Աղլի տողերը, որոնք դարձան այնպիսի ծովու նըման անսահման աշխարհ մը: Յարաշարժ, մերթ ջղածիզ եւ մերթ զլլաւցող այս ալիքները բունաստեղծութիւն-լեզուն բարձրացուցին անդիտակցութեան ոլորտները, ուր նախադասութիւնները ձերբազատուեցան ոտմանթի ճենբուրութեանը ջնարակներէն, ապրւցան լեզուին մանկութիւնը, ազատ, անկաշկանդ, անզխտակից անկայունութիւն մը:

Աւելի՛ն. այս բոլորը եկան կազմելու Սախտ Աղլի լեզուական ինքնուրոյն տաճարը, «փղոսկրեայ աշտարակ»ը դրական բացատրութեամբ, ուր քերթողը վարեց արկածախնդիր իշխանի մը իւրայատուկ կեանքը:

«Մագքադիմացիմ» քերթողին կրօնական դրացումներէն թիւադրուած գործ մը չէ: Մարդ-Աստուած հաղորդակցութիւնը նպատաւոր մթնոլորտին մէջ զետեղող գործ մը չէ երբեք: Մեղանշումի հրաբուխները ժայթքեցնող ետքը չէ միայն, անիկա՝ կին — անթերի գեղեցկութիւնը պաշտամունքի վերածող պատճառն է եւ նպատակը, աշխարհի այլափոխման յոյսն է գալիք, դաժան զիտակցութիւն — ներկայիս ու բնուցանցութեան միջեւ սուր բանավէճ մը՝ հարուստ արուեստի գեղեցկագոյնն պատմուածաններով: Այլ խօսքով՝ թիտ ու գարդարուն, չոր ու անակնկալ, կուռ ու երազային տողերով կուռուցուած արուեստի կախարչութիւն մը:

Բնադանցութեան եւ զիտակցութեան միջեւ տեղի ունեցող այս բանավէճին առնթեր՝ «Մագքադիմացիմ»ի էջերուն մէջ տեղի կ'ունենայ բանաստեղծական երկու հոսանքներու ընդելուզումը: Առաջինը՝ նոր-ոտմանթիզմն է, իսկ երկրորդը՝ բանաստեղծին կողմէ՛ դեռ չպեղուած անձնօթ ու ամբողջական բանաստեղծութիւնը, որ ժարմին պիտի ստանար 1950ի երկրորդ կիսուն երեսան եկած «ԵՂ՝ըր»ի սերունդին կողմէ: Սախտ Աղլ հայան մըն է հիներուն (նոր-ոտմանթիքներ) ու նորերուն («ԵՂ՝ըր»ի սերունդ), միջեւ, աւելի ընդարձակելով կարկինը՝ ան mid-pointն է նոր-դասակասութեան եւ երկրորդ Աշխարհամարտէն ետք գարգացող դրական զանազան հոսանքներուն միջեւ, եթէ հարցին լիբանանեան դիմադիժը փոխարինենք արաբական բանաստեղծութեան հետ:

Զահլէի բնութեան խորհրդաւոր տարրերով դիմում այս ինքնախտօժ գերթողը արաբական բանաստեղծութեան մէջ կ'աւուցեց իր մեհեանը: Ան ունեցաւ իր յաջորդները: Ըւ արաբական գրականութեան մէջ ծնունդ տուաւ նոր դարացի մը՝ ազլիսան ղալթոց:

Գրականութեան պատմութեան մէջ հազուադէպ է, որ յեղափոխական սերունդ մը փառաբանէ այն անձը, որուն գրականութիւնը վերափոխելու, յեղափոխականացնելու եւ նոր հուրեր արծարծելու տաղադրանքներով իշխած է հրապարակ: Սոցիոլոգիան է, որ անոնք մերժեն ներկան, հասնելու համար տակաւին արժատներ չերկարած ապագային, մերժեն գրագէտին հսկող պահակի կրաւորական դերը, տակնուվրայ ընեն դասական անշուշտ տաղարանները, բլլան անխիտանական, որպէսզի հասնին ինքնիշխանութեան, սակայն անոնց նուաճած ուղին ընդունին ու յարգալիք վերաբերմունքը ինդրոյ առարկայ գրագէտին վաստակին տօջելու՝ լատագոյնս կ'ապացուցէ ի-

բաւ արուեստադէտի հարուստ տարրերով օժտեալ յեղափոխական էրիտասարդին ե՛ւ արի, ե՛ւ հմուտ նկարագիրը:

«Շք'ըր» հանգէսի քննադատներէն Հանրի Ֆէրիտ Սատպ, «էլ Նահար» օրաթերթի 14 Գնկտեմբեր 1973ի թիւին մէջ ներկայացուցած էր նմուշներ Ազլի դրականութենէն, խիտ եւ յանդուզն նշմարով մը:

Այսպէս՝

«Այսօրուան կարգ մը նոր բանաստեղծներն ու ֆինադատները կրնան չսիրել զինք: Սակայն չեն կրնար զայն ստեղծել: Ան այծիւի մը նման, երկինքի անհուն հեռաւորութիւններէն խոյացաւ հնչիւններուն վրայ, որոնք այլակերպութեամբ իբր յարաբերութիւններ եւ իբր գոյներ: Նարերէն առաջ, բանաստեղծին ընդարձակ մշակոյթը բնաւ շարունակման ջիղը: Իրենցմէ առաջ, մարտից արեւմտեան բազմաթիւ համագումներ, որոնց կամաւոր արձանագրեց իր լիզուն:

«Ազլ առանձինն, հակադրուելով բոլոր բանաստեղծներուն, «երջանկութենէն բարձրացուց բանաստեղծութեան տաճարը» եւ իր գրական կամաւոր նկաւ իբրեւ հարսանեկան երգեր, իսկ մարդիկ մտցան մղձաւանջիմ համը»:

Իսկ Աստիտ, իր նախորդներուն հետ բաղդատութիւն մը կատարած ատեն, արուեստադէտի նոյն վայելուչ պարկեշտութեամբ կը մեծարէ զայն հետեւեալ բառերով.

«Իրմէ առաջ գոյութիւն ունեցող բանաստեղծական լիզուի մաքրագործման գծով, Սաիտ Ազլ ունի ո՛չ միայն աշխարհ, այլևս վնասկան դերակատարի դիրքը: Ան լիզուն հասցաց գեղագիտական հեռաւորութեան մը, որ առանձին ուսումնասիրութեան նիւթ մըն է»:

Բանաստեղծական իր ծաւալուն եւ աստիճանաբար զարգացող հատորները, արարական լեզուն լիբանանեան բարբառով պատուաստելու փորձը, 1960ական թուականներուն առատ մէյան հոսեցուց թէ՛ լիբանանեան եւ թէ՛ արարական մամուլի սրնակներուն...:

Գրական բազմաթիւ ուսումնասիրութիւններու եւ մեկադրութիւններու նիւթ զարձած պատնասեան այս բանաստեղծին էջերուն, կենը այլափոխուեցաւ, դարձաւ ազրիւր տնաւարտ գեղեցկութեան, որ արարական արդի բանաստեղծութեան եզակի նուաճումներէն է:

Լիբանանցի արդի բանաստեղծները եւ, ի՛ մասնաւորի «ԱՆՂՐՔ»ի սերունդը, ինչպէս 1960ի երկրորդ կիսուն ստեղծագործող իրաքցի, սուրիացի, եգիպտացի եւ բոֆանդակ արարական աշխարհի երիտասարդ բանաստեղծները, որոնք դիցարանութենէն ու ժողովրդական բունահիւսութիւններէն շարուած սեմպոլներով ծնունդ տուին խորհրդապաշտ արդի հոսանքին եւ, այս դժով, եւ բանաստեղծութեան ամբողջական կատարչի առիթով, իրենց նուաճումներուն յաջողութիւնը համահասարակ տոհմով կը պարտին Արեւմուտքի խորհրդապաշտներուն եւ լիբանանցի այս բանաստեղծին՝ Սաիտ Ազլի...:

Սաիտ Ազլ կրցաւ ըլլալ արարական արդի եւ նորագոյն բանաստեղծութեան պարարտ ենթահողը, որուն համար արժանացաւ խոր յարգանքի:

Սաիտ Ազլ արարական բանաստեղծութեան կարեւորագոյն եղափոխութիւնն է եւ կենսատու արեգակներէն մէկը:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(Շար. 4 եւ մնացեալը յաջորդով)

Ն. Չ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՅԻ

«Կ Ա Ր Թ Ա Գ Է Ն Ի Դ Ո Ւ Ս Տ Ր Ը»

Չէպէր զրահան ուր փորձագարն է, որ կը հաստատէ զրազէտի մը զիմացի՞ն ու սաղանդը, որովհետեւ անիկա կը պահանջէ իմացական եւ զիշարուեստական բազմազան յասկութիւններ, փորձառութիւն եւ հասունութիւն: Կատարեալ միպատան մը, ի պահանջի հարկին, պէտք է ըլլայ փիլիսոփայ, հոգեբան, ընկերարան, պատմաբան, կենսաբան, գիտնական, արուեստագէտ եւ բանաստեղծ, որովհետեւ ինչպէս կ'ըսէ զընկազաւ Ալպէր Քիպուտէ:

«Վեպը ցրական սեռերում ամենն Կերպրկայն է, ամենն կեցութեանը եւ ամենն հնարագիտութիւնը»:

1970ին Հրատարակուած էր «Ամսօր»-ի հոգիները պատմաւեցիներու հուշագրերում, Յակոբ Կարապետի փաստացի, որ միպական սեռը ո՛ր մէկ գաղտնիք ունէր իրեն համար, մանաւանդ՝ որ այդ հուշագրումսին զուրո իրմէ բազմաթիւ նորամտեր լայս տեսած էին պատան պարբերութիւններում մէջ:

Իր հուշարքի հաջ. այսինքն՝ 1972ին, լայս կը տեսնէր որեւէ իր առաջին Չէպէր, «Կարապետի շարքերը», որուն նիւթը հետեւեալն է:

Նիւ Երզնի Ռեզերսայս Քաղի փարթաւ ա-

պարանքներէն մէկուն մէջ տեղի կ'ունենայ հանդիպում-հարկերսմ մը, արուած՝ ի պատիւ Երեւելի անմատարութիւններու, որոնց կարգին կը գտնուի Հոմեր Արմաթրանկ՝ Չէպին պատմող հարաւ: Ներկաները կը կազմեն Միացեալ Նահանգներու բազմազան, երեսնական եւ մատարական ընտրանքին մանրակարգը:

Ցանկեր՝ երեւելի զործատեր եւ զբաժանէր Դէյվիդ Օկլիվի կրտսերն է, հասուն տարիքով մարդ մը, իսկ տանտերուէն, այսինքն՝ Օկլիվիի կողակիցը, մայրաքրոնի ու խորհրդաւոր Արմաթ, ծնած Քուշուպի մէջ, Կարկեղոսի մատարը: Դէյվիդ Օկլիվի, իր առաջին կեանք մտնէն հաջ. մեկնած էր Եւրոպա եւ Փարիզի մէջ հանդիպած Ալմիրային, զիս ուսանողուէն Մորպոնի համալսարանը: Դէյվիդ եւ Ալմիրա համակրած էին իրարու եւ ամուսնացած :

Հնգունիութեան մէկ պահուն, Ալմիրա կը տեսնայ զբազէս լրագրողին, որուն գրաստիստութիւններէն մէկը մեծ ապուստոսութիւն զործած էր իր վրայ: Ալմիրա ինքզինքը ստար կը զգայ այս միջավայրին մէջ եւ կը փնտռէ իր հոգիին համապատասխանող հոգի մը: Առանց վարանուծի՝ իր համակրանքը կը լայնէ Հոմեր Ար-

ժըսթրոնկն հանգչւց եւ մինչ հիւրերը կը շաղակրտանն, զոյն կը հրաւիրէ լեկու ապարանքը եւ գնչերը տնցընելու շաղաքին հետաւոր մէկ անհինքը, կապիւտի մը մէջ, որ իրեն յիշեցնէ իր հետաւոր հայրենիքը:

— Երթա՛նք մի տեղ, ուր մարդիկ զիմաննիր յնմ կրտսմ մի տեղ, ուր գիշերը աւելի անկեղծ է:

Ինքնաշարժը կը ստարայ դէպի Ծովկերեանց թաղերը ու հանք կ'առնէ Փարք Սայիտ կոչուած յունական քաղաքէին տողն: Հոն, Այժիրա համայնքով կը շնչէ իր հետաւոր տնցնային արեցնոց մթնելու, եւ այնքան կը սարսուռի երամշտութենէն ու մթնալուքէն, որ նետուելով յանկարծ բնմին վրայ՝ կը սկսէ գարնի ծխակն ու խորհրդաւոր պար մը: Գազայան վերածուած է Թանիթի նուիրակն տաճարին, որուն ժառանգ ու հոյանի զբոսահարէն մէկը կը թռչէ ըլլալ ան, զորքը տարաշխարհիկ եւ հոյս Մալամպոյսին, որ յանկարծամահ եղաւ զողապերծած ըլլալուն համար աստուածուհիին զազանիքը:

Այժիրա արդէ մասնակցներու թանիթն է, լուսաւոր ու կենսասուտ աստղը, որուն շուրջ կը զանազան զանազան տեսակի եւ մեծութեամբ արբանեակներ: Այդ արբանեակները կը կազմեն վէպի գործող սեմերը: Նախ կայ Դէյվիլը Օկլիֆէ կրտսերը, այսինքն՝ ամուսինը, որ տանաբնի պաշտպան զբաժանուած է: Կայ բարձրատեխնական զինուորական Մարք Մքտանալտը, որուն մեռածէն Հոմեր խլած է խարտեալ շուշտուէր Ուրտուտան, կայ հայազգի անտեսազէտ Սեւակ Սուրեանը, որուն հանդէպ Այժիրա կը զգայ անբացատրելի զգացում մը, անտեսանելի կապեր, որոնց արժանեկը միւրեւան են հետաւոր Արեւելքի տապալներուն մէջ, բայց այս երկուքին յարաբերութիւնները կը մնան պղտորակն: Կայ Թայֆ Օկլիֆէն, Դէյվիլի որդին իր նախորդ կնոջէ, որ կրուած է Վիթթուսի մէջ եւ այժմ կը մնայ հաշմանդամ, զամուսն իր շարժական աթոռին, եւ որուն հանգչւց Այժիրա կը զգայ տեսակ մը մարտական սէր, ու կայ, վերջապէս, Հոմեր Արժըթրոնիկ, որուն հանդէպ Այժիրայի ունեցած զգացումները երթալով կը բարդանան ու կը սերտանան:

Հոմեր նախ իր արբանեակ կը զանայ Ուրտուտա կոչուած ան խոհուն ու տրամաբանոց աղջիկուն շուրջ, որ միշտ ու ճիշդ հակապատկերն է խոսկալայտ Այժիրային:

Հոմեր եւ Այժիրա զարժած են անբաժանելի: Այժիրայի հրապոյրը եւ մարմնին փոթորկալայտ գեղեցկութիւնը մազեղովի մը պէս իրենց միմեկին մէջ սուս են այս արտակարգ մոլորակը:

Նոյնիսկ Սեւակ Սուրեանին անձնասպանութեան լուրը չի խանգարեր այս անկառ մեղաբանութեան ընթացքը: Սուրեան զբռն է երկար համակ մը, ուր կը յայտնէ իր գաղափարները կեանքին, մարդոց, երկայ ապրելակերպերուն եւ մահուան մասին:

Մէրը, սակայն, մահուան պէս գորտուր է, եւ երկու սիրահարները՝ իրարու միացած երկու աստղաներու պէս, կը թառային անզաղար Թանիթի խաղաղ լոյսին շուրջ:

Այժիրայի միակ նպատակն է զանել անձ մը, որ կարենայ թափանցել իր ինքնութենէն ներս, զերմարդ մը, որ կարենայ իր հոմերեան հասկընալ ու հասկնել իրեն:

Եւ սակայն Հոմեր Արժըթրոնիկ ըլլալ այդ մարդոց պէս չի կրնար թափանցել Այժիրայի ներսը: Իր խորհրդակցութեան խորհրդաւոր ծալքերէն ներս, մէկ խոսքով՝ զգալով հանգիստ, որ այս աշխիւր բուրմոսի տարեր է իր հանցած միւս կիներէն, չի հասկնար, որ ան մարմնացուն է յաւիտենական էջին, Արեւելքի պարտեզներուն մէջ ծնած ծառային: Կարկեղանի զուտորը կ'ապրի տխրակի մը մէջ, որուն ճամբան տնտեսութեան պիտի մնայ մեր հերոսին, մինչեւ դարին վերջաւորութիւնը:

Այժիրա եւ Հոմեր կ'ապրին տարբեր մակարդակներու վրայ: աստիճան՝ գերբնական, երկրորդը՝ երկրային: Հակառակ իր գրագչտի խոսքերուն՝ Հոմեր Արժըթրոնիկ կը մնայ սարսուռ իր մասնակի բարձրուն եւ սովորութիւններուն եւ այդ պատճառաւ կը զործէ անզարմանելի սխալ մը, որուն կ'անզբաղաւանայ շատ ուշ: Հոմեր Արժըթրոնիկ, երկրի մարդը, ամուսնութեան կ'առաջարկէ երկնքի բնակչուհիին: Այժիրա կը զգուշացնէ զայն: Թանիթի զբոսահար չի կրնար հասարակ մահաբանութիւն մը պատկանել: Աստուածուհին անողոք եղած է իր հրահանգները անտեսողներուն հանդէպ:

Հոմեր ամուր կը մնայ իր աստղերէն վերայ: Միջուած շար ողկէ մը՝ Այժիրա իր ամբողջ էութեամբ կը սիրէ զայն եւ կ'ընդունի անոր աստիճանը: Երկրային ամէն ինչ օրինաւոր ըլլալ, պէտք է սպասել ամուսինին, այսինքն՝ Դէյվիլը

Օկիվժիի վերադարձին, որպէսզի հարցը լուծուի բոլորին սիրալոյսով հասանութեամբ...

Դէպքերու նպատակով այս ընթացքին առջեւ՝ որքան զիւրին է երջանիկ ըլլալ, կը խորհրդէր Նորախոստար, ահ կը տեսնէ ժխտի զէպքերուն արտաքին երեւոյթը. կ'անզիտանայ, որ արդէն տառապանքը իր զէժն են, եւ սկսած է գործադրուիչ սքերզութեան առաջին արարը:

Նոր Տարուան զիւրիւր, Հոմեր եւ Ալիքոս միասին պիտի անցընեն Փարթ Մայիտ քաղաքէն մէջ: Հոմեր կը ժամանէ Ռիվըրսայտի ապարանքը, որուն բարբ Կատուանները կը յորդին լայնորով: Ան վեր կը բարձրանայ ու պատուհինէն կ'իմանայ, որ Ալիքոս կը գտնուի Փարթին մաս, որուն բարոյական եւ տուղլական վիճակը սկզբանէն վատթարանալ: Փարթին համար, Ալիքոս կը հանդիսանայ արքեւոս միակ զրգապատանալ: Առանց Ալիքոսի՝ Փարթ վերադարձուաւ հայրենիքէն մը Կիւս կը գործադրուի հայրենական վրայ եւ կարեւորին կ'ընէ՝ անոր շնորհակալու համար զոչն վերածն իսկ...

Քիչ ետք, Ալիքոս կ'ընէ Փարթի սենեակէն ու կը նետուի Հոմերին զերկը, եւ ճիշդ այն պահու, երբ երկուս սիրահարներուն լըթերը իրարու կը միանան, Փարթ կը բռնուի սենեակին դուռը ու այս տեսարանին շղթանալով, առանց աղմուկի կը գոչէ դուռը ու գրասեղանին զգրոցէն հանելով՝ Վիկթորիան բերած տարանակը՝ կը պարպէ գանկին մէջ:

Պարթինը լսելով՝ Ալիքոս եւ Հոմեր կը խուստեն սենեակէն ներս, որուն կեդրոնը փռուած կը տեսնեն Փարթի արիւնլուայ մարմինը: Ալիքոս անմիջապէս կը զգայ, որ ինքն է այս սքերզութեան վրան պատճառը ու առանց բառ մը արտասանելու, տունէն դուրս կը նետուի ու կ'անհետանայ...

Հոմեր խելագարի մը պէս կը փնտէր կորուստն Ալիքոսին: Կը զիմէ Նիւ Եորքի բոլոր ստափականատուներուն, որսթերթերը ալքէ կ'անցընէ ծայրէ նայր՝ իմանալու համար իր սիրուհին ճակատագրը: Ոմանք ախրին Օկիվժիի անմասպանութենէն հասնական կը գտնեն, կը խօսին շքուղնի դետի մէջ զանուան երիտասարդ կնոջ մը զիւրին մասին: Հոմեր կ'այցելէ ճեռլատուները, բայց ոչ մէկ հեռք Ալիքոսայն:

Օր մը, Քեքթի մը մէջ ապրած լուսանկարի մը վրայ, կը կարծէ տեսնել Ալիքոսայի ուսը:

Հուսանկարը տեսած է Թերմա Մանուկեանը: Ապաստանարանին է նպատակ արուած հանգիստութեան մը ընթացքին:

Հոմեր կը շտապէ հոն, քաղաքէն բաւական հեռու վայր մը: Կը հետաքրքրուի այդ մասին: Ո՛ր, Ալիքոս անուանով կին մը գոյութիւն չունի հաստատութեան մէջ: Հոմեր ջոյց կու տայ լուսանկարը: Այո՛, լուսանկարին ներկայացուցած կինը կայ, բայց անոր անունը Մոնա Հոփքինգ է:

Հոմեր կը քաշէ հաստատութեան միջնացանդան մէջ, կը բարձրանայ ստորհաններէն վեր: Մոնա Հոփքինգ կը խօսի ու կը սպասի զինք շքուղնապատը տանեակի մը թերան մանուկներու: Ալիքոս գոյութիւն չունի այլեւս. ահ վերադարձած է այն աշխարհը, ուրկէ դուրս եկած էր ապրելու:

Հանգիստուց շտապել է: Ալիքոս, Մոնա Հոփքինգ անունին տակ իր հմայքն ու զեղեցկութիւնը է սպաս դրած է թերան մանուկներու խրանակին: Մոնա Հոփքինգ կը յօտարի քանի մը ժամ անցընել Հոմերի հետ: Կը ճաշեն միասին, կը պատին միասին, կը խօսակցին: Իրիկուանք միասին կը վերադառնան հաստատութեան դուռը եւ նա կը բաժնուին ընդմիջում: Մոնա Հոփքինգ եւ Հոմեր Արմաթրոնի իրարու հետ ոչ մէկ կարգանին: Եւ մինչ Ալիքոս կ'անհետանայ հաստատութեան դուռէն ներս, Հոմեր կը վերադառնայ իր սովորական կեանքին, հոգիին մէջ կրկնով անշնչելի պատկեր մը եւ կախարհող երազ մը:

Ալիքոս, Ալիքոս, իրկրկն անգամ եւ քննարկը կորուսած, պիտի բացազանչէր հանճարեց ժերարը ու Ներվալ:



Ուրիշ, հակասակ իր կրած վերնագրին, պատմական զէպի մը առջեւ չէ, որ կը գտնուիք, ուշ սիրային, հոգեբանական, կամ աւելի ճիշդը՝ արհիւրական:

Վէպի մը մեծագոյն արժանիքը կը կայանայ այն միջոցառման, այն խորհրդաւոր ներգաշտակութեան մէջ, որ կը շարժէ իրական աշխարհէն ստարիւր, բայց անոր ազդակից աշխարհ մը անդրծել, աշխարհ մը, որ ըլլալով հանգիստ մարդկային շափի վրայ, դառնայ աւելի գոհացուցիչ:

Իրականութեան երեւոյթը տալու համար, ինչպէս ըստի վերերը, վերապատը պէտք է ըլլ:

լայ փխրոփայ, հոգեբան, ընկերարան, քաղաքազէտ, գիտնական, նետյն, կորեկալ աստուհաժար կեանքի ալլազան երեսները:

Կարգակնց մէջընդմէջ զազափարներ կը յայտնէ մեր ժամանակը եւ մարդկութիւնը հետազոտող կարգ մը կենսական հարցերու մասին: Այդ զազափարները ունին փխրոփայական, իմացողան, ելեւմտական եւ քաղաքական բնոյթ: Ան ժամառաբար կը ծանրանայ Վիեթնամի պատերազմին եւ անոր հոգեբանական անդրադարձներուն վրայ: Կը խօսի զրականութեան եւ զրոզներու մասին, արուեստի եւ արուեստադէտներու մասին: Կը խօսի մարդ արարածի ճակատագրին եւ անոր փնտրած ազատութեան եւ երջանկութեան մասին: Ատեղ անհրաժեշտ բաներ են եւ վէպին կու տան որոշ ծանրութիւն եւ կշիռ, սակայն պէտք է ըսել, որ զործի ծաւալին հետ բազազատած՝ անեղ շատ անկ կը գրաւեն եւ որոշ շափով կը զանազանեն զործադրութեան ընթացքը:

Շնորհանուր առձամբ, վէպը, իր կատարողի, կը նմանի զորդի մը, թանկագին կամ հասարակ, նոյաժ զործածուած բուրդի որակին եւ աշխատող մեղքերու ճարտարութեան: Նիւթը, այսինքն՝ ղէպերու շարահիստութիւնը կը կազմէ անոր առէջը, որ կրնայ նոյնը ըլլալ շատ մը զործերու մէջ: Պէտք է ըսել, որ Հոմերոսէն ի վեր զրականութեան հիմը կազմող ղէպերը սակմանափակ են ն'ա թիւով, ն'ա տեսակով:

Ուրեմն, զրական եւ զեղարուեստական զործին կարեւոր մասը մեւն է, այսինքն՝ լեզուն, ունը, պատկերները, մթնոլորտը: Նոյն առէջքին վրայ, նոյն նիւթին շուրջ, տարբեր հեղինակներ կրնան տրտազելլ ասբերբ գոյներով, ասբերբ գիծերով, ասբերբ երանգներով տեսարաններ, մարդկային տիպարներ, որոնց արժէքն ու գեղեցկութիւնը կախում ունին հեղինակին ճարտարութենէն եւ տաղանդէն:

Վերջապահները զրական այս սեռին մտեցած են իրենց խառնուածքին եւ համոզումներուն ճամբով: Կան զիւցաղներգական վէպեր, փխրոփայական վէպեր, իրապաւ Վէպեր, հոգեփրոյնական վէպեր: Կարագենցի պարագային՝ այս մտեցումը կրնանց կոչել բնաբերական եւ բանաստեղծական: Այդ գրաւեստաւ զնորքազէնի դուարըք վէպին հիմնական կատարող ունի երաժշտական բնոյթ:

Այս քաղամասին համանուագին մէջ կարելի է

զանկի զանազան տեսակներ եւ անտեսանելի, կենդանի եւ անկենդան տիպարներ եւ մեկնարանդներ: Երգչախումբին երկու զլիաւոր թեւերը կը կոչուին Արեւելք եւ Արեւմուտք, այսինքն՝ Նիւ Եորք քաղաքը կը կազմէ թաւերու բաժինը, Կարկեղանը, որ կը խորհրդանշէ Արեւելքը, կը կառմէ սոփրաններու խումբը: Ասոնց կողքին կան այլարանական խումբեր՝ պատերազմ, խաղաղութիւն, ընկերային կեանք:

Համանուագը կատարուած է չափազորութեան մը վրայ, որ կ'արտայայտուի Նիւ Եորք եւ Կարկեղան քաղաքներու փոխասացութիւններով: Բնդպէս յունական ոչբերգութեան մը պարագային՝ իսկ կեղերնական անձը, այսինքն՝ Կարկեղանի դուարը կը տատազի այս երկպառակութենէն, որովհետեւ ունենալով հանդերձ արդի կնոջ բոլոր երեւոյթները, ազբերով հանդերձ Արեւմուտքի մեծագոյն ուստաններէն մէկուն մէջ, անոր հոգին կը տեղայ անցեալը ու կը ստանի իր նախնիքներուն ծննդավայրը եղող Արեւելքին վերայ:

Համանուագին մաս կը կազմեն նաեւ կարգ մը այլարանական սոյնաներ, ինչպէս Մեքը, Մաքը, Կիսմէր, Երգանկուրիանը, Ժամանակը:

Այս համանուագին կեղերնական աստղը, փրիմատոմնալ կը հանդիսանայ Արեւելքի ուղիղը՝ Ալմիրան, որ կը մարմնաւորէ յարեանական էջը, կամ անհաստանի երազը եւ որուն շուրջ կը զառնան զանազան մեծութեամբ արանեակներ, հանդիսանալով վէպին զործող անձերը: Անոնց՝ շատ ցած Ալմիրայի խորհարակէն եւ զեղեցկութենէն շնն անգրազառնար կատարող ողբերգութեան եւ զիշերային կոյր թիթեռնիներու պէս կը բախին Կարկեղանի դուարին անաւոր ու անրոժեպի անձկութեան, եթէ յանգուզն են՝ կը փշրուին, եթէ խուհի են՝ կը նահանջին, այսինքն էաջ իրենց թեւերը:

Վէպին երկու բեւոտները կը կոչուին Քաղաքը եւ Կիթը, իսկ զանոնք միացնող տառնաքը՝ Կրուգը:

Քաղաքը ըսինք՝ տառնց անուն մը տալու, որովհետեւ եթէ մեր աչբին առջեւ պատկերացուած Նիւ Եորքն է, կը զգանք սակայն, որ ուրիշ ժամանակներուն՝ ան պիտի կոչուէր Աղեքսանդրիա, Բարսիլոն, Անտիոք կամ Կարկեղան:

Քաղաքը կը խորհրդանշէ մարդ կահին բուրբ նուաճումներուն: Կեղերնականներն: Հոն, ըսով՝ քո-

Վի կ'ապրին լուսն ու դէշը, տղիքն ու դեղեցիկը,
հոգին ու նիւթը, ասուտաբը եւ արուեստը,
Աստուած ու ստասանն:

Կարազնոցի համար Նիւ Ետրքը կը մարմնա-
ցընէ նոր ժամանակներու Կարկեղանը: Սակայն
Ի՞նչ էր ինքը, Հին ժամանակներու գոթն, խոր-
հրդաբար եւ Հեթանոս Կարկեղանը: Այս իմա-
նասու համար զիմենք Փրանսացի մեծ վիպասան
Կի.թով Ծլուպէրի գրչին, որ էր Վալամպոս վէ-
պին կրկնորդ գլուխին մէջ մեղի կու տայ այդ
անհետացած քաղաքին մէկ հոյակապ նկարագրու-
թիւնը:

«Լուսինը կը բարձրանար ծաղու այիմներում
մակերեսէն վեր եւ գնչերով ծածկուած քաղաքին
մարմնին վրայ կը փայլէին լուսաւոր կետեր: Ա-
պակիէ հսկայ գունաւոր սառնարներու տանիքնե-
րէն կը ծառայաթիւն՝ խոշոր ազամանդներու
պէս: Զրարաշխային ամիւները դաշքած էին դառ-
մալէ ու ճոնչիւէ, եւ այն բակերու մէջ, ուղտե-
քը որոնալով կ'երազէին: Կարկեղանի շուրջ, ան-
շարժ տիէները կը փայլէին, լուսինը իր ճերմակ
լայքը կը սփռէր քլուրներով շրջապատուած ծա-
ցին եւ թաւնուզի լինին վրայ, ուր փեւեկաթե-
ւերը կարգացոյն երկգներ կը գծէին աւազի տա-
րածութիւններուն վրայ, մինչ անդիմ լնակին մա-
կերեսը կը հայելիանար՝ արծաթէ նսկայ ափսէի
մը պէս: Կապտուուն երկնակամարը կը մորճուէր
կործանման անցիմ, մէկ կողմէ անապատէն բարձ-
րացող փոշիներուն վրայ, միւս կողմէ՝ ծովէն
բարձրացող մշուշներուն մէջ, մինչ Ակրոփոլի
վրայ, քրգոտելու նոճիները, որոնք կը շրջապա-
տէին իշմուռի տաճարը, օրորուելով կ'արտաբե-
րէին թեթեւ շունչ մը, մնան շնորհաբար այն
կանակներուն, որոնք յույստէն կը շայէին պա-
րիպներուն հիմնաքարերը:

Կարազնոցի կ'արձագանգէ Հեռուեալ նկարա-
զրուութեամբ:

«Ինչու է Նիւ Ետրքը մտտում օրտիս վրայ:
Ես տիրում եմ այս քաղաքի ամեն մի քարը, ամեն
մի անկիւնը: Այնքան հուրբակցան կտոնոյց չէ, որ-
քան հասկացողութիւն, գայների եւ բայերի մի
անվերջ համանուագ, բրձրով շրջապատուած աւ
միլիոնաւոր երազներով թաքաւում: Իրականում
Նիւ Ետրքը մարդկութեան վերջին ապարտէն է,
ցեղերի եւ ազգութիւնների մի շնաշխարհիկ դաշ-
մաւորում, երբեմն հակասական, երբեմն աղտու-
ռաց, սակայն յաւիտենորէն մարդկային: Իմ քա-

ղաքն է: Ես գիտեմ ամեն մէկու կեանքը: Ամեն
նիւ կորցի իմ ընտանիքի մի անգամն է...

«Որքան հեռանում է մարը, այնքան վեր է
խոյանում Նիւ Ետրքի համայնապատկերը: Անու
մեր գլխում պիտի թափուեն աշտարակները:
Կարծես ծովի ընդերքից, ինչ որ ամենի երկու-
նից խնայաբար գոյանում է կղզին, իր սուր երկ-
րայտիական բուշերը ցցելով երկնքի օրորը...»:

Եւ սակայն, որ մը, այս հեկոյ հրաշալիքը,
այս մեարդութիւնը, պիտի ոչնչանայ ժամանակի
համբոյրներուն ասկ, ինչպէս ոչնչացաւ երբեմնի
Կարթոս, անտրիկ եւ Հեթանոս Կարկեղանը, որ կը
հանգիտեայ Նիւ Ետրքի հետուր քաղաքամար-
քը, որովհետեւ կըր հուրեացի հայրենաւէր մը
բեմ բարձրանար՝ իր հատին առաջին բուռերը
կ'ըլլային, պէտք է քանդել կարկեղանը: Տեղեկու
Քարթալե...

Եւ Կարազնոցի մէջամզծորէն կը խորհրդա-
ծէ:

«Փիւնիկեցիները, նոր հիմնեցին կարթագե-
նը, գայն կոչեցին Կարթաշտո, այսինքն՝ Նոր
Քաղաք: Կրակց վրաստար աստուածուհին թափ-
քը դաժան էր ու անյայտ: Սիրում էր մանուկ-
ներին եւ ամէն օր՝ մանուկներ գտնում էին ճրտ
առէներէ տակ: Թանիրը ունէր երկու գոյգ քիւ:
Նա գեղեցիկ էր, ինչպէս լուսին: Երբեմն գտնե-
րին երկրիում էին մետաղայն խուցերում:

«Սակայն ինչ եղաւ Կարթագենի հետ: Ինչ-
պէ՞ս սապարուց այդ իրոյստ ու անտրիկ քա-
ղաքը: Ինչու՞ ոչնչացաւ այդ քաղաքի օստանը?»

Անցեալի Նոր Քաղաքը Կարկեղանն է, իսկ
Ներկայ ժամանակներու Նոր Քաղաքը, ըստ հե-
ղեակի, Նիւ Ետրքն է անշուշտ:

Վերի մէջբերումին մէջ նկատուի է անուր-
եքու շփոթ մը: Թանիթ գեղեցիկութեան, ար-
զասարերութեան եւ կենցեղ աստուածուհին էր
եւ կը ընակէր լուսնին մէջ: Իսկ դաժան ու ան-
յայտ շատուածը կը կոչուէր Մուրի, որուն եր-
կաթիւ ործանին փորին մէջ կը հրկեղէին անշա-
փահաս մանուկները: «Սակայն ցոյց վէպին մէջ,
Ծլուպէր երկարորէն կը նկարագրէ այդ անուր
զուարեութեան արարողութիւնը:

Կարկեղան ունի իր պաշտպան աստուածուհին
եւ զբմուհին: Աստուածուհին կը կոչուի Թանիթ,
իսկ զբմուհին՝ Ամիլթորի դուստրը, Սակայն ցոյց
Ահա Սակայն ցոյց նկարագրութիւնը Ծլուպէրի
գրչում եւ լիպիւցի էջիտի Մաթոյի անքերով
զբտուած:

«Մաքսո մտիկ չէր ըններ: Կը դիտեր զայն եւ անոր գգնատները կը նայնանային մարմնին հետ: Կերպասին վերովտուսը կը ծծեր անոր մարտին գեղեցկութեան: Անոր աչքերը շագարակ աղա՛մանցներ էին, եզունցներուն փայլը կը գերազանցեր մասնները զարդարող քանկագին քարերուն շոգարմանը: Պարզօտին ճարմանգները իրաւաւ կը միացնէին իր սոխմէները, եւ Մաքսոյի երեւակայութիւնը կը կըրտուեր ամենց նեղքին մէջ, ուք կ'իջէր սսկի շոքայի մը ծայրը կոյնաւած հիւանայի զմրուխտ մը, որ կը յայտնուէր պարտին վերը, շոքարչին մէջէն: Օղը կազմուած էր զնգին խոշոր սափիքայէ մը, որմէ կախուած էր մարգարտիտ սրուակ մը՝ քանկագին բայրերով լեցուն: Եւ ամէն սնգամ, որ Մուլամօզ գլխով շարժուէր մը ընէր, կաթիլ մը ամուշահաս կ'իջնար մերկ ուօին վրայ: Ստփին ճաներուն անցըած երկու մանակները իրարու միացած էին սսկի շոքայով մը, որ կը սահմանէր իր փայլեալ շաքի կը կը հանդիսանար անոր կուսութեան գրտակամը:»

Մաքսո ճամբուած կը բացազանջէ:

«Ան չի նմանիր մարդու աղջկանուն: Տեւար անոր խոշոր աչքերը երկար յոնքերուն տակ, ինչպէս արեւներ յարակամ կամարներու մէջէն: Կը յիշես այն պսիւր, երբ առային անցում երեսնայ զայլատին աստիճաններուն վրայ: Բայր քանկանայ ստգունցում իր գեղեցկութեան առջեւ: Իր էութեանն կը սփռուէր քան մը, որ աւելի շուրջ էր, քան գինին եւ աւելի սարսափելի, քան մահը:»

Նիւ Եորք քաղաքը մուցած է իր աստուածը կամ աստուածուհին, քայքայ ունի իր քրմուհին, որ չեղան Մուլամօզի կրտսեր զոյրն է: Այլմիբա զուտորն է կարկեղոսի, ինչպէս Մուլամօզ: Այլմիբա օծուած է Արեւելի բոլոր ճամբներով եւ խորհուրդներով: Ան հողին է նոր կարկեղոսի՝ Նիւ Եորքին:

Վէպին ամբողջ տեսողութեան, հեղինակը չի յարձնար իր հերոսուհին բարեմասնութիւնները, անհասականութիւնը եւ գեղեցկութիւնը երգելէ: Եւ ընթերցողն ալ չի կշտանար այդ զոյքը ունկընդործէ: Ան Այլմիբայի անձին ետէրուած քանի մը հասուածներ:

«Այլմիբայի ուօի յոյժը մտկ է որտիս մէջ: Մակայն ինչու ալ զաչքերի անասնի սրտմուրիւնը: Այդքան կեանք ու պերճանք եւ այդքան

սրտմուրիւն: Մքագմած ծով լինի կարծես, ուք տրտացալուն հմ երկինքի բայր վիշտերը...»

«Էրձ քուտ է, որ Այլմիբա կուշի է անգունգի երկին անկարելիորէն արմատ նետած մի ծառի ճիւղից եւ օգնութիւն աղերսում: Գրկուտ եւ գլուխը եւ համբարում եւ պրցումէտ բերանը: Եւ համբարի մէջ տեսնում եւ կարքագէտի նեւաւար ծովագին բիւրաւար աւազները եւ ասագներին վրայ Այլմիբայի՝ շտաբաղիկ, ծովագետի պսակը ձակտիմ, տոտուածօրէն մեծակ ու տըրտում...»

«Կինն այլիւ չէր պարում: Նա յանձնուէր էր տարերքին եւ տարերքը նրան տանում էին Սահարայից մինչեւ Սինա, մինչեւ Նեգր եւ Արաբիա: Երաշտութիւնը մարկ ու մտնում էր հագնվարքի, երբ բնի վրայ երեսաց Այլմիբան՝ գուհատ ու երկայնակիւ, նայն արկու տեսիլք, ապա արկու հեղանկում մի նստի, օքորուելով, ալիքաւարակով, քեւուելով ու քեւահարելով, քեքի ու գեղեցկութեւ, ինչպէս փնկիկ, ինչպէս շարմակութիւնը մեծաղ պարի, սակայն սակիլ ինքնաստեղծ ու ինքնատիպ... ինձ հետ պատահեց այն, ինչ պատահում է յանալի: Գիտակցականին հետ ապրեցի երթագիտակցակամը, ուք անցեալ, ներկայ ու ապագայ նայացած՝ քարտուում եմ: Մտացայ Փոքր Սաիդը, Նիւ Եորքն ու Գիլիլի Օգիլի կրտսերին կայարութիւնը եւ նեւուտ՝ կարքագէտի աւազներին վրայ տեսայ մի մտողայ աղբիլ՝ աւազակայտերի շուքի տակ...»:

Մուլամօզ եւ կարկեղոս, Այլմիբա եւ Նիւ Եորք, քայքայ Նահ Այլմիբա եւ կարթագէտ եւ Արեւելը: Այս հակոտնեայ բեւեռները իրարմով ապրեցեկուտ համար հրուշքը անհրաժեշտ է: Վէպի մարդին մէջ, այն հրուշքը կը կուտի երեսակայութիւն եւ, ինչպէս ըստիք, զանոնք իրարու միացնող աստեղքը կը կուտի ոգեկոչում եւ երազ:

Բազմատան Մուլամօզին, որ ունի գերմարդկային բնոյթ, Այլմիբա աւելի մարդկային է, աւելի միս ու ոսկոր, քան իր յուրտեսականացած քոյրը: Այլմիբա կը տառապի, կը զանգատի: «Եւ բնու չեմ ապրիլ: Իս տգում եմ նստել երազի քեւին ու անկամայ: Իս վայնեում եմ քեզանից, ինձանից եւ ծաղիկներեց:»

Ուրտուտ, որ չի ճամբուած Այլմիբայով, կ'ընէ անհասանելիւմ մը, որ հետու չի հիմարտուութեան: Ընտ կին չէ, ոգի է, կ'ընէ:

Ճշմարտութենէն հեռու չէ նաեւ Սեւակ Սուք-
ճանին կատարած բնորոշումը, որ Այվերան կը
սիրէ մաքուր ու սրբապահական սիրով եւ ան-
նասպան կ'ըլլայ՝ տեսնելով իր աստուածունհին
աստիճանը:

«Այվերա մի ամենազբառաւ մայր է, մի
կատարեալ գոն, ամենափոփոխ քայր, որ իր ցո-
ւեքը մտացած, ամառում է այլոց վերհերը: Քըը-
ւաազոյն մի աստուածամայր, մտիրումի մի
ամբողջ ազրիւր, մակաւորիւմ չապրած մի դըը-
խտի...»:

Սուղ կը բացատրուի անոր յուսահատական
արարքը, փախուսող կենսեցէն, Թափի անձնա-
պահութենէն հաջ: Այս դժբառաւ մայրը, ամե-
նապոփոխ զոյրը ինքզինք մեղաւոր կը զգայ մալ-
փի մահուան համար եւ կ'երթայ ամոքելու այ-
լոց վէրջերը: Այվերա համակ սէր է, համակ նը-
ւիրում:

— Այս, սիրում եմ մալփիմ, ամէն գրչեր
մինչև յոյս սնարին մօտ եմ լինում, մալփը ամ-
բադային կտրուած է ինձանից: Ատում է առանց
լիմ չի կտրող ազրիւր:

«Վէպը իրականութիւնը երազելով շարունա-
պիլու փորձ մըն է, կ'ըսէ Լէոն Տօտէ:

Վէպասանը, ուրիմ, պատմարանն է այն բա-
նարուն, որոնք տեսնանելի են ընթերցողին: Այդ
անտեսանելի բաներուն մէկ մասը կը պատկանի
իրականութեան, սակայն մէկ մասն ալ՝ երեւակա-
յութեան, որուն ազրիւրները միայն հեղինակը
գիտէ:

Երազը միայն կրնայ վէպին տալ իր ծաւալը
եւ սարդաթիւղի եւ հերոսը բարձրացնել իր իս-
կանէն մակարդակին: Ընդհանրապէս մարդ կ'ե-
րազէ բան մը, որ շուրի, բան մը, որ կատար-
եալ է, բան մը, որ զեղեցիկ է:

«Սալամոյց վէպին հերոսը, որ բարբառա
քնդի մը իշխանն է, իր սիրունհին համար կ'ե-
րազէ տեսնի մը երկրային դրախտ:

«Կատարելի ամոլիմ, ծովու վրայ քամ օր ծամ-
քորդելի ետէ, կը յայտնուի կզգի մը, որուն ա-
փերը ծածկուած են ոսկիի հատիկներով, կամա-
չալիստը եւ թռչուններով: Լեռներու վրայ բոյ-
րերով յարող յաշոր ծաղիկներ կ'օրորուին ու կը
միտմ յախանակամ բուրվամներու պէս: Ուրիմ-
չեմիներուն վրայ, որոնք աւելի քարձ բն, քան
մայրիները, կաքմազոյն օտը, իրենց ազամանի:
Ալիաններով վար կը ձգն ոսկեզոյն պտուղներ:

Օղը այնքան մեղմ է, որ մանր երբեք չի մտնե-
նար հոն: Միտսն կ'ազրիմք բիւրեղէ քարայր-
նարուն մէջ, որոնք կը բացուին մարմարէ բլուր-
նարու կողմ: Այս կզգիմ բնակիչ չունի: Ես կ'ըլ-
լամ անաք բացատրը եւ դուն կ'ըլլա իմ բա-
զանիմն:

Կարապետի վէպին հերոսները, այսինքն՝ Ալ-
միրան ու Հոմերը իրենց ալ ունեն իրենց երազ-
ննը: Որքան ալ հոյակապ ըլլայ Նիւ Եորքը, որ-
քան ալ Հարուատ ըլլայ արդէ սարկուկերով, ու-
նոնց կը ցանկան ուրիշ բան: Այվերա կը ցանկաք
իր ոնցեալը, իր հեռաւոր ծննդավայրը, իսկ Հո-
մեր կը փորձէ հասնիլ այդ հեռաւոր Ամիրանին,
Կարկեղանի այդ շնախարհիկ թոնուհին:

«Այվերա մուշկէ բարում: Մուշկ չէ, այլ ա-
րեւակեզ աւազ՝ ծովափի փրփուրներով յագեցած:
Նարից բողիկ է նա, կարբազէնի սղիտակ ա-
ւազի ծովում: Հետում սպանագին արեւակոյ-
տնը կամ: Մերք ընդ մերք տրեւակոյտերը հե-
ղակամում են սօրի անգոյն ալիքներ ծովում:
Այվերայի մակտին վրայ փայլում է փիւրիկամ
ռոկիմ: Կանգնել է սղիտակ մեծաւոր ծովափում
եւ անդարձ մեկնած առաջատներին հետն է ու-
քանում: Իր սիրկութիւնը աւելի սղիտակ է, քան
առաջներ ձիւտակը: Նրա ուղեւորի տակ առնա-
նում է աւազը: Նրա մագնիսից աւազ է բա-
րում...»

Այս երազը կը բերի հեղինակի որտէն: Երազ
մը, որ հեռու է եւ դժուար իրականանալի:
Այնուամենայն է, իր սիրունիւնն ու ուղեւորին մէջ տուայ-
տող Արևելքի այս տղան չի յաղորդի մտնել իր
ծննդավայրին կախարհանքը եւ զեղեցիկութիւնը
եւ, միեւնոյնը համար, կ'ուզէ վերակենդա-
նացնել զայն ո'չ թէ ներկայ վեհակով, այլ իր
անցեալի փարթաւութեամբ եւ հեթանոսա-
թեամբ:

Կարապետի, որուն մէջ բանաստեղծի խառ-
նուածքը անտեսելի է, իր երազին առում է այ-
լաբանական երեւոյթ: Արևելքը կարկեղան քա-
ղաքն է, Արևելքը մանուկն Այվերան է: Բայց
խորքին մէջ այդ երազը, հեղինակի պարագա-
րին, կը կոչուի Հայրենիք: Եւ այնքան զորաւոր
է այս բառին ձգողական ուժը, որ ծրարի երկր-
ներ կը նկատուին նաեւ Հայաստանի մերձակայ
երկրները, Փոքր Ասիայէն մինչև Ամերիկէն ա-
փերը, ուր կը տիրեն կապոյտ երկրից մը եւ առա-
գի անայրաժիր անդամատները, որոնց ընդերքէն

վեր կը սցուին սլացիկ եւ Կարտ արժանեմներ: Ուրեմն Հայկականութեան նրանքը, որ շատ զգալի չէ վէպի ընթացքին, եռնիսկ Սեւակ Սուր- հանի խոսքերուն մէջ, կը յայտնուի ասորիկերեայ ջուրի անսպաս խաւի մը պէտ, որուն Հասնելու Համար պէտք է ըլլայ յատկատես եւ խուզար- կող:

Եւ այդ է պատճառը, որ մաստանջող յան- կերդի մը պէտ, Նիւ Նորթի փորթն ու մշուշե- րուն մէջէն, Նեղինակը լսելի կը զարձեկ յան- կարծ այդ գունաւոր ու մէլամաղմուտ Համարնե- րը, որոնք կ'երգեն Արեւելքի Հազարամեայ կա- խարդանքը,

Արձանման ծաղիկների ու վարդերի բայրը վառմամ
Ու նայիրեան աղբիւրների կեղծանում պարը...



Նիւթը, գործող անձերը, կառուցը եւ մըթ- նոյրաբը մէպի մը անճարտեչաւ տարրերն են, ա- նոր մեան ու օսկորը: Եթէ այս բոլորը յաւըպա- պէտ արուին, կ'ունենանք արժէքաւոր մէպ մը, Հանելի մէպ մը, Հետաքրքրական մէպ մը:

Բայց դեղարուեստական մէպ մը ունենալու Համար, անհրաժեշտ է Հետապնդել եւ զարգա- ցրել զբանաստեղծական մեծ թեմաներէն մէկը, որ գործին կու տայ յախանականութեան կնիքը:

Էնթրապազէնի դուստրը մէպին մէջ կը զար- ցանան երկու գլխաւոր թեմաներ, որոնց ջուրն ի մեր կան երկրորդական թեմաներ, ինչպէս Կնան- քը, Մահը, Երջանկութիւնը, Արքը, եւ այլն:

Գլխաւոր ատմքն թեման, որ Հես կը նոյ- նանայ սիրոյ եւ Արեւելքի օգնկոչումներուն Հես, կ'արուած զրախտի թեման է, որ անի գերբնա- կան եւ մարդկային բնոյթ, եւ որ կը կազմէ կրօնքներու մեկնակէտը:

Կորուած զրախտի թեման կը Հանդիսանայ արուեստի եւ զբանաստեղծական մեծագոյն լծակ- ներէն մէկը եւ զայն մակողմերը մեծերուն մէջ մեծագոյնները եղան են. Տանթէ՝ իր Վատարածա- յին կատակերգութիւնքով, Միլթըն՝ իր Երախտ կորուածայտով, Կէօթէ՝ իր Բնաւորքով, Նիւկո՝ իր Երախտով, Տոթոյեւելի՝ իր Բնաւորքով, Քոստըր՝ իր Բնա- րին ծաղիկները գործով, Ներվալ՝ իր Բնա- յիտքով, եւ այլն: Կորուած երգիք մերստեղծե- լը կամ վերագտնելը եղան է մեծագոյն բանա-

տեղծներուն եւ արուեստագէտներուն նրազը, ո- ռովՀեսու անոր օտմանները ընդարձակ են եւ անունները բազմաթիւ: Կորուած զրախտ ունի զանազան անուններ. ան կը կոչուի անցեալ, ման- կութիւն, անմեղութիւն, երեմ, երջանկութիւն, անձնաթ ու արարչարարչիկ երկիրներ, կորուած սիրուէի մը, այսինքն՝ այն բոլոր բաները, զորք մարդ արարածը չի գանձեր իր ներկային մէջ:

Այս թեմային առաջին աղբիւրը կը Հանդիսա- նայ Գիլքի Մննդքը, որ Կարապետէն Ետք Երա- նութեան պարտէզին Հրատարակները, մարդկային առաջին զոյգին աստուածային վերակը, ապա՝ մեղանշումը ու վտարումը, առած է արգէն- մարդ արարածին վեմ, արտասովոր եւ ոչգրե- րական ճակատագիրը:

Յոյն գիցարանութիւնը, իր կարգին, այս թե- մային առած է խորհրդաւոր եւ անճարաւարտ սրտար մը, որմէ ներշնչուած են բազմաթիւ զրա- ղեաներ եւ արուեստագէտներ:

Կարապետը, իր կարգին, մտնէ Հետեւած է այդ թեմային անցուզարձերուն, եւ որով լսարձ իր Հերոսներուն լուրջ ստեղծած է առաջադիւան- այդ մթնոլորտը:

Կորուած երջանկութեան, կորուած սիրու- չիքն, կորուած անձնութեան թեման յախտն անհանցած է Որփէտի եւ Ներտախիկի առաջա- լին մէջ:

Որփէտս՝ աստուածներէն մեծն բանաստեղ- ծը՝ կը սիրէ գեղեցիկ յախտաւորս Եւրոսիկէն: Ամուսնութեան օրը սակայն, նախանձող ու շար աստուածներու զրգոյմիլ օտակ, թունաւոր օձ մը կը խայթէ ու կը մահացնէ զեղանի Հարսը, ան- միթթօր մզելով բանաստեղծը, որուն երգերը կը զարդն ընդմիջտ: Որփէտս յանձն արձնելով բո- լոր դժուարութիւններն ու բոլոր աստագանքնե- րը, կ'որոշէ փրկել իր սերեցեալ կողակէցը: Եր- կար թափառումներէ եւ յոգնութիւններէ Ետք, ան մտաք կը գործէ խուարի թագաւորութեան ներս ու իր երգերով այնքան կը յուզէ Փերսե- Ֆոնէ շատուածուէն, որ ան կը միջամտէ իր ամուսնին մօտ, որպէսզի Եւրոսիկէ Որփէտի Հես կրկին վերադառնայ ի յոյս աշխարհ: Պղտ- սան կը Հասնի, բայց պայման կը դնէ: Ինչ օր պատահի, Որփէտս պէտք չէ իր ետին նայի, մին- չնե որ զուս դայ իր կալուածէն: Գժօթի եր- քին, յանկարծ տեղի կ'ունենայ երկրաշարժ, մայրեր կը զլորեն: Որփէտս ասրապան Ետին կը գառնայ, օգնութեան երթալու Համար իր արտա-

Հատորին... և Երբեքին է կանհետանայ յանկարծ, կորսուելով երկրորդ անգամ՝ Որբէնս ընդմանալով այս կորուստին կը դառնայ խնկազար ու Քափառական:

Կարապետն իր վէպին մէջ կը զարգացնէ այս թեման: Հոմերոս-Որբէնս կը սիրէ Ալմիրա-Երբեքին և զայն կը կորսնցնէ՝ անոր ամուսնուութիւն ստաբիլութեամբ ըլլալուն համար: Երկուր փրկուողներէն էր զայն կրկին կը զանկէ դէմոստրացիոն մէջ, բայց մանուկներուն ոչքը և կանչերը իր սիրունին ընդմիջ կը բաժնն իրմէ...

«Ալմիրամ շիայ»:

«Ետալիկներու չերմեանազուրբամբ աստուաները զինուում են ճարտեմներով և հասցեմներով և արշաւում քաղաքի վրայ»:

«Ամէն օր փնտաւում եմ: Խուզարկում եմ փառացներն ու նրազարակները, յայտնի կենտրոններն ու քաղաքի կորած անկիւնները: Գիշերները քափառում եմ Հաղորդի ակնբերում, որովում նախաձեռնութիւններով քառած թիքտ սրմարաններն ու աման ինքանցները և միջուկ յոյս ծըխում...»:

Ինչպէս Որբէնս գտաւ Երբեքինին, Հոմեր կը գտնէ Նաև Ալմիրան՝ զայն երկրորդ անգամ կորսնցնելու համար:

«Հեռուում գայտաւում է Ալմիրան: Կիսարաքիւնը ինչ-որ պագիկութիւն է տունը նրան: Գուրջը բարձր դրական ու մաշուր: Իր ստանալովի մէջ անգամ գործարար ու կարելից շնչա կայ»:

«Իր մագերի բոյրը: Իր արքունիի ազը: Իր սրտի գարկը: Իմ անուշ, իմ ոքր, իմ սիրելի Ալմիրա: Իմ սպասումի կայս, իմ սիրոյ տաճար... Դիմացում ծովն է իշրում, իսկ ծովափի աւազների վրայ կանգնել է Կարապետն զուստը՝ կրծքին փիմիկեան երկ օսկեղբում, մեծակ, մալուր, ինչպէս փոշիացած աւերակների մշտաբանն ուզին: Յամաքն են թռուցիկ ծոցն ու լիճը և փոխարէն զիսկն աւազն է ծփում ու տարածում զէպի արեւելի: Երբեքինն: Որբան առաջուում, կրկին ճոյն կեռում եմ մտաւ: Կանչում եմ Ալմիրային, սակայն ձայն չի լսում: Հիմա մաճառքը պարզել է զէպի արեւելի, ինչպէս թափի և զոն է կախանում իր ճաղաքի համար: Ըս պատրաստ եմ գոհանելու զժխնս մտաւածուեան, միայն թէ՛ վերադառնայ Ալմիրան: Հինգ հարիւր տարի չէ, կինը կարգար տարի կը սպա-

ւում: Իր համար խարոյն կը պատրաստել և իր կեռ միասին կը մտնում բոցերի մէջ: Միայն թէ՛ իր իսկ մեծիւմերից յարաբերում առնի Ալմիրան, իմ միտաւար արեւելիմեաւը: Աւագը զիւում է նրա ստեղծի սակ, բարձրանում, ծածկում նրա ծնկները: Ալմիրան մի վերջին անգամ կայնացքը ազգում է ինձ, քափանցում միջուկ հոգու եմ-քախարը, ազա մէկ տա մէկ կանոււմ, վրայից նստում է հագուստները և հանգարտ քայնքով շարժում զէպի Կարապետի աւերակները՝ մերկ ու բացակէպ: Աւերակները բացում են իրենց խանութը քեւերը և իրենց դարուոր փաշիների մէջ առնում Կարապետին դտնել: Մի պահ կտփախել ինչ ծածկում է աւագով, ծովածուայ, դեպի աւազիկ»:

Իսկ երկրորդ թեման, որ սերտ ազգեր ունի առաջինին հետ՝ անհասունելի կեռ թեման է, յարմարական Եւսան:

Կարապետն իր ժողովուրդը կեռ էր Եւսան, բանաստեղծականն ունիլ՝ միայն թէ ինչ ունի: Ինչպէս էն Թուրքոյ, Վարդաբեկի զուստը՝ Վէպին Կեռիկեղ բարձրանայ կը յայտարարէ: «Ո՛վ կիմ, աշխարհի փրկութիւնը ձեռքերուդ մէջն է»:

Գնորական տիպարները խորապէս յուզած են բանաստեղծներուն և փիլիսոփաներուն երեւակայութիւնը: Անոնց այլապէս և բազմապէս տիպարները զարեւու ընթացքին իրարու միանալով՝ մէջտեղ բերած են մարդկութիւնը յուզող մեծազոյն առեղծուածներն մէկը:

Բանաստեղծներուն, փիլիսոփաներուն և արեւաստեղծներուն համար կինը ամէն ինչ է: Ան կընայ կոչուել Լիլիթ, Եւս, Գլխոպատու, Մեռանի կամ Ժան տ'Արք, Իզիտ, Աստղիկ, Քանիթ կամ Մուրր Գոյս: Ան կանքի ազդել է, սիրոյ խորան, Կեռութեան պարտէզ, անարատ սրբուհի, անմտազնիլ աստուածուհի: Ան մայր է և ջոյր, կողակից և Հոմանուհի, առաջինութիւն և մեղք, զթուրեան ծաղիկ և պերճազն: Մէկ խոսքով՝ կինը կանգին մեկնակէտն է, առեղծուած և վախճանը: Անոր հոմեան բարդութիւնները և հակասութիւնները մտալկան են այր մարդուն միտքը: Եւ զարեւոյ ան լանացած է Քափառելի անոր ներաշխարհին ճերմ, հուկնայ անոր խորհուրդը և զերթ բունն է անոր հանգիւլ՝ Համաձայն իր խոսուածքին: Գան մարդիկ, որ պաշտած են կինը, ուրիշներ անհոտ են զայն, ա-

ասնց կարենալու սակայն խզել այն անտեսանելի կայծերը, որ աշխարհի առաջին օրէն ի վեր իբրտու կը միացնէ արու եւ էգ բջիջները:

Եւ սակայն կոմիտակն խորհուրդը կը մնայ խորհուրդ, եւ Հակոբակ կատարուած բուրբ փնտռութիւններուն, իւրաքանչիւր սերունդ կը զբաշարէ նոյն մեկնակէտին վրայ եւ կը ջանայ զայն լուսնել իր միջոցներով:

Գեղարուեստական գեանի վրայ, Կարապետ կը ջանայ Հետեւիլ Կեօթի Հետեւեալ Հաստատութիւն, Թէ՛ կիմը այն միակ անօրն է, որ կըրնայ պարունակել մեր իտեայնները:

Այս թեման իր մէջ կը պարուստէ ուրիշ թեմա մը եւս, զոր կրնանք կոչել պատմական եւ գերբնական սիրոյ թեմա: Բուրբ խեղճապաշտ բանաստեղծներուն համար՝ կենը կատարեալ էակ մը եղած է, զերե՛ մարդկային բուրբ թերութիւններէ: Այս գերբնական սէրը բիւրեղացածն է այն բուրբ սէրերուն, որ յարկներու ընթացքին տըպատարած են բանաստեղծին կամ միպատանին սիրտն ու հոգին, որովհետեւ իրենք՝ այսինչ կամ այսինչ կենը չէ, որ կը սիրեն, այլ՝ կոմիտակեալ թեման տիպարը, որ վերջ ի վերջոյ անհասանելի պատկեր մըն է: Ժերար ուր ներմայի հետեւեալ նախադասութիւնը կը բացատրէ ամէն բան.

«Ես պատկեր մը կը կայսմեմ եւ այ իրական էակ մը: Իմ սիրած կիմն պետք է ըլլայ իշխանութի կամ աստուածութի եւ մնայ անմտայնի»:

Վերի նախադասութեան, Կարապետ իր վեպերէ մէջ կ'արձագանգէ իր Հերոսին բերնով.

«Եւ սակայն այնքան կիմը չէ, որքան այն անբացատրելի խորհուրդը, որ այի՛ք առ այի՛ք օղակում է իմ էութիւնը»:

Կարկենդոնի դուտարը ապրող էակ մըն է, մի ու սակար, ապրում եւ կրակ, ուրախութիւն եւ վիշտ միանգամայն: Այ՛բրայի տիպարը կրնայ ծառայել վերջուած ըլլալ իրական կեանքէն, սակայն անոր էութեան առիջնող երեւոյթները պըտուած են Հեղինակին ստեղծագործ երեսակայութեան: Այ՛բրայ կին մըն է կիներու մէջ, գեղեցիկ, հմայող ու կատարեալ, որովհետեւ անոր մէջ խառնած են Հեղինակին բուրբ երգները եւ ան դարձած է յաւիտենական տիպար, խեղճապաշտ խառնուած սիրտան բուրբ կիներուն, ինչպէս կ'ըսէ բանաստեղծ Վիլիէ տը Լիլ Ատուս.

«Սիրողին համար, մէկ կիմը իր մէջ կը պարունակէ աշխարհի բոլոր կիմերը»:

Կարապետի փնտռութիւնը կ'ընթանան զանազան ուղղութիւններով: Ան կորուսած դրախտը կը փնտռէ Արեւելքի կողմերը, յաւիտենական եւ կատարեալ կենը կարկենդոնի դուտարն է, բայց դիտէ, որ յաւիտենականութեան եւ կատարելութեան իշխանը կ'իշխէ բուրբ ժամանակներուն եւ բոլոր երկիրներու վրայ: Այս համոզումը առաջ կու գայ Հեղինակին միջոց խառնուածքէն եւ դերբնականին հանդէպ ունեցած իր ակնածանքէն:

Իր յոգնասանը փնտռութիւնը ընթացքին, Համեր կ'անցնի եկեղեցիէ մը առջեւէն, եւ խորհրդաւոր ուժ մը զինք կը հրախրէ ներս.

«Թէ ինչու եմ եկել, իմէն էլ չգիտեմ:

«Մնացել եմ միմակ սուրբորի հետ: Խորանի խորհուրտ կապուտայնայ Մարգմեմ ենդ ծղոտում է եւ տաճարի մէն անկիւնից ազօրքի ծուլ է գալիս: Հոգիս պարագ անօրն մնամ կախուել է գործքից: Գնայի՛ք տեղ չի մնացել: Մաշտուլ եմ բուրբ մոռացարները: Փակուել բայր դրները:

«Մարգը վերագարծել է իրեն: Պարտուել ու վերագարծել:

«Այստեղ ես ապեծով եմ: Այլիս ոչ ոք չի կարող իմ խոցել:

«Այսու՛մ է պատարագը: Հոգիս առի եմ անփերիս եւ կանգնել խորանի առջեւ: Ես միայնակ չեմ: Ի՞նձ հետ եմ միւսները: Իմ նախապայտը, իմ հայրենիս եսը: Բայր քրամք, որ մի կտոր լայս ցանցին խաւարում: Ու նաեւ քրամք, սրտեմ մի կաթիլ իւր լցրիմ քրտու՛մ: Ու նաեւ քրամք, որամք իրենց համարը պեղեցին անշունչ վիւերի վրայ: Առանց քրամք քա չիք յինի: Առանց ի՞նձ տաճար չէք լինի...»

«Քրիստոսի գլխին փշէ պսակ կայ: Պսակից արեւն է կաքում: Արիւնը դարձել է ճանաչել եւ լուսատարում անտեղը: Ամէն տեղ ներկայ է Աստուծոյ մտոր:

«Ենչու՛ եմ եկել: Թերեւս պատճառ տաճարն է: Տաճարը օրէնք է, կշիռ ու չափ: Մարմնի եւ հագու ամուսնաբխիմ:

«Ենկել եմ գտնելու ինձ: Ես՝ մեղաւոր ու շեփացած, շնացած ու շար, եկել եմ հագիս անարդի դնելու Աստուծոյ սեղանին առջեւ: Ենկել եմ կրկին ստանալու, նարից մարալու եւ երբեք չտուլու: Ենկել եմ պատերից փակու ամօքստար քրտուս»:

Այս տողերը ունեն անկողնութեան լեւոյ մը, որ կը բխէ Կարապետի ներաշխարհէն: Ձեռք դե-

անբ ինչ նև ճեղինակին կրօնական համոզումները, բայց կրնանք անվտանգ հաստատել, որ ան անասարկեր չէ զբխտոնէութեան երկնատուր պատգամներուն:

Հոմերի մուտքը կենդանիներ, պարզ դիպուածի մը արդիւնքը չէ, այլ անդիմադրելի մղումի մը արդիւնքը: Եւ եթէ Ամիրայի անհեռատարման ասեղ իր այլարանական իմաստը, կը հասնինք այն եղբակացութեան, որ Արեւելքի աղջիկը, Քանիթի գրմուկին, թերեւ հայ Ամիրան, բնազդով զտած է զբխտոնէութեան խորունկ իմաստը, որ կը խուսանայ Ահաբարանի ճեանհայ խօսքերուն մէջ:

Գիրազյան սէրը իր կեանքը գտնիմ է իր քանկամերում համար:

Կամ՝ զո՛րքամ կը գրկուիմք մեր հարստութիւններէն եւ մամր ու մութը հեռոյճնայիմ զքթաքանկներն ու քշուանմեր փրկելու համար, այժմ-մամ կ'ըլլամք քրջամիկը:

Մէկ խօսքով՝ Ամիրա երկուր փնտառուքներէ եւ կրկար մղմանանջներէ ետք, կը թուի զտան ըլլալ կորսուած Եղծը, ա՛յն ոպատանարանին մէջ, ուր կը խնամուին թերեւ մանուկներ:

Հոմեր նոյնպէս զտան կը թուի ըլլալ իր կորսուած Եղծը, մուտք զործելով Եկեղեցիին մէջ:

Այդ կորսուած գրախոր, այնինչ կամ այնինչ վայրը չէ, այլ կը պանտի մեր հողին մէջ, պայմանաւ, որ ընդունինք անոր գոյութիւնը եւ արդիւնք անոր հասնելու ճամբան:

Ուրեմն, Վարքազէնի դուտարը՝ սիրային վէպի մը այլարանական տարազին մէջ՝ կը յաղէ կարգ մը մարդկային, ընկերային եւ, մահաւանդ, գերմարդկային հարցեր, որոնք կը հանդիսանան իրաւ արուեստի գլխաւոր թեմաները:

Կարապետի Երջ ըրած է, արդեւո՞ք արդ ներդաշնակութեան մը, ունի՞ր ճիշդ՝ որու հասարակութիւն մը զոյսանայ իրանսութեան եւ երեւակայութեան միջև: Եւ զպատճառաւ երկար էջեր յատկացուցած է կարգ մը ընկերային, դրամական, գեղարուեստական եւ քաղաքական հարցե-

րու, որոնց այժմէականութիւնը անարանալի ըլլալով հանդերձ՝ ոչ մէկ նպատակ կը բերեն զործին: Այդ հարցերը կրնան մեզ հետաքրքրել այսօր, բայց ոչ զայլից սերունդները: Արուեստի զործը նկատի կ'առնէ ոչ թէ միայն ներկան, այլ բոլոր ժամանակները եւ բոլոր սերունդները:

Վարքազէնի դուտարը՝ գեղեցիկ ու յաջող վէպ մըն է եւ նոյն ատեն արուեստի որակաւոր գործ մը: Միջավայրը, զէպերը, մթնոլորտը խրատաւ շաղախուած են բնականաբար, ուսանց բունգրասիկութեան, եւ ասիկա յաջող վէպի մը կարեւոր յատկանիշներն են:

Ոճը ունի բանաստեղծական երանջ մը, որ շուտադրեա կ'արտայայտէ սիրային տեսարանները եւ անցնուի ու հրազային Արեւելքի ոգեկոչումները:

Իսկ ամէնէն յատկանշականը՝ այն խանդավառ ու համոզուած լինան է, որ կեանք ու կրօնի կ'ընտանի իր էջերուն եւ խօսքին կտտայ ապարդեան եւ զգացուած բաներու հարազատութիւնը:

Յակոբ Կարապետի այս վէպը ունի թանկագին փորձ մը բազմերանք երեսները, որոնք կը պարզան ու կը շողարձակեն: Հոն կը զգանք միտմունքով իրականութեան եւ անիրականին, այսինքն՝ զէպերին եւ հարկանսութեաներին Եւրոպայի հրազը:

Վախճանը տխուր է՝ իրական կեանքին պէս, սակայն վնասեցուցիչ չէ, որովհետեւ ան մեր ատլեն կը բանայ շտեմուած աշխարհներու զուտ երբը:

Իր գոյութիւնը զգայի դարձնելու համար՝ հայ դրականութիւնը պէտք ունի այս տեսակ գործերու եւ ցոյց տալու համար, որ անիկա կարող է արտադրել գործեր, որոնք կրնան բազաւտութեան դրուել միջնադարին համարաւ սիրացած գործերու հետ:

Կը շնորհաւորենք Կարապետի, որ հետաւոր Ամերիկային կը շարունակէ իր նպատակ բերելու հայ դրականութեան, եւ վստահ ենք, որ զայլից գործերն ալ պիտի ունենան մարդկային, հայկական եւ գեղարուեստական նոյն արժանիքները:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԿՈՒՏԵԱՆ

Նշմարներ

«ՏՆՈՒՐ ԲԱՆԵՐ ՈՒ ԹԱՒԻԾ»...

Ամերիկայի մէջ եւր դադրած «Նրիտաւարդ Հայաստան» եւ «Նոր Աշխարհ» թերթերուն առիթով, մեր նախորդ թիւին մէջ արձանագրեցինք քանի մը արագ խորհրդածութիւններ, հրաւիրելով ընթերցողին ուշադրութիւնը այն վտանգին վրայ, որ դամոկրեան սուրբի մը պէս առկա կը մնայ ընդհանրապէս հայ մամուլին վրայ:

Երեւոյթը մէզի յատուկ չէ, համաշխարհային է: Ընդդէմ այդ պատճառով, ընդհանուր պաշտպան մը ապառ համար հետաքրքրներուն, հետապայ էջերուն վրայ կը մէկտեղենք քանի մը նշմարներ, որոնք մէկ կողմէ կը պատկերացնեն Միացեալ Նահանգներու տարածքին սպորտ փոքրամասնութեանց թերթերուն ճակատադիրը, միւս կողմէ կը թուեն լուսոյ քաղաքին մէջ մամուլին ստացած յայտնողական հարուածներուն պատճառները, որոնք ունին գլխաւոր երեք լծակներ.

- 1.— Տեսողա-լսողական միջոցներուն շլացուցիչ յարձակողականը,
- 2.— Սղութեան յարանուն ընթացքը,
- 3.— Ընթերցասիրութեան աստիճանական նուաղումը:

Իրենց հրատարակութիւնը դադարեցնող թերթերուն ստանձնող պատճառաբանութիւններուն առեւթեր՝ հետաքրքրական պիտի ըլլար դիտել, թէ ի՞նչ միջոցներու դիմեցին իրենց գոյութիւնը շարունակող թերթերը: Տանք այս կապակցութեամբ օրինակ մը, առնելով միջին ժամանակի մը մէջ, միջին ծաւալով հրատարակուող երկչարթաթաթերթ մը, փարիզեան «Էա Գեֆան Լիքեր»ը:

Հակառակ թուշթի, սշխատավարձի, ցրումի եւ գանաղան ծախքերու նկատառելի յաւելումին, չհետացնելու համար իրմէ նիւթապէս միջին կարողութեան տէր ընթերցողն ու ուսանողութիւնը, «Գեֆան»ը մեծ զոհողութիւններ յանձն տաւ եւ չթոյլարեց ինքն իրենց «հետեւի» դիներու ընդհանուր յաւելումին, զոր օտարաշխարհ կիրառելի թաղամթիւ օրաթերթեր եւ շաբաթաթերթերը: Բայց 1 Ապրիլ 1971 թուակիր իր թիւ 115րդ համարին օրինակը 3 Փրանք սակագինով հրատարակ հանելէ ետք, յաջորդ թիւէն սկսեալ եւ շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ ներկայացուց հետեւեալ պատկերը.

- Թիւ 116, 16 Ապրիլ 1971, գին՝ 3,50 Փրանք,
 Թիւ 124, 1 Մեպտեմբեր 1971, գին՝ 4 Փրանք,
 Թիւ 148, 16 Սեպտեմբեր 1972, գին՝ 4,50 Փրանք:

1 Ապրիլ 1971էն մինչեւ 16 Սեպտեմբեր 1972, միայն մէկուկէս տարւան ընթացքին ուրեմն, «Էա Գեֆան Լիքեր»ը բարձրացուցած է իր սակագինը 50 առ հարիւր համեմատութեամբ մը:

Վերջին երեք տարիներուն, Փրանսական թերթերը ճիշդ «Էա Գեֆան Լիքեր»ի պէս բարձրացուցին իրենց գիները, շարժարացնողները զոհ դացին այս եւ վերոյիշեալ միւս պատճառներուն:

Մեր մամուլը եւս ենթակայ է նոյն վտանգներուն, բայց ուրիշներուն մօտ դադրած մէկ թերթին եւ մեր մէջ դադրած մէկ թերթին առաջացուցած հետեւանքները բոլորովին տարրեր են իրարմէ: Այդ մասին քիչ անդին: Առ այժմ կարողացէք քանի մը հատին առիթով դրուած դամբանականները:

ՈՂ - ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕՏԱՐ ԹԵՐԹԵՐԸ...

Միացեալ Նահանգներու մէջ լոյս տեսնող ոչ-ամերիկեան օտար թերթերը, օրրատօրէ փակուելու վտանգը կ'ապրին: 'Լեքշին երկու-երեք ամիսներուն ընթացքին միայն, Նիւ Եորքի մէջ փակուեցան արարական ճիւղաւոր «Երկրաբանութիւն» եւ Հրէական յայտնի «Տը տէյ ճիւղ մարմինի ճիւղ» օրաթերթը:

«Էլ Լոտտա» արտօրական օրաթերթը 1898էն սուգին հրատարակուած է Պրուքլինի մէջ եւ արտասահմանի արարական թերթերուն ամէնէն տարածունը կը նկատուէր: Փակուելէ առաջ, թերթին բաժանորդներուն թիւը եղած է 5000 եւ բաժնեղինք՝ տարեկան 25 տոլար:

Հոս միջանկեայ ըսենք նաեւ, որ «Էլեյրնիզ ամերիքալ ճիւղ» անդլիաստո թերթն ալ, որ կը հրատարակուէր Նիւ Եորքի մէջ՝ անդլիաստո արար նոր սերունդին համար, ասկէ տարի մը առաջ զաղբեցուցած է իր հրատարակութիւնը, նորահաս սերունդին մէջ արարական կեանքի մասին հետաքրքրութեան պակասին հետեւանքով:

«Տը տէյ ճիւղ մարմինի ճիւղ» հրէական օրաթերթը երրորդն էր հրէական օրաթերթերուն մէջ եւ իր փակումով այսօր կը մնան միայն երկու հրէական օրաթերթեր:

Յիշեալ օրաթերթը ատեն մը ունեցած է 100,000 բաժանորդ, իսկ փակուելէն առաջ այդ թիւը եղած է 35 հազար:

(«Նոր Աշխարհ», 19 Փետրուար 1972)

«ՍՈՒՐԲ ԳՐԹԻ ՊԷՍ»

«Հայրենիք»-ի 30 Հոկտեմբերի թիւով հաղորդած էինք, թէ 79 տարիներու անընդմէջ հրատարակութենէ ետք վերջնապէս փակուած է Միացեալ Նահանգներու մէջ ապրող երկու միլիոն յոյներու երկու կարեւոր թերթերէն «Աթլանթիս» օրաթերթը:

ՄԼԲ ուշադրութենէն չվրիպեցաւ այս առթիւ թերթին գրաւարապետ Տուրլարիսի հետեւեալ արտայայտութիւնը.

— Յայնքը Աւար Գրթի պէս կը պահէին «Աթլանթիս»ը իրենց քարձեղուն տակ:

... Ձենք ուզե՛ր ջրբերէլ Գամեայ յունական օրաթերթի մը փակման հաւանական պատճառները կամ շարժառիթները՝ երկու միլիոն ամերիկացի յոյներու հաւաքականութեան մը մէջ: Ամէն ընթերցող ի վիճակի է տուեալներ եւ ազդակներ թուելու: Սակայն կ'ուզենք այս առիթով ընդգծել, թէ ամերիկահայութիւնը ո՛չ իսկ կէս միլիոն է, մեր օրաթերթերը ո՛չ իսկ չորս հազար սպասուած ունին... «Աթլանթիս»-ի 14 հազարին փոխարէն՝ սակայն, կա՛ն տակաւին ու վստահօրէն պիտի տոկան ու պիտի ըլլան միշտ:

Յոյները «Սուրբ Գրթի պէս կը պահեն» եղեր «Աթլանթիս»ը, որ փաստօրէն փակուած է սակայն այսօր, որովհետեւ ապրելու կամ մեռնելու ճակատադէրը ի վերջոյ կապուած է անսեսական-դործնական կարելիութեանց:

(«Հայրենիք», 11 Նոյեմբեր 1973)

ՄԵԾ ԹԵՐԹԻ ՄԸ ՄԱՆԸ

«ԼԱ ՐԸՎԻԻ ՏԸ ՓԱՐԻ»

«Լա Րըվիւ տը Փարի»ի Սպրիլի թիւը, որ այս շաբաթ լոյս պիտի տեսնէ, պիտի ըլլայ նաեւ վերջինը: Ինչո՞ւ: Անա այս հարցումն է, որ ուղղեցինք Սոլանժ տը Լա Պօմի, որ Պէտթրիք Պէքի հետ սնուցանեց մեր դրոյկանութեան ամէնէն հիներէն մէկը համարուող այս հանդէսը: Վերջին շամաշ-խարհային պատերազմէն ետք անհետացան «Լա Փարիզիէն», «Լը Միքսիւր տը Ֆրանս», «Լա Թապլը Բոնտ», «Լը Փայիէ տը Սիւտ» անուն հանդէսները: Այսօր, կարգը «Լա Րըվիւ տը Փարի»ին է:

Ընդհանրապէս կր խորհինք, թէ դադարու՞մք արդիւնք է լրողական եւ տեսողական քաղաքակրթութեան զարդացումին, ե թէ՛ այլեւս դրական հանդէսները ընթերցող չունին:

Եւ սակայն...

Ներկայիս գոյութիւն ունին տասնհինգ կամ քսան հանդէսներ, որոնք միայն բանաստեղծութիւն կը տպեն:

Գոյութիւն ունին նաեւ պատկանելի թիւով ամսաթերթեր կամ եռամսեայ հանդէսներ, նուիրուած միայն մէկ հեղինակի, յաճախ երկար ատենէ ի վեր մեռած եւ յաճախ մեծ հանրութեան ջիշ ծանօթ:

Ինչպէ՞ս կը պատահի այն ատեն, որ թերթ մը, որուն հետաքրքրութիւնները անսահմանօրէն բնագարձակ են, չի յաջողիր շարունակել իր գոյութիւնը:

Անհեղք, օրինակ, «Լա Րըվիւ տը Փարի»ն: Անոր իւրաքանչիւր թիւը կը բովանդակէր բազմաթիւ յօդուածներ, մէկ կամ երկու նորաձեւեր, գրական քննադատութիւն, քաղաքական յօդուած մը, պատմական ուսումնասիրութիւն մը, դիտական, փիլիսոփայական, ընկերաբանական կամ տնտեսական յօդուած մը, ճամբորդութեան մը տեղեկագրութիւնը: Այս բոլորէն դուրս, ջրոնիկներ՝ ցուցահանդէսներու, թատրոնի, շարժանկարի, պատկերասփիւռի, երաժշտութեան եւ փարիզեան զանազան անցուղարձներու ներբուած:

Շատ կարեւորութիւն կ'ընծայէինք դրեւածուին: Մեր յօդուածները պէտք է բաւական յստակ ըլլային, հասկցուելու համար մշակուած բայց ոչ մասնագիտացած ընթերցողներու կողմէ:

Բայց քննհանուր ծախսերը անպարկէտ կ'աւելնային ու նիւթական կացութիւնը հետզհետէ կը դժուարանար: Ասկէ զատ, ինչպէս իրաւացիօրէն դրած է ժան Միլլէր, կ'ապրէինք քաղաքակրթութեան տաղնապ մը:

Թերեւս յաջորդ սերունդը, նուազ սիրահար Քեմըլաձմիի, աւելի պիտի հետաքրքրուի գրական հանդէսներով եւ պիտի տեսնենք ինք ծաղկում մը: Այս մաղթանքն է, զոր կ'ուզեմ ընել:

ՍՈՒԱՆԺ ՏԸ ԼԱ ՊՕՄ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՀԱՆԴԵՊ

Յրանհական մամուլին տաղնապը վրդովեցուցիչ է ամէն տեսակէտով, ո՛չ միայն իբր մշակութային ահազանգ, այլև իբրև լրագրական նահանջ մը՝ նութական բիրտ իրականութեանց առջև:

Վերջին անգամ «Փարի ժողով» թերթն այլ փակուեցաւ, եւ այս պարագան քննութեան կարօտ է զանազան տեսակէտներով: Այդ թերթին փակումը իր ամբողջ մերկութեամբ երևան կը բերէ տնտեսական ա՛յն անձկութիւնը, որուն ժառանգած է ներկայիս Փրանսական մամուլը: Երեւան կը բերէ նոյնպէս նոր օրերու պայմաններուն պատշաճելու տաժանքը:

Գառորդ դարու մը ընթացքին, փարիզեան բողոքաբեր թերթեր սնանկացան եւ մէկը միւսին ետեւէն անհետացան հրատարակէն:

Յիշե՛ք անոնցմէ մէկ քանին.— «Լիպիտաիոն», «Միսսու Փիրէօր», «Էլը Սուար», «Լիփուէ», «Լ'Օպ», «Փարի Փրէս» եւ «Էլը Փոփիլիէր», որոնց կայտալի վախճանին մէջ պատասխանատուութեան իր բաժինը ունի նաեւ կառավարութիւնը:

Պէտք է խորհիլ, թէ Յրանսայի թերթերը կը վաճառուին այսօր իրենց վրայ ապրանք եղած գիներէն աւելի վար փոխարժէքով մը:

Տարբեր վտանգներ եւ մրցակիցներ այլ զգուած են մամուլին առջև եւ կառավարութիւնը նկատի չ'առնելը զանոնք: Յիշե՛նք մասնաւորաբար հրատարակչական այն միջոցները, որոնք սնունդ կը հայթայթեն ժողովուրդին ականջին ու տեսողութեան եւ այլապէս կը շահագրգռեն ու կը գոհացնեն զայն: Այս մարդին մէջ պատկերասփիւռը կու գայ առաջին գծի վրայ: Ծըրանացիք ներկայիս զայն կը նկատեն հանրային սպասարկութեան միջոց մը, որ դերադաս կը համարուի մամուլին:

Մրցակից պատկերասփիւռին զուգահեռ՝ պէտք է յիշել նաեւ հոգեբանական ժխտական ազդակ մը՝ նոյնինքն ընթերցասիրութեան պակասը: Ժողովուրդը կ'աճի, փոխարէնը սակայն կը նուազի ընթերցասիրութիւնը: Երէկուան ընթերցողը անհետացած է, իսկ նորերը հետբաւորութիւն չունին հարկ եղածին պէս փոխարինելու հիմները:

Կը նշանակէ, թէ մամուլը պէտք է ձեռնարկէ հոգեբանական հակազդեցութեան մը, պատշաճելու համար նոր ստեղծուած պահանջներուն եւ պայմաններուն: Լսողա-տեսողական հրատարակչական միջոցները՝ տատկերասփիւռ, ձայնասփիւռ, շարժանկար, եւ այլն, արագօրէն կը զարգանան եւ աւելի ծանր կը կշռեն, քան զիբքը կամ թերթը: Մամուլը պարտաւոր է նկատի ունենալ այս մրցակցութեան անդրազարձները հրատարակութեան մտքին ու հոգիին վրայ, որոնք աւելի շատ կ'ախորժին անոնցմէ, եւ աւելի դիւրաւ կը թափանցեն մշակույթի զաղտնիքներուն:

«Նիկարո»

... Ե Թ Է Թ Ո Յ Լ Տ Ա Յ



Նախորդ էրեք էջերուն ընթերցումէն ետք անխուսափելիօրէն պիտի դրուի այն հարցումը, թէ մեր թերթե՞րն ալ տրուօք ենթակայ են հոն ժառանգուած ժխտական երևույթներուն:

Ինթակայ են, ի հարկէ: Բայց ոչ բոլորին: Առաջին պատճառը, շոգա-տեսողական միջոցներու առատութիւնը անուշ վտանգ մըն է մեզի համար: Սրբնակ, Ֆրանսական ձայնասփիւռը, Ֆրանսական պատկերասփիւռը եւ Ֆրանսական շարժապատկերը կրնան բացասական անդրադարձներ ունենալ Ֆրանսական մամուլին վրայ, բայց մենք մեր օրը լեցնող եւ թերթը մոռցնել տուող նման մնայուն ներկայութիւններ չունինք Սփիւռքի մէջ, մեր պորապայտն ամէ՛ն ինչ է օրաթերթը, ամէ՛ն ինչ է շաբաթաթերթը, ամսաթերթը, թե՛րթը: Անոնք միատամանակ մեր ձայնասփիւռն են, պատկերասփիւռը, շարժանկարը: Ֆրանսացին կրնայ իր լեզուն լսել ձայնասփիւռէն, պատմութիւնը շօշափել փոքր Էքրանին, արուեստն ու արուեստագէտը դիտել մեծ պատասաններուն վրայ: Ո՛չ, թերթերու բացը չի ցնցեր Ֆրանսացին, խորտակիչ է սակայն մեր պարտապայտն, մենք մեզ տեսնելու, ճանչնալու, զգալու մէկ գերադասն միջոց ունինք միայն, մեարդեան արքայատուր:

Պատճառներէն միւս երկուքը, սակայն, սղութիւնն ու ընթերցողներուն նուազումը որոշիչ դեր ունին մեր մամուլին անշքացման եւ շքացման մէջ:

«Պէտք է գիտնալ, — կ'ըսէ «Տիկարօ», — քէ Ֆրանսայի քերթերը կը վաճառուին այսօր իրենց վրայ ապրանք եղած գիներէն աւելի վար փոխարժէքով մը»:

«Ժողովուրդը կ'ամի, — կը շարունակէ քիչ մը վարը, — փոխարէնը սակայն կը նուազի ընթերցասիրութիւնը»:

Ի՛սկ եւ իսկ մեր իրականութիւնը: Դժոգակ այս կայսրութեան չկրցան տոկայ մեր թերթերէն ոմանք, միւսներէն քի՛նրը ինքնաբաւ են եւ շատերը իրենց դոյնութիւնը կը շարունակեն կողմնակի միջոցներով, կուսակցական, հայրենասիրական կամ յաջողած անհատներու հովանաւորութեամբ:

Դպրոց, եկեղեցի, ակումբ պահող հայ մարդը պէտք է անդրադարձումի պցտիկ պահ մը ազրի ինքնուրոյն իր գոյութիւնը ապահովող արեւնատար այդ երակներէն այս ամէնէ՛ն կենսայորդ, հեռադնոց, ամենահաս ուժին, ուժերուն, օրաթերթերուն, շաբաթաթերթերուն, ամսագրերուն առջեւ, քերէ իր մասնակցութիւնը՝ ա՛յն համոզմամբ, թէ ճանոցն ֆուրով կ'երկարի մեր կեանքը, անոնց յեզուով ու շփով կը տեսէ ազգը, անոնց խօսքով եւ առաջնորդութեամբ կը ստեղծուի հաւաքական ուժն ու կամքը»:

Աշխարհի միւս բարիքներէն կուշտ ենք մենք, «աշխարհը աշխարհով» կը կշտացնէ մեզ բոլոր երկինքներուն տակ՝ բազմաշեղուեան, բազմազունեան միջոցներով: Մէկ բան միայն առատօրէն չի տար մեզի աշխարհը, մէկ բան միայն դատնօրէն կը դրանայ մեզի, ամէնէ՛ն կենսականը, ազգային մեր անհատականութեան կեցուցիչ շաղախը, — հայութիւնը, որուն յառուժքը տարածելու եւ փոխանցելու պարտականութիւնը առուելադոյն չափով մը մասնահատած է հայոց լեզուով կատարուող ձեռնարկներուն, ու ամէնէն առաջ՝ մամուլին:

Դարերու խաւարը իր գգիւր սիրող, դուրմ սիրող, տալիք սիրող հիւնուոյի ընդունակութեամբ պատուած մեր ժողովուրդը չի կրնար իր խղճին ու պատմութեան առջեւ անպարտ մնալ, կթէ թօյլ տայ, որ իր գիրը փոշեթաթտի մնայ, գրողները կտարեն իրենց զալամները եւ տալիքները լքեալ դոյքի վերածուին:



4 0 2

Տաղանդաւոր գրողէս, քանաստեղծ եւ վաստակաւոր կրթական ճշակ սրբացեալ Նորուարդ Պոյաճեանի յիշատակը յաւերժացնելու համար, «ՄՈՒՍԱԿ-ԼԵՆԻ» գրական խմբակի նախաձեռնութեամբ կազմուած յանձնախումբը, յետ լայն խորհրդակցութեանց, որոշեց դամբարան - յուշարձան ճշ կառուցել անոր հազակոյսին վրայ:

Ան այդ, կոչ կ'ընենք Նորուարդ Պոյաճեանի բոլոր աշակերտներուն, բարեկամներուն, գրականութիւնը սիրող եւ գնահատող հասարակութեան, որ իրենց արտաբերի մասնակցութիւնը բերեն այս նախնական գործին իրագործման:

ԳՈՐԾԱԴՐ ԵՆԵՆԱԾՈՒՄԲ

Առաջումներու եւ Թղթակցութեանց համար դիմել հետեւեալ հասցէին.

Mr. Antranik Ourfalian — Librairie Ourfalian
Nor Marach, Bourdj Hammoud — Liban
Հեռաձայն՝ 2 6 8 7 7 1

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

«ՃԳՆՈՒԹԻՒՆ, ԱՍՏՈՒԾՈՅ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԸ» (խտեիք), Նիգոս Գա-
զանծագիս, քարգմ. Մարգար Շարապիսանեան, Թորոնթօ, 1973

«ԾՈՎ ԵՒ ԿՂՋԻ» (բանաստեղծութիւններ), Գեորգ Թեմիզեան, Պէյ-
րուք, 1973



ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՔԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2.50 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՍՍԱԳԻՐ
ՊՐԻՆՏԵՐՆԻՔԻՆ
ԵՒ ԱՐԹԻՍՏԻԿԻ

•

ՎԱՐՔԻ ՆԱԲԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
ՆԱԲԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունը հասցե

G. SASSOUNI
Rue Sélim Boustani
Beyrouth - Liban